

Պայմանագրի համարը (FI թիվ) 94488

Գործողության համարը (Serapis թիվ) 2022-0193

«ՀԱՅԱՍՏԱՆ - ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔ» ԾՐԱԳԻՐ

ԿԶԵՀ+Հատուկ ներդրումային պատուհան 1

Ֆինանսավորման պայմանագիր

Հայաստանի Հանրապետության

Եւ Եվրոպական ներդրումային բանկի

միջեւ

Լյուքսեմբուրգ, 2025 թվականի հուլիսի 16

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ՝	7
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ	11
ՀՈԴՎԱԾ 1	37
1.1. ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ.....	37
1.2. ՀԱՏԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	37
1.2.Ա. ՏՐԱՆՇՆԵՐԸ.....	37
1.2.Բ. ՀԱՏԿԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ.....	37
1.2.Գ. ՀԱՏԿԱՑՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ.....	38
1.2.Դ. ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԱՇԻՎԸ	39
1.3. ՀԱՏԿԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ	40
1.4. ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	40
1.4.Ա. ՀԱՏԿԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՀԱՆՋԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ՊԱՅՄԱՆԸ	40
1.4.Բ. ԱՌԱՋԻՆ ՏՐԱՆՇԸ	41
1.4.Գ. ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ՀԱՋՈՐԴՈՂ ՏՐԱՆՇՆԵՐԸ.....	42
1.4.Դ. ԲՈԼՈՐ ՏՐԱՆՇՆԵՐԸ.....	44
1.5. ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԵՏԱՋԳՈՒՄԸ	45
1.5.Ա. ՀԵՏԱՋԳՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	46
1.5.Բ. 6 (ՎԵՑ) ԱՄՍՈՎ ՀԵՏԱՋԳՎԱԾ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՉԵՂԱՐԿՈՒՄԸ	47
1.6. ՉԵՂԱՐԿՈՒՄԸ ԵՒ ԿԱՍԵՑՈՒՄԸ	47
1.6.Ա. ՎԱՐԿԱՌՈՒԻ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ	47
1.6.Բ. ԲԱՆԿԻ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՒ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ.....	48
1.6.Գ. ՏՐԱՆՇԻ ԿԱՍԵՑՄԱՆ ԵՒ ՉԵՂԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ.....	49
1.7. ՎԱՐԿԻ ԺԱՄԿԵՏԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՉԵՂԱՐԿՈՒՄԸ	50
1.8. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎՃԱՐԸ.....	51
1.9. ՉՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ.....	51
1.10. 1.5 ԵՒ 1.6 ՀՈԴՎԱԾՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ	52
1.11. ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ.....	52
1.11.Ա. ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԸ.....	52

1.11.Բ.	ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	54
1.12.	ՎԵՐԱՀԱՏԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ.....	55
	ՀՈԴՎԱԾ 2.....	56
2.1.	ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ	56
2.2.	ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ	56
2.3.	ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ	56
	ՀՈԴՎԱԾ 3.....	57
3.1.	ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ.....	57
3.1.Ա.	ՖԻՔՍՎԱԾ ԴՐՈՒՅՔԱԶԱՓՈՎ ՏՐԱՆՇՆԵՐԸ.....	57
3.1.Բ.	ԼՈՂԱՑՈՂ ԴՐՈՒՅՔԱԶԱՓՈՎ ՏՐԱՆՇՆԵՐԸ.....	57
3.1.Գ.	ՏՐԱՆՇՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ԿԱՄ ՓՈԽԱՐԿՈՒՄԸ	58
3.2.	ԺԱՄԿԵՏԱՆՑ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԸ	58
3.3.	ՇՈՒԿԱՅԻ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԴԵՊՔԸ	60
	ՀՈԴՎԱԾ 4	61
4.1.	ԲՆԱԿԱՆՈՆ ՀԵՏՎՃԱՐՈՒՄԸ	61
4.1.Ա.	ՄԱՍ-ՄԱՍ ՄԱՐՈՒՄՆԵՐՈՎ ՀԵՏՎՃԱՐՈՒՄԸ	61
4.2.	ԿԱՄՎՈՐ ԿԱՆԽԱՎՃԱՐԸ.....	62
4.2.Ա.	ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ.....	62
4.2.Բ.	ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ.....	62
4.2.Գ.	ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ	63
4.2.Դ.	ՎԱՐՉԱԿԱՆ ՎՃԱՐԸ	64
4.3.	ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՆԽԱՎՃԱՐԸ ԵՒ ՉԵՂԱՐԿՈՒՄԸ	64
4.3.Ա.	ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԴԵՊՔԵՐԸ.....	64
4.3.Բ.	ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ	70
4.3.Գ.	ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ.....	70
4.4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	70
4.4.Ա.	10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ ՀԱԿԱՍԵԼՈՒ ԲԱՑԱՌՈՒՄԸ	70
4.4.Բ.	ՎԵՐԱՓՈԽԱՌՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ.....	70

ՀՈԴՎԱԾ 5.....	71
5.1. ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ.....	71
5.2. ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ՎԱՅՐԸ.....	71
5.3. ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ	72
5.4. ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԽԱՓԱՆՈՒՄԸ	72
5.5. ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ	73
5.5.Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	73
5.5.Բ. ՄԱՍՆԱԿԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ	73
5.5.Գ. ՏՐԱՆՇՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ	73
ՀՈԴՎԱԾ 6	74
Ա. ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	74
6.1. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՒ ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ	74
6.2. ՆԱԽԱԳԾԻ ԱՎԱՐՏԸ.....	75
6.3. ՆԱԽԱԳԾԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐԸ.....	75
6.4. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	75
6.5. ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍՈՎ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	76
6.6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	80
Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	85
6.7. ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	85
6.8. ՄԱՏՅԱՆՆԵՐԸ ԵՒ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ	85
6.9. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ.....	86
6.10. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	87
6.11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ	88
6.12. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ	91
ՀՈԴՎԱԾ 7.....	93
7.1. <i>PARI PASSU</i> ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	93
7.2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ.....	93

7.3.	ՆԵՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԵՏ	94
ՀՈԴՎԱԾ 8		94
8.1.	ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	94
8.2.	ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
8.3.	ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՒ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ..	98
8.4.	ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ	99
ՀՈԴՎԱԾ 9		101
9.1.	ՀԱՐԿԵՐ, ՏՈՒՐՔԵՐ ԵՒ ՎՃԱՐՆԵՐ.....	101
9.2.	ԱՅԼ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ	101
9.3.	ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐԸ, ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԱՆՑՈՒՄԸ.....	102
ՀՈԴՎԱԾ 10.....		103
10.1.	ՀԵՏՎՃԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ	103
10.1.Ա.	ԱՆՀԱՊԱՂ ՊԱՀԱՆՋԸ.....	103
10.1.Բ.	ՇՏԿՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋԸ.....	105
10.2.	ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	106
10.3.	ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ	106
10.3.Ա.	ՖԻՔՍՎԱԾ ԴՐՈՒՅՔԱԶԱՓՈՎ ՏՐԱՆՇՆԵՐԸ.....	106
10.3.Բ.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	107
10.4.	ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՉՀՐԱԺԱՐՎԵԼԸ	107
ՀՈԴՎԱԾ 11.....		108
11.1.	ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔԸ.....	108
11.2.	ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ	108
11.3.	ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ.....	108
11.4.	ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ	109
11.5.	ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ	109
11.6.	ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ	109
11.7.	ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ	109

11.8.	Փոփոխութիւններ կատարելը.....	110
11.9.	Օրինակները.....	110
Հոդված 12		110
12.1.	Ծանոթութիւններ կատարելը.....	110
12.1.Ա.	Ծանոթման ձեւը.....	110
12.1.Բ.	Հասցեները.....	112
12.1.Գ.	Կոնսակսմէն ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈԹՈՒՄԸ	113
12.2.	Անգլերենը.....	113
12.3.	Սո՛ւն ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ.....	113
12.4.	ՆԱԽԱԲԱՆՆԵՐԸ, ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ ԵՒ ԱՌԴԻՐՆԵՐԸ	113
ՀԱՎԵԼՎԱԾ Ա		115
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ		115
ՀԱՎԵԼՎԱԾ Բ		155
ԵՎՐԻԲՈՐ		156
ՀԱՎԵԼՎԱԾ Գ		160
ՀԱՏԿԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ/ԸՆԴՈՒՆՄԱՆ ՁԵՒԱՆՄՈՒՇԸ (ՀՈԴՎԱԾՆԵՐ 1.2.Բ ԵՒ 1.2.Գ) ..		160
ՀԱՎԵԼՎԱԾ Դ.....		164
ՏՈԿՈՍԻ ԴՐՈՅՔԱԶԱՓԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ԵՒ ՓՈԽԱՐԿՈՒՄԸ.....		164
ՀԱՎԵԼՎԱԾ Ե		167
ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ		167

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔՎՈՒՄ Է՝

Մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության

(Վարկառու)

եւ

մյուս կողմից՝ Եվրոպական ներդրումային

(Բանկ)

բանկի միջեւ, որի գլխամասը գտնվում է

Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն,

Լյուքսեմբուրգ L-2950, Կոնրադ Ադենաուեր

զբոսուղի 100 հասցեում,

Բանկը եւ Վարկառուն յուրաքանչյուրն առանձին՝ **Կողմ**, իսկ միասին՝
Կողմեր:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ՝

ա) Վարկառուն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (ՖՆ), նշել է, որ այն, հանդես գալով մասնավորապես Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության միջոցով (ՏԿԵՆ) (**Իրականացնող մարմին**՝ ստորեւ սահմանված կարգով), իրականացնում է կարելուր պետական ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու միջոցով վերականգման համար խիստ անհրաժեշտ աջակցության տրամադրման նախագիծ՝ դրանում ներառելով տեղահանված բնակչության հիմնական ենթակառուցվածքային կարիքները, Հայաստանի հարավային մարզում, որը զգալի տուժել է Լեռնային

Ղարաբաղի ճգնաժամի հետեւանքով (յուրաքանչյուր գործողություն՝ **Նախաձեռնություն** կամ **Ենթանախագիծ**, եւ միասին՝ **Նախագիծ**), ինչը առավել մանրամասն ներկայացված է սույն Պայմանագրի Ա հավելվածում սահմանված տեխնիկական նկարագրության մեջ (**Տեխնիկական նկարագրություն**): Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏՀՀ) հանդես է գալիս որպես ծրագրերի իրականացման գրասենյակ (ԾԻԳ)՝ Իրականացնող մարմնի կարգավիճակով՝ Նախագծի իրականացմանը եւ կառավարմանը աջակցելու համար:

բ) Նախագծի ընդհանուր արժեքը, ինչպես գնահատվել է Բանկի կողմից, կազմում է 50,000,000.00 եվրո (հիսուն միլիոն եվրո), եւ Վարկառուն հայտարարել է, որ մտադիր է ֆինանսավորել Նախագիծը հետեւյալ կերպ.

Աղբյուրը	Գումարը (եվրո մլն)
Բանկի կողմից վարկը	50.00
ԸՆԴԱՄԵՆԸ	50.00

գ) Սույն պայմանագրով ֆինանսավորումը տրամադրվում է Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամին (**ԿԶԵՀ+**) համապատասխան, որն ինտեգրված ֆինանսական փաթեթ է, որն ապահովում է ֆինանսավորման ներուժ՝ դրամաշնորհների, բյուջետային երաշխիքների եւ ֆինանսական գործիքների տեսքով՝ ամբողջ աշխարհում, եւ մասնավորապես՝ սուվերեն գործընկերների եւ ոչ առեւտրային ենթասուվերեն գործընկերների հետ գործառնությունների բացառիկ ներդրումային պատուհանի շրջանակներում՝ համաձայն ՀՂՄՀԳ-ԳԵ կանոնակարգի 36.1 հոդվածի (**ԿԶԵՀ+ՀՆՊ**): ՀՂՄՀԳ-ԳԵ կանոնակարգի 36.8 հոդվածի համաձայն՝ 2022 թվականի ապրիլի 22-ին Բանկը

եւ Եվրոպական միությունը՝ ի դեմս Եվրոպական հանձնաժողովի, կնքել են ԿԶԵՀ+ երաշխիքային համաձայնագիրը (**ԿԶԵՀ+ՀՆՊ1 երաշխիքային համաձայնագիր**), որով Եվրոպական միությունը Բանկին տրամադրել է համապարփակ երաշխիք՝ Բանկի ֆինանսավորման թույլատրելի գործառնությունների համար՝ ՀԶՄՀԳ-ԳԵ կանոնակարգի (**ԿԶԵՀ+ՀՆՊ1 երաշխիք**) 4-րդ հոդվածի 2-րդ կետում նշված աշխարհագրական տարածքներում գտնվող երկրներում իրականացվող նախագծերի առնչությամբ: Հայաստանի Հանրապետությունն իրավասու երկիր է՝ համաձայն ՀԶՄՀԳ-ԳԵ կանոնակարգի:

դ) 2008 թվականի փետրվարի 29-ին Հայաստանի Հանրապետությունը եւ Բանկը կնքել են Հայաստանի Հանրապետության տարածքում Բանկի գործունեությունը կարգավորող շրջանակային համաձայնագիր (**Շրջանակային համաձայնագիր**): Ստորագրելով սույն Պայմանագիրը՝ Վարկառուն տալիս է իր պաշտոնական համաձայնությունը Շրջանակային համաձայնագրի գործողության շրջանակներում սույն Պայմանագրով տրամադրման ենթակա փոխառության ֆինանսավորմանը:

ե) Նախաբանի «բ» կետում նշված ֆինանսավորման պլանի իրագործման նպատակով Վարկառուն Բանկից պահանջել է 50,000,000.00 եվրո (հիսուն միլիոն եվրո) ընդհանուր գումարի չափով վարկ:

զ) Բանկը, հաշվի առնելով այն, որ Նախագծի ֆինանսավորումն իր գործառույթների շրջանակներում է, եւ հաշվի առնելով սույն Նախաբաններում մեջբերված հայտարարություններն ու փաստերը, որոշել է կատարել Վարկառուի պահանջը՝ նրան տրամադրելով 50,000,000.00 եվրո (հիսուն միլիոն եվրո) գումարի չափով վարկի առաջին մասը սույն ֆինանսական պայմանագրով (**Պայմանագիր**)՝ պայմանով, որ Բանկի փոխառության գումարը Ծրագրի նպատակներով Բանկի կողմից տրամադրվող որեւէ այլ փոխառության գումարին գումարվելու դեպքում ոչ մի դեպքում չպետք է գերազանցի Նախաբանի «բ» կետում նշված՝ Նախագծի ընդհանուր արժեքի 100%-ը (հարյուր տոկոսը):

է) Վարկառուն թույլատրել է սույն վարկով ներկայացված 50,000,000.00 եվրո (հիսուն միլիոն եվրո) գումարի փոխառությունը՝ սույն Պայմանագրով սահմանված ժամկետների եւ պայմանների համաձայն:

ը) Բանկի կանոնադրությամբ նախատեսվում է, որ Բանկն ապահովում է, որ իր ֆինանսական միջոցները հնարավորինս ռացիոնալ օգտագործվեն՝ ելնելով Եվրոպական միության շահերից, եւ համապատասխանաբար Բանկի վարկային գործառնությունների ժամկետներն ու պայմանները պետք է համապատասխանեն Եվրոպական միության վերաբերելի քաղաքականություններին:

թ) Բանկը գտնում է, որ տեղեկությունների մատչելիությունն էական դեր է խաղում բնապահպանական եւ սոցիալական ռիսկերի նվազեցման գործում, ներառյալ՝ մարդու իրավունքների խախտումները, որոնք կապված են իր կողմից ֆինանսավորվող նախագծերի հետ, եւ հետեւաբար սահմանել է իր թափանցիկության քաղաքականությունը, որի նպատակն է բարձրացնել Բանկի խմբի հաշվետվողականությունն իր շահագրգիռ կողմերի նկատմամբ:

ժ) Բանկն աջակցում է փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում միջազգային եւ ԵՄ չափանիշների կիրառմանը եւ խթանում է հարկային արդյունավետ կառավարման չափանիշները: Այն սահմանել է քաղաքականություններ եւ ընթացակարգեր՝ խուսափելու համար կիրառելի օրենքների մասով անօրինական կամ չարաշահող բնույթի նպատակներով իր ֆինանսական միջոցները ոչ նպատակային օգտագործելու վտանգից: Հարկային խարդախության, հարկերը չվճարելու, հարկերից խուսափելու, հարկային ագրեսիվ պլանավորման, փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ Բանկի խմբի հայտարարությունը հասանելի է Բանկի կայքում եւ լրացուցիչ ուղեցույց է առաջարկում Բանկի պայմանագրային գործընկերներին¹:

¹ <http://www.eib.org/about/compliance/tax-good-governance/index.htm?f=search&media=search>

Ժա) Բանկը ստեղծել է համընդհանուր քաղաքականության շրջանակ, որը թույլ է տալիս Բանկի խմբին կենտրոնանալ կայուն եւ ներառական զարգացման վրա՝ հավատարիմ մնալով արդար եւ անաչառ անցմանը եւ աջակցելով անցմանը դեպի տնտեսություններ եւ համայնքներ, որոնք կլիմայի եւ աղետների նկատմամբ դիմակայուն են, ունեն անխառնի ցածր մակարդակ, էկոլոգիապես մաքուր են եւ ռեսուրսների առումով արդյունավետ: Քաղաքականության շրջանակը ներառում է ԵՆԲ խմբի բնապահպանական եւ սոցիալական քաղաքականությունը եւ ԵՆԲ-ի բնապահպանական եւ սոցիալական չափանիշները: ԵՆԲ խմբի բնապահպանական եւ սոցիալական քաղաքականությունը եւ ԵՆԲ-ի բնապահպանական եւ սոցիալական չափանիշները հասանելի են Բանկի կայքում եւ լրացուցիչ ուղեցույց են առաջարկում Բանկի պայմանագրային գործընկերներին:

ՀԵՏԵՎԱԲԱՐ սույնով համաձայնություն է ձեռք բերվել հետեւյալի վերաբերյալ.

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Մեկնաբանությունը

Սույն Պայմանագրում՝

ա) «Հոդվածներին», «Նախաբաններին», «Հավելվածներին» եւ «Առդիրներին» արված հղումները՝ բացառությամբ, եթե ակնհայտորեն այլ բան է նախատեսված, համապատասխանաբար սույն Պայմանագրի հոդվածներին եւ նախաբաններին, հավելվածներին ու առդիրներին արված հղումներ են.

բ) «օրենքին» կամ «օրենքներին» արված հղումները նշանակում են՝

i) ցանկացած կիրառելի օրենք եւ ցանկացած կիրառելի միջազգային պայմանագիր, սահմանադրություն, կանոնադրություն, օրենսդրություն, որոշում,

նորմատիվ ակտ, կանոն, կանոնակարգ, դատավճիռ, որոշում, դատական գրություն, դատական կարգադրություն, դատական որոշում, վճիռ կամ այլ օրենսդրական կամ վարչական միջոց կամ դատական կամ արբիտրաժային որոշում ցանկացած իրավազորությունում, որն ունի պարտադիր ուժ կամ կիրառելի նախադեպային իրավունք է, եւ

ii) ԵՄ իրավունք.

գ) «կիրառելի օրենքին», «կիրառելի օրենքներին» կամ «կիրառելի իրավասությանն» արված հղումները նշանակում են՝

i) օրենք կամ իրավազորություն, որը կիրառելի է Վարկառուի, նրա իրավունքների եւ (կամ) պարտականությունների (յուրաքանչյուր դեպքում՝ սույն Պայմանագրից բխող կամ դրա առնչությամբ), նրա կարողությունների եւ (կամ) ակտիվների եւ (կամ) Նախագծի նկատմամբ, եւ (կամ) համապատասխան դեպքերում.

ii) օրենք կամ իրավազորություն (ներառյալ՝ յուրաքանչյուր դեպքում Բանկի կանոնադրությունը), որը կիրառելի է Բանկի, նրա իրավունքների, պարտականությունների, կարողությունների եւ (կամ) ակտիվների նկատմամբ.

դ) օրենքի կամ միջազգային պայմանագրի դրույթին հղումները փոփոխված կամ վերաընդունված դրույթին արված հղումներն են.

ե) ցանկացած այլ համաձայնագրի կամ փաստաթղթի հղում փոփոխված, նորացված, լրացված, ընդլայնված կամ վերաշարադրված համաձայնագրին կամ փաստաթղթին արված հղում է.

զ) հոգնակի թվով բառերն ու արտահայտությունները ներառում են եզակի տարբերակները եւ հակառակը, եւ

է) «ամիս» բառին արված հղումները նշանակում են ժամանակահատված, որն սկսվում է օրացուցային ամսվա մեկ օրից եւ ավարտվում հաջորդ օրացուցային ամսվա թվային առումով համապատասխան օրը՝ բացառությամբ

Վճարման ամսաթվով, 5.1 հոդվածով եւ Բ հավելվածով եւ դրանց համաձայն նախատեսվածների, եւ եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով.

i) եթե թվային առումով համապատասխան օրն Աշխատանքային օր չէ, ապա այդ ժամանակահատվածն ավարտվում է այդ օրացուցային ամսվա հաջորդ Աշխատանքային օրը, երբ այդ ժամանակահատվածը պետք է ավարտվի, եթե այդպիսիք կան, կամ եթե չկան, ապա անմիջապես նախորդող Աշխատանքային օրը, եւ

ii) եթե այն օրացուցային ամսում, որում պետք է ավարտվի այդ ժամկետը, չկա թվային առումով համապատասխան օր, ապա այդ ժամկետն ավարտվում է այդ օրացուցային ամսվա վերջին Աշխատանքային օրը. եւ

ը) սույն Պայմանագրով տեղեկատվական ծառայության էջին կամ էկրանին արված հղումը, որը ցույց է տալիս դրույքաչափը, ներառում է՝

i) այդ տեղեկատվական ծառայության ցանկացած փոխարինող էջ, որը ցուցադրում է այդ դրույքաչափը, եւ

ii) այդպիսի այլ տեղեկատվական ծառայության համապատասխան էջ, որը ժամանակ առ ժամանակ ցույց է տալիս այդ դրույքաչափն այդ տեղեկատվական ծառայության փոխարեն,

եւ եթե այդ էջը կամ ծառայությունը դադարում է հասանելի լինել, ապա այն ներառում է ցանկացած այլ էջ կամ ծառայություն, որը ցույց է տալիս Բանկի կողմից սահմանված այդ դրույքաչափը:

Սահմանումները

Սույն Պայմանագրում՝

«**Ընդունված տրանշ**» նշանակում է Տրանշ, որի առնչությամբ Հատկացման առաջարկը Վարկառուի կողմից պատշաճ կերպով ընդունվել է դրա պայմաններին համապատասխան՝ Հատկացման ընդունման վերջնաժամկետի օրը կամ դրանից առաջ:

«Հատկացման համաձայնեցված հետաձգված ամսաթիվ» եզրույթն ունի 1.5.Ա(2)(բ) հոդվածում դրան տրված իմաստը:

«Տրամադրման ընթացակարգ» եզրույթն ունի 1.11.Ա հոդվածում դրան տրված իմաստը:

«Տրամադրման մասին գրություն» եզրույթն ունի 1.11.Բ հոդվածում դրան տրված իմաստը:

«Տրամադրման հայտ» եզրույթն ունի 1.11.Ա հոդվածում դրան տրված իմաստը:

«Փողերի լվացման դեմ պայքարի մասին հրահանգներ» նշանակում է՝ i) «Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 648/2012 կանոնակարգը (ԵՄ) փոփոխող եւ Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2005/60/ԵՀ հրահանգը եւ Հանձնաժողովի 2006/70/ԵՀ հրահանգը ուժը կորցրած ճանաչող՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով ֆինանսական համակարգի օգտագործումը կանխելու մասին» Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2015 թվականի մայիսի 20-ի 2015/849 (ԵՄ) հրահանգ՝ ժամանակ առ ժամանակ կատարված փոփոխություններով, լրացումներով եւ փոխարինմամբ, եւ ii) «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2018 թվականի հունիսի 19-ի 2018/843 հրահանգ՝ ժամանակ առ ժամանակ կատարված փոփոխություններով, լրացումներով կամ վերաձեւակերպումներով:

«Լիազորություն(ներ)» նշանակում է լիազորություն, թույլտվություն, համաձայնություն, հաստատում, որոշում, լիցենզիա, բացառում, ներկայացում, նոտարական վավերացում կամ գրանցում:

«Լիազորված ստորագրող անձ» նշանակում է անձ, որը լիազորված է Վարկառուի անունից անհատապես կամ համատեղ (ըստ անհրաժեշտության) ստորագրելու Հատկացումների ընդունումները եւ նշված է Լիազորված

ստորագրող անձանց եւ հաշիվների ամենավերջին ցանկում, որն ստացել է Բանկը՝ մինչեւ համապատասխան Հատկացումների ընդունումն ստանալը:

«Աշխատանքային օր» նշանակում է օր (բացի շաբաթ կամ կիրակի օրերից), երբ Բանկը եւ առեւտրային բանկերը բաց են Լյուքսեմբուրգում ընդհանուր գործունեություն իրականացնելու համար:

«Չեղարկված տրանշ» եզրույթն ունի 1.6.Գ(2) հոդվածում դրան տրված իմաստը:

«Իրական սեփականության կառուցվածքում փոփոխություն» նշանակում է սուբյեկտի ընդհանուր սեփականության կամ հսկողության կառուցվածքում փոփոխություն՝ «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման նպատակներով ֆինանսական համակարգի օգտագործումը կանխելու մասին» Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2015 թվականի մայիսի 20-ի 2015/849 հրահանգի 3(6) հոդվածով սահմանված «իրական սեփականատեր» սահմանման համաձայն՝ ժամանակ առ ժամանակ կատարված փոփոխություններով եւ (կամ) լրացումներով:

«Օրենքի փոփոխության դեպք» եզրույթն ունի 4.3.Ա(3) հոդվածում դրան տրված իմաստը:

«Սերտորեն փոխկապակցված անձ (անձինք)» նշանակում է «սերտորեն փոխկապակցված անձ ճանաչված անձինք», ինչպես սահմանված է Փողերի լվացման դեմ պայքարի մասին հրահանգներում:

«Առեւտրային շահագործման մեկնարկի օր» նշանակում է օր, երբ ամբողջ կայանքի համար հաջողությամբ անցկացվել են հանձնման-ընդունման փորձարկումներ, իսկ կայանքը ամբողջ հզորությամբ սկսում է էլեկտրաէներգիա արտադրել շահույթ ստանալու նպատակով:

«Պայմանագիր» եզրույթն ունի Նախաբանի «զ» կետում դրան տրված իմաստը:

«**Պայմանագրի համար**» նշանակում է Բանկի կողմից գեներացված համար, որը նույնականացնում է սույն Պայմանագիրը եւ նշված է սույն Պայմանագրի տիտղոսաթերթում «FI թիվ» տառերից հետո:

«**Վարկ**» եզրույթն ունի 1.1 հոդվածում դրան տրված իմաստը:

«**Ուժի մեջ մտնելու ամսաթիվ**» եզրույթն ունի 12.3 հոդվածում դրան տրված իմաստը:

«**Մրցութային չափանիշներին համապատասխանության մասին հայտարարություն**» նշանակում է Մրցութային չափանիշներին համապատասխանության մասին հայտարարություն, որը Վարկառուի կողմից ստորագրվել է ԿԶԵՀ+ շրջանակներում 2025 թվականի մայիսի 12-ին:

«**Հետաձգման վճար**» նշանակում է վճար, որը հաշվարկվում է Ընդունված տրանշի հետաձգված կամ կասեցված գումարի վրա՝

ա) տարեկան 0.125%-ից (12.5 բազիսային կետ) բարձր տոկոսադրույքով, եւ

բ) այն տոկոսադրույքից բարձր տոկոսադրույքով, որով՝

i) տոկոսադրույքը, որը կկիրառվեր այդպիսի Տրանշի նկատմամբ, եթե այն հատկացվեր Վարկառուին Հատկացման պլանավորված ամսաթվին, գերազանցում է

ii) ԵՎՐԻԲՈՐԸ (մեկ ամսվա դրույքաչափ)՝ հանած 0,125% (12,5 բազիսային կետ), եթե այդպիսի դրույքաչափը զրոյից քիչ չէ, որի դեպքում այն սահմանվում է զրոյական:

Այդպիսի վճարը հաշվեգրվում է Հատկացման պլանավորված ամսաթվից մինչեւ Հատկացման ամսաթիվը կամ ըստ անհրաժեշտության՝ մինչեւ Ընդունված տրանշի չեղարկման ամսաթիվը՝ սույն Պայմանագրին համապատասխան:

«**Հատկացման ընդունում**» նշանակում է Լիազորված ստորագրող անձանց եւ հաշիվների ցանկին համապատասխան նաեւ Վարկառուի կողմից պատշաճ կերպով ստորագրված Հատկացման առաջարկի պատճենը:

«**Հատկացման ընդունման վերջնաժամկետ**» նշանակում է Հատկացման առաջարկի ժամկետի ավարտի ամսաթիվը եւ ժամը, ինչպես նշված է դրանում:

«**Հատկացման հաշիվ**» նշանակում է յուրաքանչյուր Տրանշի մասով այն բանկային հաշիվը, որին կարող են կատարվել հատկացումներ սույն Պայմանագրի շրջանակներում, ինչպես նշված է Լիազորված ստորագրող անձանց եւ հաշիվների ամենավերջին ցանկում:

«**Հատկացման ամսաթիվ**» նշանակում է այն ամսաթիվը, երբ Բանկի կողմից կատարվում է Տրանշի հատկացումը:

«**Հատկացման առաջարկ**» նշանակում է ըստ էության Գ հավելվածում սահմանված ձեւով գրություն:

«**Վեճ**» եզրույթն ունի 11.2 հոդվածում դրան տրված իմաստը:

«**Խափանման դեպք**» նշանակում է ստորեւ նշվածներից որեւէ մեկը կամ երկուսն էլ.

ա) այն վճարային կամ հաղորդակցական համակարգերի կամ ֆինանսական շուկաների գործունեության էական խափանում, որոնցից յուրաքանչյուրը պետք է գործի սույն Պայմանագրի մասով վճարումները կատարելու համար, կամ

բ) որեւէ այլ դեպք պատահելը, որի հետեւանքով տեղի է ունենում Բանկի կամ Վարկառուի գանձապետական կամ վճարային գործառնությունների իրականացման խափանում (տեխնիկական կամ համակարգային բնույթի), ինչը թույլ չի տալիս, որ այդ Կողմը՝

i) կատարի սույն Պայմանագրով նախատեսված իր վճարման պարտավորությունները, կամ

ii) հաղորդակցվի մյուս Կողմի հետ,

Եւ այդ խափանումը (ինչպես այս կամ վերը նշված «ա» կամ «բ» դեպքերում) չի առաջացել այն Կողմի կողմից, որի գործունեությունը խաթարված է, եւ այդ Կողմի վերահսկողությունից դուրս է:

«ԿԶԵՀ+»-ն ունի Նախաբանի «գ» կետում դրան տրված իմաստը:

«ԿԶԵՀ+ՀՆՊ1»-ն ունի Նախաբանի «գ» կետում դրան տրված իմաստը:

«ԿԶԵՀ+ՀՆՊ1 երաշխիք»-ն ունի Նախաբանի «գ» կետում դրան տրված իմաստը:

«ԿԶԵՀ+ՀՆՊ1 երաշխիքային համաձայնագիր»-ն ունի Նախաբանի «գ» կետում դրան տրված իմաստը:

«Թույլատրելի ծախսեր» նշանակում է ծախսեր (ներառյալ՝ նախագծման եւ վերահսկողության ծախսերը, եթե կիրառելի են, եւ նվազեցնելով Վարկառուի կողմից վճարման ենթակա հարկերը եւ տուրքերը), որոնք կատարում է Վարկառուն Նախագծի հետ կապված՝ Տեխնիկական նկարագրության մեջ նշված՝ Վարկի միջոցներից ֆինանսավորման համար ընդունելի բաղադրիչներին վերաբերող աշխատանքների, ապրանքների եւ ծառայությունների մասով (կասկածներից խուսափելու համար՝ բացառությամբ անցման իրավունքների, որոնց համար ֆինանսավորում տրամադրում է Վարկառուն), որոնք եղել են Բանկի համար ընդունելի պայմաններով կնքված պայմանագրի կամ պայմանագրերի կարգավորման առարկան՝ հաշվի առնելով Բանկի գնումների ուղեցույցի վերջին հրատարակությունը:

«ԵՆԲ բնապահպանական եւ սոցիալական չափանիշներ» նշանակում է 2022 թվականի ԵՆԲ բնապահպանական եւ սոցիալական չափանիշներ, որոնք հրապարակվել են Բանկի կայքում, եւ որոնք նկարագրում են բնապահպանական եւ սոցիալական պահանջները, որոնք պետք է բավարարեն ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր նախագծերը, ինչպես նաեւ տարբեր կողմերի, ներառյալ՝ Վարկառուի պարտականությունները:

«Շրջակա միջավայր» նշանակում է հետեւյալը.

ա) կենդանական եւ բուսական աշխարհ, կենդանի օրգանիզմներ, ներառյալ՝ էկոլոգիական համակարգերը,

բ) ցամաք, հող, ջուր (ներառյալ՝ ծովային եւ առափնյա ջրերը), օդ, կլիմա եւ լանդշաֆտ (բնական կամ տեխնածին կառույցներ՝ վերգետնյա կամ ստորգետնյա),

գ) մշակութային ժառանգություն (բնական, նյութական եւ ոչ նյութական),

դ) կառուցված միջավայր, եւ

ե) մարդու առողջություն եւ բարեկեցություն:

«Շրջակա միջավայրի վրա եւ սոցիալական ազդեցության գնահատման ուսումնասիրություն» նշանակում է շրջակա միջավայրի վրա եւ սոցիալական ազդեցության գնահատում:

«Բնապահպանական եւ սոցիալական փաստաթղթեր» նշանակում է շրջակա միջավայրի վրա եւ սոցիալական ազդեցության գնահատման ուսումնասիրություն եւ բնապահպանական թույլտվություն կամ Հայաստանի իրավասու մարմնի կողմից կայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության ամբողջական գնահատման անհրաժեշտության բացակայության մասին որոշում:

«Բնապահպանական եւ սոցիալական չափանիշներ» նշանակում է՝

ա) բնապահպանական օրենքներ եւ սոցիալական օրենքներ, որոնք կիրառելի են Նախագծի կամ Վարկառուի նկատմամբ,

բ) ԵՆԲ բնապահպանական եւ սոցիալական չափանիշներ, եւ

գ) Բնապահպանական եւ սոցիալական փաստաթղթեր:

«Բնապահպանական եւ սոցիալական հաստատում» նշանակում է Բնապահպանական օրենքով կամ Սոցիալական օրենքով պահանջվող ցանկացած Լիազորություն՝ կապված Նախագծի մշակման կամ իրականացման հետ:

«Բնապահպանական եւ սոցիալական պահանջ» նշանակում է ցանկացած պահանջ, վարույթ, պաշտոնական ծանուցում կամ քննություն ցանկացած անձի կողմից՝ կապված Բնապահպանական եւ սոցիալական չափանիշների որեւէ խախտման կամ ենթադրյալ խախտման հետ:

«Բնապահպանական օրենք» նշանակում է՝

ա) ԵՄ իրավունքը, ներառյալ՝ սկզբունքներն ու չափանիշները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության եւ ԵՄ-ի միջեւ կնքված համաձայնագրի հիման վրա սույն Պայմանագրի նպատակով ընդունված ցանկացած շեղման,

բ) Հայաստանի օրենքները եւ կանոնակարգերը, եւ

գ) միջազգային պայմանագրերը եւ կոնվենցիաները, որոնք ստորագրվել եւ վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից կամ այլ կերպ կիրառելի եւ պարտադիր են դրա համար,

որոնցից յուրաքանչյուրի դեպքում հիմնական նպատակը Շրջակա միջավայրի պահպանումն է, պաշտպանությունը կամ բարելավումը:

«ԵՄ իրավունք» նշանակում է Եվրոպական միության Համայնքի կանոնագիրք [acquis communautaire], ինչպես այն նախատեսված է Եվրոպական միության պայմանագրերով, կանոնակարգերով, հրահանգներով, պատվիրակված ակտերով, կիրարկման ակտերով եւ Եվրոպական միության արդարադատության դատարանի նախադեպային իրավունքով:

«ԵՎՐՈ» կամ **«Եվրո»** նշանակում է Եվրոպական միության անդամ պետությունների օրինական արժույթը, որոնք այն ընդունում կամ ընդունել են որպես իրենց արժույթ՝ համաձայն «Եվրոպական միության մասին» պայմանագրի եւ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի համապատասխան դրույթների:

«ԵՎՐՈԻԲՈՐ» եզրույթն ունի «Բ» հավելվածում դրան տրված իմաստը:

«Պարտավորությունների չկատարման դեպք» նշանակում է 10.1 հոդվածում նշված հանգամանքներից, իրադարձություններից կամ դեպքերից որեւէ մեկը:

«Ընտանիքի անդամ(ներ)» եզրույթն ունի Փողերի վացման դեմ պայքարի մասին հրահանգներով այդ եզրույթին տրված իմաստը:

«Հասանելիության վերջնական ամսաթիվ» նշանակում է Ուժի մեջ մտնելու ամսաթվից 60 (վաթսուն) ամիս հետո, եւ եթե այդ օրը Համապատասխան Աշխատանքային օր չէ, ապա՝ նախորդող Համապատասխան Աշխատանքային օրը:

«Ահաբեկչության ֆինանսավորում» նշանակում է ֆինանսական միջոցների տրամադրում կամ հավաքագրում ցանկացած միջոցով, ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ նպատակ ունենալով, որ դրանք օգտագործվեն, կամ գիտակցելով, որ դրանք պետք է օգտագործվեն ամբողջությամբ կամ մասնակի՝ Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի «Ահաբեկչության դեմ պայքարի մասին, ինչպես նաեւ Խորհրդի 2002/475/JHA շրջանակային որոշումը փոխարինելու եւ Խորհրդի 2005/671/JHA որոշումը լրացնելու մասին» 2017 թվականի մարտի 15-ի 2017/541 հրահանգում (ԵՄ) (ժամանակ առ ժամանակ փոփոխված, փոխարինված կամ վերաընդունված տարբերակով) թվարկված իրավախախտումներից որեւէ մեկը կատարելու նպատակով:

«Ֆինանսական կանոնակարգ» նշանակում է Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի «Միության ընդհանուր բյուջեի նկատմամբ կիրառվող ֆինանսական կանոնների մասին, ինչպես նաեւ (ԵՄ) թիվ 1296/2013, (ԵՄ) թիվ 1301/2013, (ԵՄ) թիվ 1303/2013, (ԵՄ) թիվ 1304/2013, (ԵՄ) թիվ 1309/2013, (ԵՄ) թիվ 1316/2013, (ԵՄ) թիվ 223/2014, (ԵՄ) թիվ 283/2014 կանոնակարգերը եւ թիվ 541/2014/ԵՄ որոշումը փոփոխելու, ինչպես նաեւ թիվ 966/2012 կանոնակարգը (ԵՄ, Եվրատոմ) ուժը կորցրած ճանաչելու մասին» 2018 թվականի հուլիսի 18-ի թիվ 2018/1046 կանոնակարգ (ԵՄ, Եվրատոմ) (ՊՏ L 193, 30.07.2018թ., էջ 1):

«Ֆիքսված դրույքաչափ» նշանակում է տարեկան տոկոսադրույք, որը սահմանվում է Բանկի կողմից՝ ֆիքսված տոկոսադրույքով տրված փոխառությունների համար ժամանակ առ ժամանակ Բանկի ղեկավար մարմինների կողմից սահմանված կիրառելի սկզբունքներին համապատասխան՝ արտահայտված Տրանշի արժույթով եւ կապիտալի հետվճարման ու տոկոսների վճարման համարժեք պայմաններով: Նման դրույքաչափը չպետք է բացասական արժեք ունենա:

«Ֆիքսված դրույքաչափով տրանշ» նշանակում է Տրանշ, որի նկատմամբ կիրառվում է Ֆիքսված դրույքաչափը:

«Լողացող դրույքաչափ» նշանակում է տարեկան լողացող դրույքաչափ՝ ֆիքսված սպրեդով, որը սահմանվում է Բանկի կողմից յուրաքանչյուր հաջորդ Լողացող դրույքաչափով Սկզբնական ժամանակահատվածի համար, որը հավասար է ԵՎՐԻԲՈՐ գումարած Սպրեդ-ին: Եթե Լողացող դրույքաչափը ցանկացած Լողացող դրույքաչափի Սկզբնական ժամանակահատվածի համար հաշվարկվում է զրոյից ցածր, ապա այն կլինի զրոյական մակարդակում:

«Լողացող դրույքաչափի Սկզբնական ժամանակահատված» նշանակում է մեկ Վճարման ամսաթվից մինչեւ հաջորդ համապատասխան Վճարման ամսաթիվն ընկած յուրաքանչյուր ժամանակահատված. առաջին Լողացող դրույքաչափի Սկզբնական ժամանակահատվածը մեկնարկում է Տրանշի հատկացման օրը:

«Լողացող դրույքաչափով տրանշ» նշանակում է Տրանշ, որի նկատմամբ կիրառվում է Լողացող դրույքաչափը:

«Շրջանակային համաձայնագիրն» ունի Նախաբանի «դ» կետում դրան տրված իմաստը:

«ՀՀՀԸՍ» նշանակում է Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման համընդհանուր ընդունված սկզբունքներ, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտներ (ՖՀՄՍ):

«**Գնումների ուղեցույց**» նշանակում է ԵՆԲ կայքում² հրապարակված Գնումների ուղեցույց, որը ԵՆԲ-ի կողմից ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվող նախագծերն իրականացնող մարմիններին տեղեկացնում է Նախագծով պահանջվող աշխատանքներ, ապրանքներ եւ ծառայություններ գնելու համար ձեռքբերման ենթակա պայմանավորվածությունների մասին:

«**ՖՀՄՍ**» նշանակում է միջազգային հաշվապահական ստանդարտներ՝ ՄՀՍ 1606/2002 կանոնակարգի իմաստով այնքանով, որքանով դրանք կիրառելի են համապատասխան ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ:

«**Անօրինականության դեպք**» եզրույթն ունի 4.3.Ա(4) հոդվածում դրան տրված իմաստը:

«**ԱՄԿ**» նշանակում է Աշխատանքի միջազգային կազմակերպություն:

«**ԱՄԿ չափանիշներ**» նշանակում է ԱՄԿ-ի ցանկացած պայմանագիր, կոնվենցիա կամ դաշնագիր, որը ստորագրվել եւ վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից կամ այլ կերպ կիրառելի եւ պարտադիր է դրա համար, եւ Աշխատանքի հիմնական չափանիշներ (ինչպես սահմանված է ԱՄԿ-ի՝ «Աշխատանքի վայրում հիմնարար սկզբունքների եւ իրավունքների մասին» հռչակագրում):

«**Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպք**» նշանակում է Կանխավճարի դեպք, որը ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման կանխավճարի դեպք կամ Անօրինականության դեպք չէ:

«**Տոկոսի վերանայում/փոխարկում**» նշանակում է նոր ֆինանսական պայմանների սահմանում՝ կապված տոկոսադրույքի, մասնավորապես՝ նույն տոկոսադրույքի հիմքի (վերանայում) կամ այլ տոկոսադրույքի հիմքի (փոխարկում)

² <https://www.eib.org/en/publications/guide-to-procurement.htm> Խնդրում ենք նկատի ունենալ, որ հղումն արված է Ուղեցույցի այն տարբերակին, որն ուժի մեջ էր համապատասխան նախագծի գնման ժամանակ:

հետ, որը կարող է առաջարկվել Տրանշի մնացած ժամկետի համար կամ մինչև հաջորդ Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթիվը, եթե այդպիսիք կան:

«Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթիվ» նշանակում է այն ամսաթիվը, որը Հատկացման առաջարկում Բանկի կողմից նշված Վճարման ամսաթիվն է:

«Տոկոսի վերանայման/փոխարկման առաջարկ» նշանակում է Դ հավելվածի համաձայն Բանկի կողմից արված առաջարկ:

«Տոկոսի վերանայման/փոխարկման մասին դիմում» նշանակում է Վարկառուի կողմից գրավոր ծանուցում, որը հանձնվում է Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվից առնվազն 75 (յոթանասունհինգ) օր առաջ՝ Բանկից պահանջելով իրեն ներկայացնել Տոկոսի վերանայման/փոխարկման առաջարկ: Տոկոսի վերանայման/փոխարկման մասին դիմումի մեջ նշվում են նաև՝

ա) Վճարման ամսաթվերը, որոնք ընտրվել են համաձայն 3.1 հոդվածի դրույթների,

բ) Տրանշի գումարի չափը, որի համար կիրառվելու է Տոկոսի վերանայումը/փոխարկումը, եւ

գ) Տոկոսի վերանայման/փոխարկման ցանկացած այլ ամսաթիվ, որն ընտրվել է համաձայն 3.1 հոդվածի:

«Լիազորված ստորագրող անձանց եւ հաշիվների ցանկ» նշանակում է Բանկին բավարարող ձեռով եւ բովանդակությամբ ցանկ, որով սահմանվում են՝

ա) Լիազորված ստորագրող անձինք՝ ցուցակում նշված անձանց ստորագրելու լիազորության ապացույցներով եւ նշելով, թե արդյոք նրանք ունեն անհատական կամ համատեղ ստորագրելու լիազորություն,

բ) այդ անձանց ստորագրությունների նմուշները,

գ) բանկային հաշիվը (հաշիվները), որոնց սույն Պայմանագրի համաձայն կարող են կատարվել հատկացումներ (նշված է IBAN ծածկագրով, եթե երկիրը ներառված է SWIFT-ի կողմից հրապարակված IBAN ռեգիստրում, կամ տեղական բանկային գործելակերպին համապատասխան հաշվի ձեւաչափով), բանկի BIC/SWIFT ծածկագիրը եւ բանկային հաշվի (հաշիվների) շահառուի անունն այն ապացույցների հետ միասին, որ այդ հաշիվը (հաշիվները) բացվել է (են) շահառուի անունով, եւ

դ) բանկային հաշիվը (հաշիվները), որից (որոնցից) Վարկառուի կողմից սույն Պայմանագրի համաձայն կարող են կատարվել վճարումներ (նշված է IBAN ծածկագրով, եթե երկիրը ներառված է SWIFT-ի կողմից հրապարակված IBAN ռեգիստրում, կամ տեղական բանկային գործելակերպին համապատասխան հաշվի ձեւաչափով), բանկի BIC/SWIFT ծածկագիրը եւ բանկային հաշվի (հաշիվների) շահառուի անունն այն ապացույցների հետ միասին, որ այդ հաշիվը (հաշիվները) բացվել է (են) շահառուի անունով:

«Իրական ժամանակում սահմանված տրանշ» եզրույթն ունի 1.2.Բ(բ) հոդվածում դրան տրված իմաստը:

«Փոխառություն» նշանակում է Բանկի կողմից սույն Պայմանագրով ժամանակ առ ժամանակ հատկացվող գումարների հանրագումարը:

«Հմարված փոխառություն» նշանակում է Բանկի կողմից սույն Պայմանագրով ժամանակ առ ժամանակ հատկացվող գումարների հանրագումարը, որը մնում է չմարված:

«Շուկայի ապակայունացման դեպք» նշանակում է հետեւյալ հանգամանքներից որեւէ մեկը.

ա) Բանկի հիմնավոր կարծիքով՝ կան դեպքեր կամ հանգամանքներ, որոնք բացասաբար են ազդում Բանկի՝ իր ֆինանսավորման աղբյուրներին հասանելիություն ունենալու վրա,

բ) Բանկի կարծիքով՝ ֆինանսական միջոցները հասանելի չեն Բանկի սովորական ֆինանսավորման աղբյուրներից՝ համապատասխան արժույթով Տրանշը պատշաճ կերպով ֆինանսավորելու համար եւ (կամ) համապատասխան մարման համար եւ (կամ) նման Տրանշի փոխհատուցման պրոֆիլի հետ կապված, կամ

գ) կապված Լողացող դրույքաչափով տրանշի հետ՝

i) Բանկի կողմից իր ֆինանսավորման աղբյուրներից միջոցներ ձեռք բերելու հետ կապված ծախսերը, ինչպես որոշվում է Բանկի կողմից, նման Տրանշի Լողացող դրույքաչափով Սկզբնական ժամանակահատվածին հավասար ժամանակահատվածի համար (այսինքն՝ փողի շուկայում) կգերազանցեն կիրառելի ԵՎՐԻԲՈՐ-ը, կամ

ii) Բանկը որոշում է, որ համապատասխան եւ արդարացի միջոցներ չկան նման Տրանշի համապատասխան արժույթի համար կիրառելի ԵՎՐԻԲՈՐ-ը պարզելու համար:

«Էական բացասական փոփոխություն» նշանակում է ցանկացած դեպք կամ պայմանի փոփոխություն, որը, Բանկի կարծիքով, ունի էական բացասական ազդեցություն՝

ա) Վարկառուի՝ սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները կատարելու կարողության կամ Իրականացնող մարմնի՝ Նախագծի առնչությամբ իր պարտավորությունները կատարելու կարողության վրա,

բ) Վարկառուի կամ Իրականացնող մարմնի բիզնեսի, գործառնությունների, գույքի, վիճակի (ֆինանսական կամ այլ) կամ հեռանկարների վրա,

գ) սույն Պայմանագրի առնչությամբ Բանկին տրված ցանկացած Երաշխիքի կամ Ապահովման օրինականության, վավերության կամ կիրառելիության, արդյունավետության կամ վարկանիշի կամ արժեքի կամ սույն

Պայմանագրով կամ սույն Պայմանագրի առնչությամբ Բանկի օգտին Ապահովում ստեղծող ցանկացած համաձայնագրով Բանկի իրավունքների կամ իրավական պաշտպանության միջոցների վրա:

«Մարման ամսաթիվ» նշանակում է 4.1.Ա(բ)(iv) հոդվածին համապատասխան նշված՝ Տրանշի վերջին Հետվճարման ամսաթիվը:

«Փողերի վաճում» նշանակում է՝

ա) գույքի փոխարկումը կամ փոխանցումը՝ իմանալով, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեությունից կամ այդպիսի գործունեությանը մասնակցությունից՝ գույքի ապօրինի ծագումը թաքցնելու կամ քողարկելու կամ այդպիսի գործունեություն իրականացնելու մեջ ներգրավված որեւէ անձի նրա գործողությունների իրավական հետեւանքներից խուսափելու հարցում օժանդակելու նպատակով.

բ) գույքի իրական բնույթը, աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինումը, տեղաշարժը, դրա նկատմամբ իրավունքները կամ սեփականությունը թաքցնելը կամ քողարկելը՝ իմանալով, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեությունից կամ այդպիսի գործունեությանը մասնակցությունից.

գ) գույքի ձեռքբերումը, տիրապետումը կամ օգտագործումը՝ ստանալու պահին իմանալով, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեությունից կամ այդպիսի գործունեությանը մասնակցությունից, կամ

դ) վերոնշյալ կետերում նշված գործողություններից որեւէ մեկին մասնակցությունը, կապը դրանք կատարելու հետ, դրանք կատարելու փորձերը եւ դրանց կատարմանն օժանդակելը կամ դրդելը, նպաստելը եւ դրանց վերաբերյալ խորհրդատվությունը:

«ՀՋՄՀԳ-ԳԵ կանոնակարգ» նշանակում է Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2021 թվականի հունիսի 9-ի թիվ 2021/947 (ԵՄ) կանոնակարգը, որով սահմանվում է Հարեւանության, զարգացման եւ միջազգային համագործակցության գործիքը՝ Գլոբալ Եվրոպա:

«Ոչ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորում» եզրույթն ունի 4.3.Ա(2) հոդվածում դրան տրված իմաստը:

«Ոչ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման կանխավճարի դեպք» եզրույթն ունի 4.3.Ա(2) հոդվածում դրան տրված իմաստը:

«Վճարային հաշիվ» նշանակում է այն բանկային հաշիվը, որից Վարկառուի կողմից կկատարվեն սույն Պայմանագրի համաձայն վճարումները, ինչպես սահմանված է Լիազորված ստորագրող անձանց եւ հաշիվների ամենավերջին ցանկում:

«Վճարման ամսաթիվ» նշանակում է մարտի 20-ը եւ սեպտեմբերի 20-ը մինչեւ եւ ներառյալ Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթիվը, եթե այդպիսիք կան, կամ Մարման ամսաթիվը՝ բացառությամբ, եթե որեւէ այդպիսի օր Համապատասխան Աշխատանքային օր չէ, այսինքն՝

ա) Ֆիքսված դրույքաչափով տրանշի դեպքում՝ հաջորդ Համապատասխան Աշխատանքային օրը՝ առանց 3.1 հոդվածով նախատեսված տոկոսների ճշգրտման, կամ նախորդող համապատասխան աշխատանքային օրը՝ ճշգրտմամբ (սակայն միայն վերջին տոկոսային ժամանակաշրջանում կուտակված՝ 3.1 հոդվածով նախատեսված տոկոսների գումարի չափով), եթե մայր գումարի մարումը կատարվում է մեկ փոխանցումով՝ «Դ» հավելվածի «Գ» կետի համաձայն, եւ

բ) Լողացող դրույքաչափով տրանշի դեպքում՝ այդ ամսվա հաջորդ Համապատասխան Աշխատանքային օրը, կամ եթե դա հնարավոր չէ, ապա նախորդող ամենամոտ Համապատասխան Աշխատանքային օրը, բոլոր դեպքերում՝ 3.1 հոդվածով նախատեսված վճարման ենթակա տոկոսների համապատասխան ճշգրտմամբ:

«ԾԻԳ» եզրույթն ունի նախաբանի «ա» կետում դրան տրված իմաստը:

«**Կանխավճարի գումար**» նշանակում է Վարկառուի կողմից կանխավճարի տեսքով վճարման ենթակա Տրանշի գումարը՝ համաձայն 4.2.Ա կամ 4.3.Ա հոդվածների՝ ըստ կիրառելիության:

«**Կանխավճարի ամսաթիվ**» նշանակում է Վարկառուի կողմից պահանջվող եւ Բանկի կողմից համաձայնեցված կամ Բանկի կողմից սահմանված (ըստ կիրառելիության) այն ամսաթիվը, երբ Վարկառուն կատարում է Կանխավճարի գումարի փոխանցումը:

«**Կանխավճարի դեպք**» նշանակում է 4.3.Ա հոդվածում նկարագրված դեպքերից որեւէ մեկը:

«**Կանխավճարի փոխհատուցում**» նշանակում է կանխավճարի տեսքով վճարման ենթակա ցանկացած մայր գումարի մասով Բանկի կողմից Վարկառուին որպես ընթացիկ արժեք փոխանցված գումարը (հաշվարկված Կանխավճարի ամսաթվի դրությամբ), եթե կա ավելի տոկոս՝

ա) որը հետագայում կհաշվեգրվեր Կանխավճարի գումարի վրա Կանխավճարի ամսաթվից մինչեւ Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթիվը, եթե այդպիսիք կան, կամ Մարման ամսաթիվը, եթե դրա կանխավճարը վճարված չլիներ,

բ) այն տոկոսի վրա, որն այդպես կհաշվեգրվեր այդ ժամանակահատվածում, եթե հաշվարկվեր Վերաբաշխման դրույքաչափով՝ հանած 0,19% (տասնինը բազիսային կետ):

Նշված ընթացիկ արժեքը հաշվարկվում է զեղչման դրույքաչափով, որը հավասար է յուրաքանչյուր համապատասխան Վճարման ամսաթվի դրությամբ կիրառվող Վերաբաշխման դրույքաչափին:

«**Կանխավճարի մասին ծանուցում**» նշանակում է Բանկի կողմից գրավոր ծանուցում Վարկառուին՝ կապված Ֆիքսված դրույքաչափով տրանշի եւ (կամ) Լողացող դրույքաչափով տրանշի կանխավճարի հետ՝ 4.2.Գ հոդվածին համապատասխան՝ նշելով Կանխավճարի գումարը, Կանխավճարի ամսաթիվը,

հաշվեգրված տոկոսները, 4.1.Դ հոդվածով նախատեսված վճարը՝ առկայության դեպքում, եւ միայն Ֆիքսված դրույքաչափով տրանշի համար՝ Կանխավճարի գումարի մասով վճարման ենթակա Կանխավճարի փոխհատուցումը՝ առկայության դեպքում:

«**Կանխավճարի մասին առաջարկ**» նշանակում է Բանկի կողմից գրավոր ծանուցում Վարկառուին՝ 4.2.Գ հոդվածին համապատասխան:

«**Կանխավճարի մասին դիմում**» նշանակում է Վարկառուի կողմից Բանկին ներկայացված՝ Չմարված փոխառության ամբողջ կամ մի մասը կանխավճարի տեսքով վճարելու մասին դիմում՝ 4.2.Ա հոդվածին համապատասխան:

«**Արգելված վարքագիծ**» նշանակում է Ահաբեկչության ֆինանսավորման, Փողերի լվացման կամ Արգելված գործելակերպի որեւէ դեպք:

«**Արգելված գործելակերպ**» նշանակում է ցանկացած՝

ա) հարկադիր գործելակերպ, այսինքն՝ որեւէ կողմի կամ կողմի գույքին վնաս հասցնելը կամ վնասելը կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վնաս հասցնել կամ վնասել սպառնալը՝ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու համար.

բ) դավադիր գործելակերպ, այսինքն՝ երկու կամ ավելի կողմերի միջեւ պայմանավորվածություն, որը նախատեսված է ոչ պատշաճ նպատակին հասնելու, այդ թվում՝ մեկ այլ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու համար.

գ) կոռուպցիոն գործելակերպ, այսինքն՝ կողմի կողմից ցանկացած արժեքավոր բան առաջարկելը, տալը, ստանալը կամ դրա համար միջնորդելը՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, մեկ այլ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու համար.

դ) խարդախ գործելակերպ, այսինքն՝ ցանկացած արարք կամ բացթողում, այդ թվում՝ սխալ ներկայացնելը, որը գիտակցաբար կամ անխոհեմաբար

մոլորեցնում կամ փորձում է մոլորեցնել կողմին՝ ֆինանսական (ներառյալ՝ հարկումից խուսափելու հետ կապված) կամ այլ օգուտ ստանալու կամ պարտավորությունից խուսափելու նպատակով.

ե) խոչընդոտող գործելակերպ, այսինքն՝ սույն Փոխառության կամ Նախագծի առնչությամբ հարկադիր, դավադիր, կոռուպցիոն կամ խարդախ գործելակերպի քննության հետ կապված՝ ա) քննության նյութ հանդիսացող ապացույցները ոչնչացնելը, կեղծելը, փոփոխելը կամ թաքցնելը կամ քննիչներին կեղծ ցուցմունք տալը՝ քննությունը խոչընդոտելու համար, բ) որեւէ կողմի սպառնալը, հետապնդելը կամ ահաբեկելը՝ կանխելու համար, որ նա բացահայտի քննության համար կարեւոր հարցերի մասին իր գիտելիքները, կամ քննություն իրականացնելը, կամ գ) աուդիտի կամ ստուգումների կամ տեղեկատվության մատչելիության մասով ԵՆԲ խմբի պայմանագրային իրավունքների իրականացումը խոչընդոտելու նպատակով արարքները.

զ) հարկային հանցագործություն, այսինքն՝ բոլոր այն իրավախախտումները, ներառյալ՝ ուղղակի հարկերին եւ անուղղակի հարկերին վերաբերող եւ Հայաստանի Հանրապետության ազգային իրավունքով սահմանված հարկային հանցագործությունները, որոնք պատժվում են ազատազրկմամբ կամ առավելագույնը մեկ տարուց ավելի ժամկետով կալանավորման կարգադրությամբ. կամ

է) ԵՆԲ խմբի ռեսուրսների եւ ակտիվների չարաշահում, այսինքն՝ ցանկացած անօրինական գործունեություն, որը կատարվել է ԵՆԲ խմբի ռեսուրսների կամ ակտիվների (ներառյալ՝ սույն Պայմանագրով տրամադրված ֆինանսական միջոցների) գիտակցաբար կամ անփութորեն օգտագործման համար, կամ

ը) ցանկացած այլ անօրինական գործունեություն, որը կարող է ազդեցություն ունենալ Եվրոպական միության ֆինանսական շահերի վրա՝ համաձայն կիրառելի օրենքների:

«**Նախագիծ**» եզրույթն ունի Նախաբանի «ա» կետում դրան տրված իմաստը:

«**Նախագծի ծախսերի կրճատման դեպք**» եզրույթն ունի 4.3.Ա(1) հոդվածում դրան տրված իմաստը:

«**Իրականացնող մարմին**» եզրույթն ունի Նախաբանի «ա» կետում դրան տրված իմաստը:

«**Վերաբաշխման դրույքաչափ**» նշանակում է Բանկի կողմից սահմանված ֆիքսված տարեկան դրույքաչափը, որն այն դրույքաչափն է, որը Բանկը փոխհատուցման հաշվարկման օրը կկիրառեր նույն արժույթը, տոկոսների վճարման նույն ժամկետները եւ Տոկոսի վերանայման/փոխարկման նույն մարման պրոֆիլն ունեցող փոխառության նկատմամբ՝ առկայության դեպքում, կամ Մարման ամսաթվին՝ որպես Տրանշ, որի մասով առաջարկվում կամ պահանջվում է կանխավճար կամ չեղարկում: Այդ դրույքաչափը չպետք է բացասական արժեք ունենա:

«**Համապատասխան Աշխատանքային օր**» նշանակում է օր, երբ իրական ժամանակում համախառն հաշվարկների համակարգը, որը շահագործվում է Եվրահամակարգի (T2) կամ ցանկացած այլ իրավահաջորդ համակարգի կողմից, բաց է եվրոյով վճարումների համար:

«**Համապատասխան կողմ**» եզրույթն ունի 8.3 հոդվածում դրան տրված իմաստը:

«**Համապատասխան անձ**» նշանակում է՝

ա) ցանկացած նախարարություն, կենտրոնական գործադիր իշխանության այլ մարմիններ կամ պետական այլ ստորաբաժանումներ կամ դրանցից որեւէ մեկի պաշտոնատար անձ կամ ներկայացուցիչ կամ որեւէ այլ անձ, որը հանդես է գալիս դրանցից որեւէ մեկի անունից կամ դրա հսկողության ներքո, որն իրավասու է կառավարել եւ (կամ) վերահսկել Վարկը, Փոխառությունը կամ Նախագիծը, եւ

բ) ցանկացած պաշտոնատար անձ կամ ներկայացուցիչ կամ նրա անունից կամ նրա հսկողության ներքո հանդես եկող ցանկացած այլ անձ, որն իրավասու է կառավարել եւ (կամ) վերահսկել Վարկը, Փոխառությունը կամ Նախագիծը:

«Հետվճարման ամսաթիվ» նշանակում է Վճարման ամսաթվերից յուրաքանչյուրը, որը նշվում է Հատկացման առաջարկում Տրանշի մայր գումարի հետվճարման համար՝ 4.1 հոդվածին համապատասխան:

«Հատկացման պահանջվող հետաձգված ամսաթիվ» եզրույթն ունի 1.5.Ա(1)(ա)(ii) հոդվածում դրան տրված իմաստը:

«Պատժամիջոցների ենթարկված անձ» նշանակում է անհատ կամ մարմին (կասկածներից խուսափելու համար «մարմին» եզրույթը ներառում է ցանկացած կառավարություն, խումբ կամ ահաբեկչական կազմակերպություն, սակայն չի սահմանափակվում դրանցով), որը Պատժամիջոցների նշանակված թիրախ է կամ այլ կերպ ենթարկվում է Պատժամիջոցների (ներառյալ, սակայն չսահմանափակվելով դրանով, ցանկացած անհատի կամ մարմնի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն սեփականության ներքո գտնվելու կամ այլ կերպ վերահսկվելու հետեւանքով, որը Պատժամիջոցների նշանակված թիրախ է կամ այլ կերպ ենթարկվում է Պատժամիջոցների):

«Պատժամիջոցներ» նշանակում է տնտեսական կամ ֆինանսական պատժամիջոցների մասին օրենքներ, կանոնակարգեր, առետրային էմբարգո կամ այլ սահմանափակող միջոցներ (ներառյալ, մասնավորապես, սակայն չսահմանափակվելով դրանով, ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված միջոցներ), որոնք ժամանակ առ ժամանակ ուժի մեջ են մտնում, կիրառվում, կիրարկվում կամ կատարվում են հետեւյալներից որեւէ մեկի կողմից.

ա) Միավորված ազգերի կազմակերպություն, ներառյալ, ի թիվս այլնի, Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը,

բ) Եվրոպական միություն, ներառյալ, ի թիվս այլնի, Եվրոպական միության խորհուրդը եւ Եվրոպական հանձնաժողովը եւ Եվրոպական միության ցանկացած այլ իրավասու մարմին/կառույց կամ գործակալություն,

գ) Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարություն եւ դրա ցանկացած վարչություն, բաժին, գործակալություն կամ գրասենյակ, ներառյալ, ի թիվս այլնի, ԱՄՆ գանձապետական դեպարտամենտի Օտարերկրյա ակտիվների վերահսկման գրասենյակը (ՕԱՎԳ), Միացյալ Նահանգների պետդեպարտամենտը եւ (կամ) Միացյալ Նահանգների առևտրի դեպարտամենտը, եւ

դ) Միացյալ Թագավորության կառավարություն եւ ցանկացած վարչություն, բաժին, գործակալություն, գրասենյակ կամ մարմին, ներառյալ, ի թիվս այլնի, Նորին գերազանցության գանձապետարանի ֆինանսական պատժամիջոցների իրականացման գրասենյակը եւ Միացյալ Թագավորության միջազգային առևտրի դեպարտամենտը:

«Հատկացման պլանավորված ամսաթիվ» նշանակում է այն ամսաթիվը, երբ նախատեսվում է Տրանշի հատկացում՝ 1.2.Բ հոդվածին համապատասխան, որը պետք է լինի Համապատասխան Աշխատանքային օր՝ Հատկացման առաջարկի ամսաթվից կամ իրական ժամանակում գնի սահմանման հաջող հեռախոսազանգից առնվազն 10 (տասը) օր հետո եւ Հասանելիության վերջնական ամսաթվին կամ դրանից առաջ:

«Ապահովում» նշանակում է ցանկացած հիփոթեք, գրավ, արգելանք, գանձում, փոխանցում, հիփոթեքի տրամադրում կամ այլ ապահովման երաշխիքներ, որոնք ապահովում են որեւէ անձի որեւէ պարտավորություն կամ նմանատիպ ազդեցություն ունեցող որեւէ այլ համաձայնագիր կամ պայմանավորվածություն:

«Սոցիալական օրենք» նշանակում է՝

ա) ԵՄ իրավունքը, ներառյալ՝ սկզբունքներն ու չափանիշները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության եւ ԵՄ-ի միջեւ կնքված համաձայնագրի հիման վրա սույն Պայմանագրի նպատակով ընդունված ցանկացած շեղման,

բ) Հայաստանի Հանրապետության օրենքները եւ կանոնակարգերը,

գ) միջազգային պայմանագրերը եւ կոնվենցիաները, որոնք ստորագրվել եւ վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից կամ այլ կերպ կիրառելի եւ պարտադիր են դրա համար,

դ) ԱՄԿ ցանկացած չափանիշ, որոնցից յուրաքանչյուրի դեպքում հիմնական նպատակը Սոցիալական հարցերի պաշտպանությունը կամ բարելավումն է,

ե) Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված եւ վավերացված կամ նրա համար այլ կերպ կիրառելի եւ պարտադիր՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքների մասին ցանկացած միջազգային պայմանագիր, կոնվենցիա կամ դաշնագիր:

«Սոցիալական հարցեր» նշանակում է հետեւյալ բոլորը կամ դրանցից որեւէ մեկը.

ա) աշխատանքային եւ արտադրական միջավայրի պայմաններ,

բ) աշխատանքում առողջություն եւ անվտանգություն,

գ) խոցելի խմբերի իրավունքներ եւ շահեր,

դ) բնիկ ժողովուրդների իրավունքներ եւ շահեր,

ե) գենդերային հավասարություն,

զ) հանրության առողջություն, ապահովություն եւ անվտանգություն,

է) հարկադիր վտարումներից խուսափում եւ ոչ կամավոր վերաբնակեցման հետեւանքով առաջացած դժվարությունների թեթեւացում, եւ

ը) շահագրգիռ կողմերի ներգրավվածություն:

«**Սպրեդ**» նշանակում է ֆիքսված սպրեդ (որն ունի դրական կամ բացասական արժեք) ԵՎՐԻԲՈՐ-ի նկատմամբ, ինչպես սահմանվել է Բանկի կողմից եւ ծանուցվել է Վարկառուին համապատասխան Հատկացման առաջարկում կամ Տոկոսների վերանայման/փոխարկման առաջարկում:

«**Ենթանախագիծ**» եզրույթն ունի Նախաբանի «ա» կետում դրան տրված իմաստը:

«**Հարկ**» նշանակում է ցանկացած հարկ, գանձում, տուրք կամ ցանկացած այլ վճարում կամ համանման պահում (այդ թվում՝ ցանկացած տուգանք կամ տոկոս, որը ենթակա է վճարման՝ չվճարելու կամ ցանկացած նույն գումարի վճարումը որեւէ կերպ ուշացնելու համար):

«**Տեխնիկական նկարագիր**» եզրույթն ունի Նախաբանի «ա» կետում դրան տրված իմաստը:

«**Տրանշ**» նշանակում է սույն Պայմանագրով կատարված կամ կատարման ենթակա որեւէ հատկացում: Այն դեպքում, երբ Հատկացման ընդունումը չի ստացվել, Տրանշ նշանակում է Իրական ժամանակում սահմանված գնով Տրանշ կամ Տրանշ, ինչպես առաջարկվում է 1.2.Բ հոդվածով:

ՀՈԴՎԱԾ 1

Վարկը եւ հատկացումները

1.1. Վարկի գումարը

Սույն Պայմանագրով Բանկը Վարկառուին տրամադրում է եւ Վարկառուն ընդունում է 50,000,000 եվրոյի չափով (հիսուն միլիոն եվրո) վարկ (Վարկ)՝ Նախագծի ֆինանսավորման համար:

1.2. Հատկացման ընթացակարգը

1.2.Ա. Տրանշները

Բանկը հատկացնում է Վարկ մինչեւ 15 (տասնհինգ) Տրանշով եւ ոչ ավելի, քան մեկ (1) Տրանշ՝ 30-օրյա (երեսուն) ժամկետում: Յուրաքանչյուր Տրանշի գումարը կազմում է նվազագույնը 1,000,000.00 ԵՎՐՈ (մեկ միլիոն եվրո) կամ (եթե ավելի քիչ) Վարկի չօգտագործված ամբողջ մնացորդը: Առաջին Տրանշի առավելագույն գումարը չի գերազանցում 5,000,000.00 ԵՎՐՈՆ (հինգ միլիոն եվրո):

1.2.Բ. Հատկացման առաջարկը

Վարկառուի դիմումի եւ 1.4.Ա հոդվածի համաձայն՝ պայմանով, որ 1.6.Բ հոդվածում նշված որեւէ դեպք տեղի չի ունեցել եւ չի շարունակվում, Բանկն այդպիսի դիմումն ստանալուց հետո իր հայեցողությամբ՝

ա) այդպիսի դիմումն ստանալուց հետո 5 (հինգ) Աշխատանքային օրվա ընթացքում Վարկառուին է ուղարկում Տրանշի հատկացման համար Հատկացման առաջարկ: Հատկացման առաջարկը պետք է պարունակի «Գ» հավելվածում նշված տեղեկությունները, կամ

բ) ծանուցում է Վարկառուին, որ պահանջվող Տրանշի հատկացման ժամկետները համաձայնեցվելու են իրական ժամանակում գնի սահմանման վերաբերյալ ձայնագրվող հեռախոսագրույցի ընթացքում, որը պետք է տեղի ունենա Բանկի եւ Վարկառուի միջեւ (Իրական ժամանակում սահմանված գնով

Տրանշ): Այդ դեպքում, համաձայն 1.4.Բ եւ 1.4.Գ հոդվածների, Բանկի եւ Վարկառուի միջեւ իրական ժամանակում գնի սահմանման վերաբերյալ հաջող հեռախոսազրույց տեղի ունենալուց հետո, որի ընթացքում Կողմերն ընդունում են պահանջվող Տրանշի հատկացման պայմանները, Բանկը միեւնույն Աշխատանքային օրը՝ գնի սահմանման վերաբերյալ հաջող հեռախոսազրույցից հետո, Վարկառուին է ուղարկում Հատկացման առաջարկ, որտեղ ներկայացված են հեռախոսազրույցի ընթացքում համաձայնեցված պայմանները, եւ ներառված են «Գ» հավելվածում նշված տեղեկությունները: Վարկառուն ընդունում է Իրական ժամանակում սահմանված գնով տրանշը որպես Ընդունված տրանշ, ինչպես նաեւ ընդունում է Հատկացման առաջարկը՝ Հատկացման ընդունումը Բանկին հանձնելով ոչ ուշ, քան մինչեւ Հատկացման ընդունման վերջնաժամկետը՝ 1.2.Գ հոդվածի «ա» կետի համաձայն: Իրական ժամանակում գնի հաջող սահմանման գործընթացն ավարտելու ամենաուշ ժամկետն է Հասանելիության վերջնական ամսաթվից 5 (հինգ) Աշխատանքային օր առաջ ընկած ժամանակահատվածը:

Սույն 1.2.Բ հոդվածի համաձայն Վարկառուի նման դիմումը Բանկի կողմից ստանալու վերջին ժամկետն է Հասանելիության վերջնական ամսաթվից 15 (տասնհինգ) Աշխատանքային օր առաջ ընկած ժամանակահատվածը:

Կողմերը համաձայնում են, որ Հատկացման առաջարկը կարող է Բանկի կողմից ներկայացվել չստորագրված փաստաթղթի ձեւով, եւ այդ դեպքում այն համարվում է Բանկի անունից պատշաճ կերպով կատարված եւ տրամադրված՝ պայմանով, որ այդպիսի Հատկացման առաջարկն ուղարկվել է էլեկտրոնային փոստով՝ հետեւյալ էլեկտրոնային հասցեից՝ EIB-FirmDisbursementOffer@eib.org, Վարկառուի՝ 12.1.Բ հոդվածում նշված էլեկտրոնային հասցեին:

1.2.Գ. Հատկացման ընդունումը

ա) Վարկառուն կարող է ընդունել Հատկացման առաջարկը՝ Բանկին հանձնելով Հատկացման ընդունումը ոչ ուշ, քան մինչեւ Հատկացման ընդունման վերջնաժամկետը, որին պետք է հաջորդի պատվիրված նամակ՝ 12.1.Ա հոդվածին համապատասխան: Հատկացման ընդունումը ստորագրվում է միանձնյա

ներկայացնելու իրավունք ունեցող Լիազորված ստորագրող անձի կամ համատեղ ներկայացնելու իրավունք ունեցող Լիազորված երկու կամ ավելի ստորագրող անձանց կողմից, եւ դրանում նշվում է Հատկացման հաշիվը, որին պետք է կատարվի Տրանշի հատկացումը՝ 1.2.Դ հոդվածին համապատասխան:

բ) Եթե Հատկացման առաջարկը պատշաճ կերպով ընդունվում է Վարկառուի կողմից դրա ժամկետներին համապատասխան Հատկացման ընդունման վերջնաժամկետի օրը կամ դրանից առաջ, ապա Բանկն Ընդունված տրանշը հասանելի է դարձնում Վարկառուին՝ համաձայն Հատկացման համապատասխան առաջարկի եւ սույն Պայմանագրի ժամկետներին եւ պայմաններին համապատասխան:

գ) Իրական ժամանակում սահմանված գնով Տրանշներից տարբեր Տրանշների դեպքում համարվում է, որ Վարկառուն մերժել է Հատկացման ցանկացած առաջարկ, որը պատշաճ կերպով չի ընդունվել դրա ժամկետներին համապատասխան Հատկացման ընդունման վերջնաժամկետի օրը կամ դրանից առաջ:

դ) Բանկը կարող է հիմնվել Վարկառուի կողմից Բանկին տրամադրված՝ Լիազորված ստորագրող անձանց եւ հաշիվների ամենավերջին ցանկում նշված տեղեկությունների վրա: Եթե Հատկացման ընդունումն ստորագրվում է Վարկառուի կողմից Բանկին տրամադրված՝ Լիազորված ստորագրող անձանց եւ հաշիվների ամենավերջին ցանկով սահմանված՝ Լիազորված ստորագրող անձի կողմից, ապա Բանկը կարող է ենթադրել, որ այդ անձն ունի ստորագրելու լիազորություն եւ այդ Հատկացման ընդունումը տրամադրում է Վարկառուի անունից եւ նրա կողմից:

1.2.Դ. Հատկացման հաշիվը

Հատկացումը կատարվում է Հատկացման հաշվին, որը նշված է համապատասխան Հատկացման ընդունման մեջ՝ պայմանով, որ այդ Հատկացման հաշիվն ընդունելի լինի Բանկի համար:

Չհակասելով 5.2(ե) հոդվածին՝ Վարկառուն ընդունում է, որ Վարկառուի կողմից ծանուցված Հատկացման հաշվին կատարված վճարումները սույն Պայմանագրով նախատեսված հատկացումներ են այնպես, ինչպես այն դեպքում, երբ դրանք կատարվեին Վարկառուի սեփական բանկային հաշվին:

Յուրաքանչյուր Տրանշի համար կարող է սահմանվել միայն մեկ Հատկացման հաշիվ:

1.3. Հատկացման արժույթը

Բանկը յուրաքանչյուր Տրանշ հատկացնում է եվրոյով:

1.4. Հատկացման պայմանները

1.4.Ա. Հատկացման առաջարկի առաջին պահանջին նախորդող պայմանը

Բանկը Վարկառուից ստանում է հետեւյալը՝ Բանկի համար բավարար ձեւով եւ բովանդակությամբ.

ա) ապացույց, որ Վարկառուի կողմից սույն Պայմանագրի ստորագրումը պատշաճ կերպով լիազորված է, եւ որ Վարկառուի անունից սույն Պայմանագիրն ստորագրող անձը կամ անձինք պատշաճ կերպով լիազորված են դա անելու՝ յուրաքանչյուր այդպիսի անձի կամ անձանց ստորագրության նմուշով,

բ) սույն Պայմանագրի առնվազն 2 (երկու) բնօրինակ պատշաճ կերպով ստորագրված է բոլոր Կողմերի կողմից, եւ

գ) Լիազորված ստորագրող անձանց եւ հաշիվների ցանկը՝

նախքան Վարկառուի կողմից Հատկացման առաջարկ պահանջելը՝ համաձայն 1.2.Բ հոդվածի: Հատկացման առաջարկի վերաբերյալ Վարկառուի կողմից ներկայացված ցանկացած պահանջ առանց վերը նշված փաստաթղթերի, որոնք ստացվել են Բանկի կողմից եւ բավարարում են դրան, համարվում է չկատարված:

1.4.Բ. Առաջին Տրանշը

1.2 հոդվածով նախատեսված առաջին Տրանշի հատկացումը, որը ոչ մի դեպքում չպետք է գերազանցի Վարկի 10%-ը (տասը տոկոս), պայմանավորված է առաջարկվող Տրանշի համար Բանկի կողմից իրեն բավարարող ձեռով եւ բովանդակությամբ հետեւյալ գրավոր փաստաթղթերի կամ ապացույցների ստացմամբ՝ Հատկացման պլանավորված ամսաթվից (իսկ 1.5 հոդվածի համաձայն հետաձգման դեպքում՝ համապատասխանաբար Հատկացման պահանջվող հետաձգված ամսաթվից կամ Հատկացման համաձայնեցված հետաձգված ամսաթվից) 6 (վեց) Աշխատանքային օր առաջ կամ մինչ այդ օրը.

ա) ապացույց այն մասին, որ Վարկառուն ստացել է սույն Պայմանագրի եւ Նախագծի հետ կապված բոլոր անհրաժեշտ Լիազորությունները.

բ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից անգլերենով տրված իրավական եզրակացություն՝ Վարկառուի կողմից սույն Պայմանագրի պատշաճ ստորագրման եւ սույն Պայմանագրով Վարկառուի պարտավորությունների եւ համապատասխան փաստաթղթերի օրինականության, վավերության, պարտադիր եւ կատարման ենթակա բնույթի մասին: Այդպիսի իրավական եզրակացությունը պետք է հաստատվի (ուղեկցվի) բոլոր այն համապատասխան փաստաթղթերով, որոնցով ապացուցվում է Վարկառուի՝ Պայմանագիրը կնքելու լիազորությունը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքներին համապատասխան սույն Պայմանագրի պատշաճ վավերացման վերաբերյալ ապացույցով,

գ) ապացույց այն մասին, որ ԾԻԳ-ը լիովին գործում է Բանկի պահանջներին համապատասխան, ունի բավարար մարդկային ռեսուրսներ՝ իրավունքի եւ համապատասխանության ապահովման, ճարտարագիտության, նախագծի տնտեսական արդյունավետության, գնումների, բնապահպանական եւ սոցիալական կայունության ոլորտներում անհրաժեշտ հմտություններով,

դ) ապացույց այն մասին, որ Բանկին գոհացնում է ընտրված Ենթանախագծերի տրամադրված ցանկը եւ ջրային ենթակառուցվածքին վերաբերող Ենթանախագծերի նախնական գնահատման մեթոդաբանությունը,

ե) Վարկառուն ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ սույն Պայմանագրով նախատեսված մայր գումարի, տոկոսների եւ այլ գումարների բոլոր վճարումները հարկումից ազատելու եւ այդ բոլոր գումարների վճարումը թույլատրելու համար՝ առանց եկամուտների ընդհանուր գումարից գանձվող հարկի նվազեցման, եւ

զ) ապացույց գնահատման վճարի ամբողջական վճարման վերաբերյալ՝ 1.8 հոդվածին համապատասխան,

է) ապացույց, որ ուժի մեջ մտնելու ամսաթվի պայմանները, ինչպես նշված է սույն Պայմանագրի 12.3 հոդվածում, կատարվել են, եւ

ը) փոխանակման վերահսկողության մասով անհրաժեշտ ցանկացած համաձայնություն պետք է ձեռք բերվի՝ սույն Պայմանագրով նախատեսված հատկացումների ստացումը, դրանց մարումը եւ տոկոսների ու սույնով նախատեսված վճարման ենթակա բոլոր մյուս գումարների վճարումը թույլատրելու համար. այդպիսի համաձայնությունները պետք է կիրառվեն այն հաշիվների բացման եւ վարման նկատմամբ, որոնց ուղղվում է Վարկի հատկացումը:

1.4.9. Երկրորդ եւ հաջորդող Տրանշները

Յուրաքանչյուր Տրանշի հատկացումը, բացառությամբ առաջին Տրանշի, իրականացվում է հետեւյալ պայմանների կատարմամբ.

ա) նախկինում հատկացված բոլոր Տրանշների հասույթի 80%-ը (ութսուն տոկոս) փաստացի հատկացվել է համապատասխան Ենթանախագծերին, կամ

բ) նախկինում հատկացված Տրանշների հասույթի 50%-ը (հիսուն տոկոս) ուղղվել է համապատասխան Ենթանախագծերին,

գ) վերջին հատկացումը՝

i) պայմանավորված է Բանկի կողմից իրականացվող գնումների հետագա ստուգումների գոհացուցիչ արդյունքով, եւ

ii) պայմանավորված է նախկին հատկացումների օգտագործման արդյունավետության եւ անհրաժեշտ փաստաթղթերի վերլուծությամբ (բավարար թվով Ենթանախագծեր՝ Վարկի չտրամադրված մասը արդյունավետորեն օգտագործելու համար): Եթե այս վերլուծության արդյունքում ի հայտ է գալիս Ենթանախագծերի ծախսերի վերանայման անհրաժեշտություն, ապա վերջին հատկացումից առաջ ուղարկված Տրամադրման մասին գրությամբ համապատասխանաբար վերանայվում է Վարկի տրամադրումը,

դ) ապացույց այն մասին, որ առաջարկվող հատկացումը չի գերազանցում Տրամադրման մասին գրությամբ Բանկի կողմից տրամադրված փաստացի գումարը,

ե) ապացույց առ այն, որ համապատասխան Տրանշի առհանումից հետո Փոխառության համախառն գումարը չի գերազանցում արդեն իսկ կատարված ծախսերի հանրագումարը, կամ Վարկառուն Պայմանագրով պարտավորվել է մարել այդ ծախսերը համապատասխան Հատկացման առաջարկի ամսաթվից 6 (վեց) ամսվա ընթացքում՝ ընդհուպ մինչեւ համապատասխան Հատկացման առաջարկի ամսաթիվը, եւ

զ) ապացույց այն մասին, որ Վարկառուն (ի դեմս Իրականացնող մարմնի եւ (կամ) ԾԻԳ-ի) որպես իր գործառնական ձեռնարկի մաս ստեղծել եւ վարում է բնապահպանական եւ սոցիալական կառավարման համակարգ (ԲՄԿՀ)՝ Բանկի չափանիշներին համապատասխան, այդ թվում մշակել է կառավարման համալիր գործընթացներ եւ ընթացակարգեր, որոնք թույլ են տալիս Իրականացնող մարմնին ապահովել բնապահպանական, կլիմայական եւ սոցիալական ոլորտը կարգավորող համապատասխան իրավական շրջանակին, միջազգային

լավագույն գործելակերպերին եւ Բանկի պահանջներին համապատասխանությունը, եթե կիրառելի են:

1.4.Դ. Բոլոր Տրանշները

1.2 հոդվածի համաձայն յուրաքանչյուր Տրանշի հատկացումը, ներառյալ՝ առաջին Տրանշը, իրականացվում է հետեւյալ պայմանների կատարմամբ.

ա) Բանկն առաջարկվող Տրանշի համար իրեն բավարարող ձեւով եւ բովանդակությամբ Հատկացման պլանավորված ամսաթվից (իսկ 1.5 հոդվածի համաձայն հետաձգման դեպքում՝ համապատասխանաբար Հատկացման պահանջվող հետաձգված ամսաթվից կամ Հատկացման համաձայնեցված հետաձգված ամսաթվից) 6 (վեց) Աշխատանքային օր առաջ կամ մինչ այդ օրն ստացել է հետեւյալ փաստաթղթերը կամ ապացույցները.

i) Վարկառուի կողմից Ե հավելվածի ձեւով վկայական, որը ստորագրված է Վարկառուի լիազոր ներկայացուցչի կողմից, եւ որը թվագրված է ոչ շուտ, քան այն ամսաթվով, որն ընկնում է Հատկացման պլանավորված ամսաթվից (իսկ 1.5 հոդվածի համաձայն հետաձգման դեպքում՝ համապատասխանաբար Հատկացման պահանջվող հետաձգված ամսաթվից կամ Հատկացման համաձայնեցված հետաձգված ամսաթվից) 20 (քսան) օր առաջ,

ii) Բանկը հավաստիանում է, որ համապատասխան Հատկացման առաջարկի եւ առաջարկվող Տրանշի Հատկացման առաջարկի ամսաթվի դրությամբ Շրջանակային համաձայնագիրը օրինական է, վավեր, պարտադիր եւ կատարման ենթակա, եւ տեղի չի ունեցել որեւէ դեպք կամ հանգամանք, որը, Բանկի կարծիքով, կարող էր բացասաբար ազդել Շրջանակային համաձայնագրի օրինական, վավեր, պարտադիր եւ կատարման ենթակա բնույթի վրա,

iii) Բանկին գոհացնում է տեխնիկական աջակցության մակարդակը, որը պետք է համապատասխանի տեխնիկական առաջադրանքին, եւ Վարկառուին ու ԾԻԳ-ին աջակցող՝ Բանկի կողմից հաստատված անձնակազմի գործունեությունը,

iv) ցանկացած այլ լիազորության կամ այլ փաստաթղթի, կարծիքի կամ հավաստիացման պատճեն, որի մասին Բանկը ծանուցել է Վարկառուին, որ անհրաժեշտ կամ ցանկալի է՝ կապված սույն Պայմանագրի կնքման եւ իրականացման եւ սույն Պայմանագրով նախատեսված գործարքների հետ, կամ սույն Պայմանագրի օրինականության, վավերության, պարտադիր ուժի կամ կատարման ենթակա լինելու առնչությամբ.

բ) առաջարկվող Տրանշի համար Հատկացման պլանավորված ամսաթվի (իսկ 1.5 հոդվածով նախատեսված հետաձգման դեպքում՝ համապատասխանաբար Հատկացման պահանջվող հետաձգված ամսաթվի կամ Հատկացման համաձայնեցված հետաձգված ամսաթվի) դրությամբ՝

i) 6.11 հոդվածի համաձայն կրկնվող հայտարարությունները եւ երաշխիքները բոլոր առումներով ճիշտ են, եւ

ii) որեւէ դեպք կամ հանգամանք, որը ժամանակի ընթացքում կամ սույն Պայմանագրով նախատեսված ծանուցման կամ որեւէ որոշման կայացման հետ մեկտեղ (կամ վերոշարադրյալ դեպքերի համակցության արդյունքում)՝

1) Պարտավորությունների չկատարման դեպք է կամ կլինի այդպիսին, կամ

2) Կանխավճարի դեպք է կամ կլինի այդպիսին,

տեղի չի ունեցել եւ դրանց մասով իրավական պաշտպանության միջոցներ չեն ձեռնարկվել, կամ դրանք չեն դադարեցվել, կամ դրանք չեն կարող լինել առաջարկվող Տրանշի հատկացման հետեւանք.

գ) իրական ժամանակում սահմանված գնով տրանշի դեպքում՝ Վարկառուի կողմից պատշաճ ձեով ստորագրված Հատկացման ընդունումը Բանկ է հանձնվել դրանում նշված ժամկետում՝ 1.2.Բ(բ) հոդվածին համապատասխան:

1.5. Հատկացման հետաձգումը

1.5.Ա. Հետաձգման հիմքերը

1.5.Ա(1) ՎԱՐԿԱՌՈՒԻ ՊԱՀԱՆՋԸ

ա) Վարկառուն կարող է Բանկին ուղարկել գրավոր պահանջ՝ խնդրելով հետաձգել Ընդունված տրանշի հատկացումը: Գրավոր պահանջը Բանկի կողմից պետք է ստացվի Ընդունված տրանշի Հատկացման պլանավորված ամսաթվից առնվազն 5 (հինգ) Աշխատանքային օր առաջ, որում պետք է նշվի՝

i) արդյոք Վարկառուն ցանկանում է հետաձգել հատկացումն ամբողջությամբ, թե մասնակի, եւ եթե մասնակի, ապա պետք է նշվի հետաձգման ենթակա գումարը, եւ

ii) այն ամսաթիվը, մինչեւ որը Վարկառուն ցանկանում է հետաձգել վերը նշված գումարի հատկացումը (**Հատկացման պահանջվող հետաձգված ամսաթիվ**), որը պետք է լինի ոչ ավելի ուշ, քան՝

- 1) Հատկացման պլանավորված ամսաթվից 6 (վեց) ամիս հետո,
- 2) առաջին Հետվճարման ամսաթվից 30 (երեսուն) օր առաջ, եւ
- 3) Հասանելիության վերջնական ամսաթիվը.

բ) Այդպիսի գրավոր պահանջն ստանալուց հետո Բանկը հետաձգում է համապատասխան գումարի հատկացումը մինչեւ Հատկացման պահանջվող հետաձգված ամսաթիվը:

1.5.Ա(2) ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼԸ

ա) Ընդունված տրանշի հատկացումը հետաձգվում է, եթե 1.4 հոդվածում նշված՝ այդպիսի Ընդունված տրանշի հատկացման որեւէ պայման չի կատարվում՝

i) ոչ 1.4 հոդվածում այդպիսի պայմանի կատարման համար նշված ամսաթվին, եւ

ii) ոչ դրա՝ Հատկացման պլանավորված ամսաթվին (կամ եթե Հատկացման պլանավորված ամսաթիվը նախկինում հետաձգվել է, ապա հատկացման համար ակնկալվող ամսաթվին):

բ) Բանկը եւ Վարկառուն համաձայնեցնում են այն ամսաթիվը, մինչեւ որը հետաձգվելու է այդպիսի Ընդունված տրանշի հատկացումը (**Հատկացման համաձայնեցված հետաձգված ամսաթիվ**), որը պետք է լինի՝

i) ոչ շուտ, քան հատկացման բոլոր պայմանների կատարումից 6 (վեց) Աշխատանքային օր հետո, եւ

ii) ոչ ուշ, քան Հասանելիության վերջնական ամսաթիվը:

գ) Չսահմանափակելով 1.6.Բ հոդվածի համաձայն Վարկի չհատկացված մասն ամբողջությամբ կամ մասամբ կասեցնելու եւ (կամ) չեղարկելու Բանկի իրավունքը՝ Բանկը հետաձգում է այդպիսի Ընդունված տրանշի հատկացումը մինչեւ Հատկացման համաձայնեցված հետաձգված ամսաթիվը:

1.5.Ա(3) ՀԵՏԱԶԳՄԱՆ ՎՃԱՐԸ

Եթե Ընդունված տրանշի հատկացումը հետաձգվում է վերոնշյալ 1.5.Ա(1) կամ 1.5.Ա(2) կետերի համաձայն, ապա Վարկառուն վճարում է Հետաձգման վճարը:

1.5.Բ. 6 (վեց) ամսով հետաձգված հատկացման չեղարկումը

Եթե հատկացումը հետաձգվել է ընդհանուր ավելի քան 6 (վեց) ամսով՝ համաձայն 1.5.Ա հոդվածի, ապա Բանկը կարող է գրավոր ծանուցել Վարկառուին, որ այդպիսի հատկացումը չեղարկվում է, եւ այդ չեղարկումն ուժի մեջ է մտնում այդպիսի գրավոր ծանուցման ամսաթվից: Հատկացման գումարը, որը Բանկի կողմից չեղարկվել է սույն 1.5.Բ հոդվածի համաձայն, մնում է հատկացման համար հասանելի՝ համաձայն 1.2 հոդվածի:

1.6. Չեղարկումը եւ կասեցումը

1.6.Ա. Վարկառուի չեղարկելու իրավունքը

ա) Վարկառուն կարող է Բանկին ուղարկել գրավոր ծանուցում՝ խնդրելով չհատկացված Վարկի կամ դրա մասնաբաժնի չեղարկում:

բ) Վարկառուն իր գրավոր ծանուցման մեջ՝

i) պետք է նշի, թե արդյոք Վարկը չեղարկվում է ամբողջությամբ, թե մասամբ, եւ եթե մասամբ, ապա պետք է նշվի չեղարկման ենթակա Վարկի գումարը, եւ

ii) չպետք է խնդրի Ընդունված տրանշի որեւէ չեղարկում, որի Հատկացման պլանավորված ամսաթիվն ընկնում է այդպիսի գրավոր ծանուցման ամսաթվից 5 (հինգ) Աշխատանքային օրվա ընթացքում:

գ) Այդպիսի գրավոր ծանուցումն ստանալուց հետո Բանկն անմիջապես չեղարկում է Վարկի պահանջվող մասնաբաժինը:

1.6.Բ. Բանկի կասեցնելու եւ չեղարկելու իրավունքը

ա) Բանկը կարող է գրավոր ծանուցել Վարկառուին, որ Վարկի չհատկացված մասը կասեցվում եւ (կամ) (բացառությամբ Շուկայի ապակայունացման դեպքի) ամբողջությամբ կամ մասամբ չեղարկվում է ցանկացած ժամանակ, երբ տեղի է ունենում՝

i) Կանխավճարի դեպք,

ii) Պարտավորությունների չկատարման դեպք,

iii) դեպք կամ հանգամանք, որը ժամանակի ընթացքում կամ սույն Պայմանագրով նախատեսված ծանուցման կամ որեւէ որոշման կայացման հետեւանքով (կամ վերոշարադրյալ դեպքերի համակցության արդյունքում) կազմում է Կանխավճարի դեպք կամ Պարտավորությունների չկատարման դեպք,

iv) Էական բացասական փոփոխություն, կամ

v) Շուկայի ապակայունացման դեպք, եթե Բանկը չի ստացել Հատկացման ընդունում:

բ) Բանկի կողմից այդպիսի գրավոր ծանուցման ամսաթվից Վարկի համապատասխան մասնաբաժինն անմիջապես կասեցվում եւ (կամ) չեղարկվում է: Ցանկացած կասեցում շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ Բանկը չի դադարեցրել կասեցումը կամ չի չեղարկել կասեցված գումարը:

1.6.9. Տրանշի կասեցման եւ չեղարկման համար փոխհատուցումը

1.6.9(1) Կասեցումը

Եթե Բանկը կասեցնում է Ընդունված տրանշը փոխհատուցման ենթակա Կանխավճարի դեպքի կամ Պարտավորությունների չկատարման դեպքի կամ այնպիսի դեպքի կամ հանգամանքի առկայության դեպքում, որը ժամանակի ընթացքում կամ սույն Պայմանագրով նախատեսված ծանուցման կամ որեւէ որոշման կայացման հետեւանքով (կամ վերոշարադրյալ դեպքերի համակցության արդյունքում) կազմում է Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպք կամ Պարտավորությունների չկատարման դեպք, կամ Էական բացասական փոփոխություն տեղի ունենալու դեպքում, ապա Վարկառուն Բանկին վճարում է այդպիսի Ընդունված տրանշի գումարի վրա հաշվարկված Հետաձգման վճարը:

1.6.9(2) Չեղարկումը

ա) Եթե Ընդունված տրանշը, որը Ֆիքսված դրույքաչափով Տրանշ է (**Չեղարկված տրանշ**), չեղարկվում է՝

i) Վարկառուի կողմից՝ համաձայն 1.6.Ա հոդվածի, կամ

ii) Բանկի կողմից՝ Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպքի կամ այն հանգամանքի դեպքում, որը ժամանակի ընթացքում կամ սույն Պայմանագրով նախատեսված ծանուցման կամ որեւէ որոշման կայացման հետեւանքով (կամ վերոշարադրյալ դեպքերի համակցության արդյունքում) կազմում է Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպք, Էական բացասական փոփոխություն տեղի ունենալու դեպքում կամ չեղարկվում է 1.5.Բ հոդվածի համաձայն,

ապա Վարկառուն Բանկին վճարում է փոխհատուցում այդ Չեղարկված տրանշի մասով:

բ) Այդպիսի փոխհատուցումը՝

i) հաշվարկվում է՝ ենթադրելով, որ Չեղարկված տրանշը հատկացվել է մարվել է Հատկացման նույն պլանավորված ամսաթվին, կամ որքանով Տրանշի հատկացումը ներկայումս հետաձգված կամ կասեցված է, չեղարկման մասին ծանուցման ամսաթվին, եւ

ii) տրամադրվում է այն ավելի տոկոսի ընթացիկ արժեքի (հաշվարկված չեղարկման ամսաթվի դրությամբ)՝ Բանկի կողմից Վարկառուին ներկայացված գումարի չափով, եթե կա ավելի տոկոս՝

1) որը դրանից հետո կհաշվեգրվեր Չեղարկված տրանշի վրա սույն՝ 1.6.Գ(2) հոդվածի համաձայն չեղարկման ամսաթվից մինչեւ Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթիվը, եթե այդպիսիք կան, կամ մինչեւ Մարման ամսաթիվը, եթե այն չեղարկված չլիներ,

2) այն տոկոսների վրա, որոնք այդպես կհաշվեգրվեին այդ ժամանակահատվածում, եթե հաշվարկվեին Վերաբաշխման դրույքաչափով՝ հանած 0,19% (տասնինը բազիսային կետ):

Նշված ընթացիկ արժեքը հաշվարկվում է զեղչման դրույքաչափով, որը հավասար է կիրառելի Տրանշի յուրաքանչյուր համապատասխան Վճարման ամսաթվի դրությամբ կիրառվող Վերաբաշխման դրույքաչափին:

գ) Եթե բանկը չեղարկում է որեւէ Ընդունված տրանշ Պարտավորությունների չկատարման դեպքում, ապա Վարկառուն Բանկին փոխհատուցում է 10.3 հոդվածին համապատասխան:

1.7. Վարկի ժամկետի ավարտից հետո չեղարկումը

Հասանելիության վերջնական ամսաթվին հաջորդող օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի կողմից գրավոր այլ բան է ծանուցվել Վարկառուին,

Վարկի ցանկացած մաս, որի վերաբերյալ 1.2.9 հոդվածին համապատասխան չի ստացվել Հատկացման ընդունում, ինքնաբերաբար չեղարկվում է՝ առանց Բանկի կողմից Վարկառուին որեւէ լրացուցիչ ծանուցման եւ առանց որեւէ Կողմի կողմից բխող որեւէ պարտավորության:

1.8. Գնահատման վճարը

Վարկառուն Բանկին վճարում է կամ ապահովում է Բանկին 50,000.00 եվրո (հիսուն հազար եվրո) գնահատման վճարի վճարումը՝ Նախագծի մասով Բանկի կողմից իրականացված գնահատման համար: Այդպիսի գնահատման վճարը պետք է վճարվի Պայմանագրի ուժի մեջ մտնելուց 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե՝ Վարկը 1.6 հոդվածի համաձայն մինչեւ Հասանելիության վերջնական ամսաթիվը չեղարկվում է, ապա Վարկառուն գնահատման վճարը Բանկին վճարում է այդ չեղարկման ամսաթվին:

1.9. Ջօգտագործման միջնորդավճարը

ա) Վարկառուն Բանկին վճարում է ջօգտագործման միջնորդավճար, որը հաշվարկվում է Վարկի օրական ջօգտագործված եւ չչեղարկված մնացորդի հիման վրա՝ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո 36 (երեսունվեց) ամիս անց ընկած ամսաթվից մինչեւ Հասանելիության վերջնական ամսաթիվը տարեկան 0.10% (տասը բազիսային կետ) տոկոսադրույքով:

բ) Կուտակված ջօգտագործման միջնորդավճարը Վարկառուի կողմից վճարվում է՝

i) Յուրաքանչյուր Վճարման ամսաթվին մինչև Հասանելիության վերջնական ամսաթիվը, եւ

ii) Հասանելիության վերջնական ամսաթվին, կամ եթե Վարկը 1.6 հոդվածի համաձայն ամբողջությամբ չեղարկվել է մինչեւ Հասանելիության

վերջնական ամսաթիվը, ապա վերոհիշյալ (i) կետում նշված վճարման ամսաթվին՝ չեղյալ հայտարարելու ամսաթվից անմիջապես հետո:

գ) Միջնորդավճարը հաշվարկվում է 360 (երեք հարյուր վաթսուն) օր տեւողությամբ տարվա օրերի եւ անցած օրերի քանակի տոկոսների հաշվարկման բազայի կիրառմամբ:

դ) Եթե վճարման ենթակա չօգտագործման միջնորդավճարի վճարման ամսաթիվը Համապատասխան Աշխատանքային օր չէ, ապա վճարումը կատարվում է առկայության դեպքում այդ ամսվա Համապատասխան Աշխատանքային օր հանդիսացող հաջորդ օրը, կամ այդպիսի օրվա բացակայության դեպքում՝ Համապատասխան Աշխատանքային օր հանդիսացող ամենամոտ նախորդ օրը, բոլոր դեպքերում՝ վճարման ենթակա չօգտագործման միջնորդավճարի չափի համապատասխան ճշգրտումով:

Սույն՝ 1.9 հոդվածով նախատեսված վճարման ենթակա գումարները (Չօգտագործման միջնորդավճար) պետք է վճարվեն Վարկի արժույթով:

1.10. 1.5 եւ 1.6 հոդվածներով նախատեսված վճարման ենթակա գումարները

1.5 եւ 1.6 հոդվածներով նախատեսված վճարման ենթակա գումարները վճարվում են՝

ա) եվրոյով, եւ

բ) Վարկառուի կողմից Բանկի պահանջն ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում կամ Բանկի պահանջով սահմանված ցանկացած ավելի երկար ժամկետում:

1.11. Տրամադրման ընթացակարգը

1.11.Ա. Տրամադրման հայտը

ա) Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո 4 (չորս) տարվա ընթացքում **(Տրամադրման ժամանակահատված)** Վարկառուն կարող է Բանկ ներկայացնել տրամադրման հայտ (**Տրամադրման հայտ**):

բ) Յուրաքանչյուր Տրամադրման հայտ ուղեկցվում է նախագծի նկարագրությամբ՝ սույն Պայմանագրի «Ա» հավելվածում ներկայացված աղյուսակների ձեռով, որոնք պարունակում են տեղեկություններ տեխնիկական, բնապահպանական եւ տնտեսական չափորոշիչների վերաբերյալ, ներառյալ՝ գնումների պլանը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (կիրառելիության դեպքում) եւ անհրաժեշտության դեպքում՝ բնապահպանական տարածքների վրա ազդեցության գնահատման ամփոփ հաշվետվությունը, ինչպես նաեւ Բանկի կողմից պահանջվող այլ վերաբերելի տեղեկություններ:

գ) Փոխառությունը կարող է տրամադրվել բացառապես Տեխնիկական նկարագրում ֆինանսավորման համար համապատասխանող համարվող Ենթանախագծերի համար: Որպեսզի Ենթանախագիծը համապատասխանի սույնով նախատեսված ֆինանսավորմանը, Վարկառուն պետք է պահպանի սույն 1.11 հոդվածով եւ Տեխնիկական նկարագրով նախատեսված տրամադրման ընթացակարգը:

դ) Փոխառությունը տրամադրվում է այն Ենթանախագծերին, որոնք համաձայնեցվել են Բանկի հետ Տեխնիկական նկարագրում սահմանված Բանկի շրջանակային փոխառությունների տրամադրման հարցի ուսումնասիրության ընթացակարգի սկզբունքներին համապատասխան՝ պայմանով, որ Բանկը հավաստիացել է, որ այդ Ենթանախագծերի մասին առկա են բավարար տեղեկություններ:

ե) Բանկի ֆինանսական միջոցները տրամադրվում են համապատասխան Ենթանախագծերին՝ Ենթանախագծերի ծավալին համապատասխանեցված ընթացակարգերով եւ Բանկի՝ շրջանակային փոխառությունների համար գործող

ընթացակարգերին համապատասխան՝ Տեխնիկական նկարագրում սահմանված կարգով:

զ) Վարկառուն Բանկին տրամադրում է Ենթանախագծերի վերաբերյալ այնպիսի լրացուցիչ տեղեկություններ, որոնք Բանկն իր հայեցողությամբ կարող է պահանջել:

է) Բանկից փոխառության ֆինանսավորում ստանալու համար Վարկառուն պետք է ստուգի Ենթանախագծերի՝ Բանկի համապատասխան եւ կիրառելի քաղաքականություններին եւ ուղեցույցներին համապատասխանությունը: Բոլոր Ենթանախագծերը պետք է տեխնիկապես, տնտեսապես եւ ֆինանսապես լինեն կենսունակ եւ կայուն, համապատասխանեն Բանկի բնապահպանական եւ սոցիալական չափանիշներին եւ իրականացվեն Բանկի գնումների ուղեցույցում նկարագրված ընթացակարգերին համապատասխան:

ը) Վարկառուն յուրաքանչյուր Տրամադրման հայտի հետ ներկայացնում է այդ Տրամադրման հայտում ընդգրկված Ենթանախագծի գնումների պլանը՝ Բանկի համար ընդունելի ձեռաչափով եւ բովանդակությամբ:

թ) Բանկն իրավունք է վերապահում վերանայելու տրամադրման ընթացակարգը եւ կարող է, Վարկառուին ծանուցելով, փոփոխել տրամադրման ընթացակարգը՝ Բանկի քաղաքականություններին համապատասխանեցնելու եւ Նախագծի իրականացման կարողությունների եւ կատարողականի վերանայման արդյունքները արտացոլելու համար: Նման դեպքում Բանկն այդ մասին տեղեկացնում է Վարկառուին, եւ Վարկառուն անհապաղ համապատասխան կերպով հարմարեցնում է տրամադրման իր ներքին ընթացակարգերը:

1.11.Բ. Տրամադրման մասին գրությունը

ա) Բանկը լիակատար հայեցողություն ունի հաստատելու կամ մերժելու ներկայացված Տրամադրման հայտը Ենթանախագծերի այնպիսի ուսումնասիրությունից հետո, որն այն անհրաժեշտ կհամարի, եւ հաստատման

դեպքում հայեցողություն ունի ներկայացնելու տրամադրման մասին գրություն (**Տրամադրման մասին գրություն**)՝ Վարկառուին տեղեկացնելով ներկայացված Ենթանախագծերի եւ այդ Ենթանախագծին եվրոյով տրամադրված գումարի հաստատման մասին: Այն դեպքում, երբ Բանկը չի հաստատում ներկայացված Տրամադրման հայտը, Բանկն այդ մասին տեղեկացնում է Վարկառուին:

1.12. Վերահատկացման ընթացակարգը

ա) Մինչեւ Տրամադրման Ժամանակահատվածի ավարտը Վարկառուն կարող է Բանկին ներկայացված գրավոր պահանջով, որը պետք է ներառի դրա պատճառները, առաջարկել սույն 1.12 հոդվածի դրույթներին համապատասխան վերատրամադրել Չմարված փոխառության ցանկացած մաս, որը տրամադրվել է, բայց չի օգտագործվել Վարկառուի կողմից Ենթանախագծի համար, կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի տրամադրվել ամբողջությամբ:

բ) Բանկը կարող է իր հայեցողությամբ ընդունել Վարկառուի վերատրամադրման առաջարկը եւ վերատրամադրել Չմարված փոխառության ցանկացած մասնաբաժին՝ 1.11 հոդվածի դրույթներին համապատասխան, ինչպես նաեւ այդ մասին պետք է տեղեկացնի Վարկառուին էլեկտրոնային փոստով Վարկառուի՝ Ենթանախագծի նկարագրությունը եւ վերահատկացման առաջարկը ստանալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում: Վերահատկացված գումարները ներառվում են 1.11.Բ հոդվածում նշված Տրամադրման մասին գրության մեջ:

գ) Եթե վերատրամադրումը հնարավոր չէ կամ հնարավոր է միայն մասամբ, ապա Բանկից ծանուցումն ստանալուց հետո Վարկառուն 4.3 հոդվածի համաձայն Բանկին կանխավճարի տեսքով անհապաղ վճարում է այն Չմարված փոխառության մասը, որը Բանկը հատկացրել է՝ հաշվի առնելով սկզբնական տրամադրումը:

դ) Բանկի գրավոր դիմումի համաձայն Վարկառուն առաջարկում է վերատրամադրել Ենթանախագծի համար 1.11 հոդվածում նկարագրված ընթացակարգերին համապատասխան տրամադրված Չմարված փոխառության

մասը, եթե այդ Ենթանախագիծը, Բանկի կարծիքով, չի կարող ֆինանսավորվել Բանկի կողմից՝ համաձայն Բանկի կանոնադրության, քաղաքականության կամ ուղեցույցների կամ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 309-րդ հոդվածի, կամ եթե Ենթանախագիծը այլևս չի համապատասխանում սույն Պայմանագրի պահանջներին: Եթե Բանկի գրավոր դիմումով նախատեսված ժամկետներում Վարկառուն չկարողանա փոխարինել այդ Ենթանախագիծը, ապա Վարկառուն մարում է Չմարված փոխառությունը ամբողջությամբ կամ մասամբ՝ սույն Պայմանագրի 4.3 հոդվածին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 2

Փոխառությունը

2.1. Փոխառության գումարի չափը

Փոխառությունը ներառում է Բանկի կողմից Վարկի շրջանակներում հատկացված տրանշների համախառն գումարը, որը հաստատվում է Բանկի կողմից՝ համաձայն 2.3 հոդվածի:

2.2. Վճարումների արժույթը

Վարկառուն վճարում է տոկոսներ, մայր գումար եւ վճարման ենթակա այլ վճարներ յուրաքանչյուր Տրանշի մասով այն արժույթով, որով հատկացվել է այդ Տրանշը:

Մյուս վճարումներն առկայության դեպքում կատարվում են Բանկի կողմից սահմանված արժույթով՝ հաշվի առնելով այդ վճարման միջոցով փոխհատուցման ենթակա ծախսերի արժույթը:

2.3. Բանկի կողմից հաստատումը

Բանկը Վարկառուին է հանձնում 4.1 հոդվածում նշված ամորտիզացման աղյուսակը, եթե այդպիսին կա, որը ցույց է տալիս Հատկացման ամսաթիվը,

արժույթը, հատկացված գումարը, մարման ժամկետները եւ տոկոսադրույքը՝ յուրաքանչյուր Տրանշի համար՝ ոչ ուշ, քան այդ Տրանշի Հատկացման պլանավորված ամսաթվից 10 (տասը) օրացուցային օր հետո:

ՀՈԴՎԱԾ 3

Տոկոսներ

3.1. Տոկոսադրույքը

3.1.Ա. Ֆիքսված դրույքաչափով տրանշները

Վարկառուն յուրաքանչյուր Ֆիքսված դրույքաչափով տրանշի չմարված մնացորդի նկատմամբ վճարում է տոկոսներ Ֆիքսված դրույքաչափով, յուրաքանչյուր եռամսյակ կամ յուրաքանչյուր կիսամյակ՝ ապառքներով, համապատասխան Վճարման ամսաթվերին, ինչպես նշված է Հատկացման առաջարկում, որն սկսվում է Տրանշի Հատկացման ամսաթվին հաջորդող առաջին այդպիսի Վճարման ամսաթվին: Եթե Հատկացման ամսաթվից մինչեւ առաջին Վճարման ամսաթիվն ընկած ժամանակահատվածը 15 (տասնհինգ) օր է կամ ավելի քիչ, ապա այդ ժամանակահատվածում հաշվարկված տոկոսների վճարումը հետաձգվում է մինչեւ հաջորդ Վճարման ամսաթիվը:

Տոկոսը հաշվարկվում է 5.1(ա) հոդվածի հիման վրա:

3.1.Բ. Լողացող դրույքաչափով տրանշները

Վարկառուն յուրաքանչյուր Լողացող դրույքաչափով տրանշի չմարված մնացորդի նկատմամբ վճարում է տոկոսներ Լողացող դրույքաչափով, յուրաքանչյուր եռամսյակ կամ յուրաքանչյուր կիսամյակ՝ ապառքներով, համապատասխան Վճարման ամսաթվերին, ինչպես նշված է Հատկացման առաջարկում, որն սկսվում է Տրանշի Հատկացման ամսաթվին հաջորդող առաջին այդպիսի Վճարման ամսաթվին: Եթե Հատկացման ամսաթվից մինչեւ առաջին Վճարման ամսաթիվն ընկած ժամանակահատվածը 15 (տասնհինգ) օր է

կամ ավելի քիչ, ապա այդ ժամանակահատվածում հաշվարկված տոկոսների վճարումը հետաձգվում է մինչև հաջորդ Վճարման ամսաթիվը:

Լողացող դրույքաչափի մասին Բանկը Վարկառուին ծանուցում է Լողացող դրույքաչափի յուրաքանչյուր Սկզբնական ժամանակահատվածի մեկնարկից հետո 10 (տասը) օրվա ընթացքում:

Եթե համաձայն 1.5 եւ 1.6 հոդվածների ցանկացած Լողացող դրույքաչափով տրանշի հատկացում տեղի է ունենում Հատկացման պլանավորված ամսաթվից հետո, ապա ԵՎՐԻԲՈՐ-ը, որը կիրառելի է առաջին Լողացող դրույքաչափով Սկզբնական ժամանակահատվածի նկատմամբ, «Բ» հավելվածին համապատասխան սահմանվում է Լողացող դրույքաչափով Սկզբնական ժամանակահատվածի համար, որը մեկնարկում է Հատկացման ամսաթվին, այլ ոչ թե Հատկացման պլանավորված ամսաթվին:

Յուրաքանչյուր Լողացող դրույքաչափի Սկզբնական ժամանակահատվածի առնչությամբ հաշվարկվում է տոկոս՝ 5.1(բ) հոդվածի հիման վրա:

3.1.9. Տրանշների վերանայումը կամ փոխարկումը

Եթե Վարկառուն իրացնում է Տրանշի տոկոսադրույքի բազայի վերանայման կամ փոխարկման տարբերակը, ապա Տոկոսի վերանայումը/փոխարկումն ուժի մեջ մտնելու ամսաթվից (Դ հավելվածում սահմանված կարգին համապատասխան) այն վճարում է տոկոս՝ Դ հավելվածում նախատեսված դրույթներին համապատասխան սահմանված դրույքաչափով:

3.2. Ժամկետանց գումարների նկատմամբ տոկոսը

Չսահմանափակելով 10-րդ հոդվածը եւ 3.1 հոդվածից բացառության կարգով, եթե Վարկառուի կողմից սույն Պայմանագրի համաձայն վճարման ենթակա որեւէ գումար ժամանակին չի վճարվում, ապա ժամկետանց ցանկացած գումարի վրա սույն Պայմանագրի պայմանների համաձայն հաշվեգրվում է տոկոս՝ վճարման ենթակա ամսաթվից մինչև փաստացի վճարման ամսաթիվը՝ տարեկան դրույքաչափով, որը հավասար է հետեւյալին.

ա) Լողացող դրույքաչափով տրանշների հետ կապված ժամկետանց գումարների համար՝ կիրառելի Լողացող դրույքաչափ գումարած 2% (200 բազիսային կետ),

բ) Ֆիքսված դրույքաչափով տրանշների հետ կապված ժամկետանց գումարների համար՝ հետեւյալներից առավել մեծը.

i) կիրառելի Ֆիքսված դրույքաչափ գումարած 2% (200 բազիսային կետ), կամ

ii) ԵՎՐԻԲՈՐ (մեկ ամիս) գումարած 2% (200 բազիսային կետ), եւ

գ) վերելում՝ «ա» կամ «բ» կետում նախատեսված ժամկետանց գումարներից բացի այլ ժամկետանց գումարների համար՝ ԵՎՐԻԲՈՐ (մեկ ամիս) գումարած 2% (200 բազիսային կետ),

Եւ ենթակա է վճարման Բանկի պահանջին համապատասխան: Սույն 3.2 հոդվածի «բ» եւ «գ» կետերի առնչությամբ ԵՎՐԻԲՈՐԸ որոշելու նպատակով Բ հավելվածի իմաստով համապատասխան ժամանակահատվածները վճարման ենթակա օրը սկսվող հաջորդական մեկամսյա (1-ամսյա) ժամանակահատվածներ են: Ցանկացած չվճարված, սակայն վճարման ենթակա տոկոս կարող է կապիտալացվել Լյուքսեմբուրգի քաղաքացիական օրենսգրքի 1154-րդ հոդվածին համապատասխան: Կասկածից խուսափելու համար տոկոսի կապիտալացումը տեղի է ունենում միայն վճարման ենթակա, սակայն մեկ տարուց ավելի չվճարված տոկոսի դեպքում: Վարկառուն սույնով նախապես համաձայնում է, որ վճարման ենթակա մեկ տարուց ավելի չվճարված տոկոսը հաշվարկվի բարդ տոկոսի բանաձեւով, եւ որ կապիտալացման դեպքում այդ չվճարված տոկոսի նկատմամբ իր հերթին հաշվարկվի տոկոս՝ սույն 3.2 հոդվածում սահմանված տոկոսադրույքով:

Չնայած վերոնշյալ 3.2(գ) հոդվածին, եթե ժամկետանց գումարն այնպիսի արժույթով է, որի համար սույն Պայմանագրով ԵՎՐԻԲՈՐ սահմանված չէ, ապա կիրառվում է համապատասխան միջբանկային դրույքաչափը կամ ինչպես Բանկի

կողմից սահմանված է՝ համապատասխան ռիսկերից զերծ դրույքաչափը, որը սովորաբար պահպանվում է Բանկի կողմից այդ արժույթով գործարքների համար՝ գումարած 2% (200 բազիսային կետ)՝ հաշվարկված այդ դրույքաչափի համար շուկայական գործելակերպին համապատասխան:

3.3. Շուկայի ապակայունացման դեպքը

Եթե որեւէ պահի՝

ա) Բանկի կողմից Տրանշի առնչությամբ Հատկացումների ընդունումից հետո, եւ

բ) մինչեւ եվրոյով հատկացման ենթակա Տրանշների համար Հատկացման պլանավորված ամսաթվից 20 (քսան) Աշխատանքային օր առաջ ընկած օրը

տեղի է ունենում Շուկայի ապակայունացման դեպք, ապա Բանկը կարող է Վարկառուին ծանուցել, որ սույն 3.3 հոդվածն ուժի մեջ է մտել:

Այդ Ընդունված տրանշի նկատմամբ մինչեւ Մարման ամսաթիվը կամ Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթիվը առկայության դեպքում կիրառելի տոկոսադրույք է համարվում այն տարեկան տոկոսադրույքը (արտահայտվում է տարեկան տոկոսադրույքով), որը Բանկի կողմից սահմանվում է որպես համապատասխան Տրանշը ֆինանսավորելու համար Բանկի կատարած ընդհանուր ծախս՝ հիմք ընդունելով այդ պահին գործող՝ ներքին կանոնակարգին համապատասխան ձեւավորված Բանկի բազային դրույքաչափը կամ Բանկի կողմից ողջամտորեն սահմանված՝ դրույքաչափի որոշման այլընտրանքային մեթոդը:

Վարկառուն իրավունք ունի ծանուցման մեջ նշված վերջնաժամկետի ընթացքում գրավոր հրաժարվելու այդպիսի հատկացումից եւ կրելու արդյունքում առաջացած ծախսերը, եթե առկա են, որի դեպքում Բանկը չի կատարում հատկացումը, եւ Վարկի համապատասխան մասնաբաժինը շարունակում է 1.2 հոդվածի համաձայն հատկացման համար հասանելի լինել: Եթե Վարկառուն

Ժամանակին հատկացումից չի հրաժարվում, ապա Կողմերը համաձայնում են, որ եվրոյով կատարված հատկացումը եւ դրա պայմանները բոլոր Կողմերի համար լիովին պարտադիր են: Բանկի կողմից նախկինում ընդունված Սպրեդը կամ Ֆիքսված դրույքաչափն այլեւս կիրառելի չէ:

ՀՈԴՎԱԾ 4

Հետվճարումը

4.1. Բնականոն հետվճարումը

4.1.Ա. Մաս-մաս մարումներով հետվճարումը

ա) Վարկառուն յուրաքանչյուր Տրանշ հետ է վճարում մաս-մաս վճարումներով, համապատասխան Հատկացման առաջարկում նշված Հետվճարման ամսաթվերին՝ 2.3 հոդվածի համաձայն տրամադրված ամորտիզացման աղյուսակի պայմաններին համապատասխան:

բ) Յուրաքանչյուր ամորտիզացման աղյուսակ կազմվում է այն հիմքով, որ՝

i) առանց Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվի Ֆիքսված դրույքաչափով տրանշների դեպքում հետվճարումը կատարվում է եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան կտրվածքով, մայր գումարի հավասար մաս-մաս վճարումներով կամ մայր գումարի եւ տոկոսի անփոփոխ մաս-մաս վճարումներով,

ii) Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվով Ֆիքսված դրույքաչափով տրանշների դեպքում հետվճարումը կատարվում է մայր գումարի հավասար եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան մաս-մաս վճարումներով,

iii) յուրաքանչյուր Տրանշի առաջին Հետվճարման ամսաթիվն ավելի վաղ չէ, քան Հատկացման պլանավորված ամսաթվից 30 (երեսուն) օր առաջ ընկած օրը, եւ ավելի ուշ չէ, քան Տրանշի Հատկացման պլանավորված ամսաթվի 5-րդ տարելիցին անմիջապես հաջորդող Հետվճարման ամսաթիվը, եւ

iv) յուրաքանչյուր Տրանշի վերջին Հետվճարման ամսաթիվն ավելի վաղ չէ, քան Հատկացման պլանավորված ամսաթվից հետո 4 (չորս) տարին, եւ ավելի ուշ չէ, քան դրանից հետո 20 (քսան) տարին:

4.2. Կանխավոր կանխավճարը

4.2.Ա. Կանխավճարի տարբերակը

4.2.Բ, 4.2.Գ եւ 4.4 հոդվածներին համապատասխան՝ Վարկառուն կարող է ցանկացած Տրանշի համար ամբողջական կամ մասնակի կանխավճար տալ հաշվեգրված տոկոսի եւ փոխհատուցումների հետ միասին, եթե առկա են՝ ներկայացնելով Կանխավճարի մասին դիմում՝ ոչ շուտ, քան 60 (վաթսուն) եւ ոչ ուշ, քան 30 (երեսուն) օրացուցային օր առաջ ծանուցմամբ, նշելով՝

- ա) Կանխավճարի գումարը,
- բ) Կանխավճարի ամսաթիվը,
- գ) ըստ կիրառելիության՝ Կանխավճարի գումարի կիրառման եղանակի ընտրությունը՝ 5.5.Գ(ա) հոդվածին համապատասխան, եւ
- դ) Պայմանագրի համարը:

Կանխավճարի մասին դիմումը ենթակա չէ հետկանչման:

4.2.Բ. Կանխավճարի փոխհատուցումը

4.2.Բ(1) ՖԻՔՍՎԱԾ ԴՐՈՒՅՔԱՉԱՓՈՎ ՏՐԱՆՇԸ

Ստորեւ ներկայացված 4.2.Բ(3) հոդվածին համապատասխան, եթե Վարկառուն կատարում է Ֆիքսված դրույքաչափով տրանշի կանխավճար, ապա Վարկառուն Բանկին Կանխավճարի ամսաթվին վճարում է Կանխավճարի

փոխհատուցում այն Ֆիքսված դրույքաչափով տրանշի համար, որով կանխավճար է կատարվում:

4.2.Բ(2) ԼՈՂԱՅՈՂ ԴՐՈՒՅՔԱԶԱՓՈՎ ՏՐԱՆՇԸ

Ստորել ներկայացված 4.2.Բ(3) հոդվածին համապատասխան՝ Վարկառուն կարող է Լողացող դրույքաչափով տրանշի համար կանխավճար կատարել առանց փոխհատուցման:

4.2.Բ(3) ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ/ՓՈԽԱՐԿՈՒՄԸ

Տրանշի համար կանխավճարի կատարումը դրա Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվին կարող է իրականացվել առանց փոխհատուցման, եթե Վարկառուն Դ հավելվածի համաձայն Տոկոսի վերանայման/փոխարկման առաջարկի համաձայն չի ընդունել Ֆիքսված դրույքաչափ:

4.2.Գ. Կանխավճարի կատարման մեխանիզմները

Վարկառուի կողմից Բանկին Կանխավճարի մասին դիմում ներկայացվելուց հետո Բանկը Վարկառուին ոչ ուշ, քան Կանխավճարի ամսաթվից 15 (տասնհինգ) օր առաջ Կանխավճարի մասին առաջարկ է ուղարկում: Կանխավճարի առաջարկում նշվում են Կանխավճարի գումարը, Կանխավճարի ամսաթիվը, դրա վրա վճարման ենթակա հաշվեգրված տոկոսը, 4.2.Բ(1) հոդվածի համաձայն վճարման ենթակա՝ Կանխավճարի փոխհատուցումը, 4.2.Դ հոդվածով սահմանված վճարը, առկայության դեպքում, Կանխավճարի գումարի կիրառման եղանակը եւ այն վերջնաժամկետը, մինչեւ որը Վարկառուն կարող է ընդունել Կանխավճարի մասին առաջարկը:

Եթե Վարկառուն Կանխավճարի մասին առաջարկն ընդունում է ոչ ուշ, քան մինչեւ դրանում նշված վերջնաժամկետը, ապա Բանկը Վարկառուին ոչ ուշ, քան Կանխավճարի համապատասխան ամսաթվից 10 (տասը) օր առաջ Կանխավճարի մասին ծանուցում է ուղարկում: Եթե Վարկառուն ժամանակին չի ընդունում

Կանխավճարի մասին առաջարկը, ապա Վարկառուն այդպիսի Ֆիքսված դրույքաչափով տրանշի համար չի կարող կանխավճար կատարել:

Վարկառուի կողմից Բանկին Լողացող դրույքաչափով Տրանշի համար Կանխավճարի մասին դիմում ներկայացվելուց հետո Բանկը Վարկառուին ոչ ուշ, քան Կանխավճարի ամսաթվից 10 (տասը) օր առաջ Կանխավճարի մասին ծանուցում է ուղարկում:

Վարկառուն Կանխավճարի մասին ծանուցման մեջ նշված գումարը վճարում է Կանխավճարի համապատասխան ամսաթվին:

4.2.Դ. Վարչական վճարը

Եթե Բանկն իր միանձնյա հայեցողությամբ Կանխավճարի մասին դիմումը բացառության կարգով ընդունում է 30 (երեսուն) օրացուցային օրվանից պակաս օր առաջ արված նախնական ծանուցմամբ, ապա Վարկառուն Բանկին վճարում է 10,000.00 եվրոյի (տասը հազար եվրո) չափով վճար յուրաքանչյուր Տրանշի համար, որի մասով մասնակի կամ ամբողջական կանխավճար է պահանջվում՝ հաշվի առնելով նման կամավոր կանխավճարի հետ կապված Բանկի կրած վարչական ծախսերը: Այդ դեպքում Բանկը պարտավոր չէ պահպանել սույն Պայմանագրի համաձայն կիրառելի Կանխավճարի մասին առաջարկ եւ (կամ) Կանխավճարի մասին ծանուցում ուղարկելու վերջնաժամկետները:

4.3. Պարտադիր կանխավճարը եւ չեղարկումը

4.3.Ա. Կանխավճարի դեպքերը

4.3.Ա(1) ՆԱԽԱԳԾԻ ԾԱԽՍԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԴԵՊՔԸ

ա) Վարկառուն Բանկին անհապաղ տեղեկացնում է, եթե տեղի է ունենում կամ հավանական է, որ տեղի կունենա Նախագծի ծախսերի կրճատման դեպք: Բանկը Նախագծի ծախսերի կրճատման դեպք տեղի ունենալուց հետո ցանկացած պահի կարող է Վարկառուին ծանուցելու միջոցով չեղարկել Վարկի չհատկացված մասնաբաժինը եւ (կամ) պահանջել Չմարված փոխառության

կանխավճար մինչեւ այն գումարի չափով, որով Վարկը գերազանցում է ստորեւ ներկայացված «գ» կետում նշված սահմանաչափը (սահմանաչափերը) հաշվեգրված տոկոսների եւ սույն Պայմանագրի համաձայն Չմարված փոխառության՝ կանխավճարի տեսքով վճարման ենթակա մասնաբաժնի մասով բոլոր այլ հաշվեգրված եւ չմարված գումարների հետ միասին:

բ) Վարկառուն պահանջված գումարի վճարումը կատարում է Բանկի կողմից նշված ամսաթվին, որը ոչ պակաս, քան պահանջը ներկայացվելու ամսաթվից 30 (երեսուն) օր հետո է:

գ) Սույն հոդվածի նպատակներով «**Նախագծի ծախսերի կրճատման դեպք**» նշանակում է, որ Նախագծի ընդհանուր ծախսը Նախաբանի «բ» կետում նշված թվից նվազում է այնքանով, որ Վարկի գումարը գերազանցում է (գերազանցում է՝ հաշվի առնելով սույն Նախագծի համար Բանկի կողմից տրամադրված մյուս վարկերը) Նախագծի այդ ընդհանուր ծախսերի 100%-ը (հարյուր տոկոսը), այդ թվում՝ Նախագծի համար Եվրոպական միությունից ստացված մյուս ֆինանսական միջոցների գումարը գումարվելու դեպքում:

4.3.Ա(2) ՈՉ ԵՆԲ-Ի ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԴԵՊՔԸ

ա) Վարկառուն Բանկին անհապաղ տեղեկացնում է, եթե տեղի է ունենում կամ հավանական է, որ տեղի կունենա Ոչ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման կանխավճարի դեպք: Բանկը Ոչ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման կանխավճարի դեպք տեղի ունենալուց հետո ցանկացած պահի կարող է Վարկառուին ծանուցելու միջոցով չեղարկել Վարկի չհատկացված մասնաբաժինը եւ պահանջել Չմարված փոխառության կանխավճար հաշվեգրված տոկոսների եւ սույն Պայմանագրի համաձայն Չմարված փոխառության՝ կանխավճարի տեսքով վճարման ենթակա մասնաբաժնի մասով բոլոր այլ հաշվեգրված եւ չմարված գումարների հետ միասին:

բ) Վարկի այն մասնաբաժինը, որը Բանկը կարող է չեղարկել, եւ Չմարված փոխառության մասնաբաժինը, որի համար Բանկը կարող է պահանջել կանխավճարի տեսքով վճարում կատարել, նույնն են, ինչ այն մասնաբաժինը, որը Ոչ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման կանխավճարի տեսքով վճարված մասնաբաժինն ունի Ոչ ԵՆԲ-ի կողմից ամբողջ ֆինանսավորման չմարված գումարի հանրագումարի նկատմամբ:

գ) Վարկառուն պահանջված գումարի վճարումը կատարում է Բանկի կողմից նշված ամսաթվին, եւ այդ ամսաթիվը ոչ պակաս, քան պահանջը ներկայացվելու ամսաթվից 30 (երեսուն) օր հետո է:

դ) «ա» կետը չի կիրառվում Ոչ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման մասով որեւէ կամավոր կանխավճարի (կամ վերագնման կամ չեղարկման՝ ըստ կոնկրետ դեպքի) նկատմամբ, որը՝

i) կատարվել է Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ,

ii) կատարվել է վերականգնվող վարկային գործիքի միջոցով,

iii) կատարվել է որեւէ ֆինանսական պարտքից ստացված շահույթից, որն ունի առնվազն այդ Ոչ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման կանխավճարի լրացած ժամկետին հավասար ժամկետ:

ե) Սույն հոդվածի նպատակներով՝

i) **«Ոչ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման կանխավճարի դեպք»** նշանակում է ցանկացած դեպք, երբ Վարկառուն կամավոր կանխավճարի տեսքով կատարում է (կասկածից խուսափելու համար այդ կանխավճարը ներառում է վարկառուի ցանկացած պարտավորության կամավոր վերագնում կամ չեղարկում՝ ըստ կոնկրետ դեպքի) Ոչ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման ամբողջական կամ մասնակի վճարում, եւ

ii) **«Ոչ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորում»** նշանակում է Բանկի կողմից Վարկառուին տրամադրված ցանկացած ֆինանսական պարտք (բացի

Փոխառությունից եւ դրա առջեւ ունեցած ցանկացած այլ ուղղակի ֆինանսական պարտքից կամ Վարկառուի համար սկզբնապես 3 (երեք) տարի ժամկետով հասանելի դարձված գումարը վճարելու կամ հետ վճարելու մասով ցանկացած այլ պարտավորությունից):

4.3.Ա(3) ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ

Վարկառուն Բանկին անհապաղ տեղեկացնում է, եթե տեղի է ունենում կամ հավանական է, որ տեղի կունենա Օրենքի փոփոխության դեպք: Այդ դեպքում, կամ եթե Բանկը հիմնավոր պատճառ ունի կարծելու, որ տեղի է ունեցել կամ շուտով տեղի է ունենալու Օրենքի փոփոխության դեպք, Բանկը կարող է պահանջել, որ Վարկառուն խորհրդակցի իր հետ: Այդ խորհրդակցությունը տեղի է ունենում Բանկի կողմից պահանջը ներկայացվելու ամսաթվից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում: Եթե խորհրդակցություն անցկացնելու այդ պահանջը ներկայացվելու ամսաթվից հետո 30 (երեսուն) օրը լրանալուց հետո Բանկն այն կարծիքին է, որ՝

ա) այդ Օրենքի փոփոխության դեպքն էականորեն կվնասի Վարկառուի՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելու կարողությունը, եւ

բ) այդ Օրենքի փոփոխության դեպքի հետեւանքները չեն կարող մեղմվել իր համար բավարար կերպով,

ապա Բանկը կարող է Վարկառուին ծանուցելու միջոցով չեղարկել Վարկի չհատկացված մասնաբաժինը եւ (կամ) պահանջել Չմարված փոխառության կանխավճար հաշվեգրված տոկոսների եւ սույն Պայմանագրի համաձայն հաշվեգրված եւ չմարված բոլոր այլ գումարների հետ միասին:

Վարկառուն պահանջված գումարի վճարումը կատարում է Բանկի կողմից նշված ամսաթվին, եւ այդ ամսաթիվը ոչ պակաս, քան պահանջը ներկայացվելու ամսաթվից 30 (երեսուն) օր հետո է:

Սույն հոդվածի նպատակներով «**Օրենքի փոփոխության դեպք**» նշանակում է որեւէ օրենքի, կանոնի կամ կարգավորման (կամ որեւէ օրենքի, կանոնի կամ կարգավորման կիրառման եւ պաշտոնական մեկնաբանման) ընդունում, հրապարակում, կատարում կամ վավերացում կամ ցանկացած փոփոխություն կամ փոփոխության կատարում, որը տեղի է ունենում սույն Պայմանագրի ամսաթվից հետո, եւ որը վնասում է Վարկառուի՝ սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելու կարողությունը:

4.3.Ա(4) ԱՆՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԸ

ա) Անօրինականության դեպքի մասին տեղեկանալուց հետո՝

i) Բանկն անհապաղ ծանուցում է Վարկառուին, եւ

ii) Բանկը կարող է անհապաղ Ա) կասեցնել կամ չեղարկել Վարկի չհատկացված մասնաբաժինը եւ (կամ) Բ) պահանջել հետ վճարել Չմարված փոխառությունը հաշվեգրված տոկոսների եւ սույն Պայմանագրի համաձայն բոլոր այլ հաշվեգրված եւ չմարված գումարների հետ միասին՝ Բանկի կողմից Վարկառուին ներկայացված ծանուցման մեջ նշված ամսաթվին:

բ) Սույն հոդվածի նպատակներով «**Անօրինականության դեպք**» նշանակում է, որ՝

i) որեւէ կիրառելի իրավազորությունում անօրինական է դառնում կամ որեւէ Պատժամիջոցի հակասող է դառնում, կամ Բանկը ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ կարող է որեւէ Պատժամիջոցի հակասող դառնալ, եթե Բանկը՝

Ա) կատարի սույն Պայմանագրով սահմանված կարգով իր որեւէ պարտավորություն, կամ

Բ) ֆինանսավորի կամ սպասարկի Փոխառությունը,

ii) Շրջանակային համաձայնագիրը՝

Ա) լուծվում է կամ հավանական է, որ որեւէ մասով լուծվի Հայաստանի Հանրապետության կողմից,

Բ) չի գործում կամ հավանական է, որ չգործի դրա պայմաններին համապատասխան, կամ Վարկառուն պնդում է, որ այն չի գործում դրա պայմաններին համապատասխան,

Գ) խախտվում է կամ հավանական է, որ խախտվի Հայաստանի Հանրապետության կողմից այն առումով, որ Շրջանակային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած որեւէ պարտավորություն դադարում է կատարվել Բանկի կամ ԵՄ-ի ռեսուրսներից Հայաստանի Հանրապետության տարածքում որեւէ վարկառուի տրամադրված որեւէ ֆինանսավորման առնչությամբ, կամ

Դ) կիրառելի չէ կամ հավանական է, որ կիրառելի չլինի Նախագծի նկատմամբ, կամ Շրջանակային համաձայնագրով սահմանված՝ Բանկի իրավունքների կատարումը հնարավոր չէ ապահովել Նախագծի առնչությամբ,

iii) ԿԶԵՀ+ ՀՆՊ1 երաշխիքի մասով՝

Ա) այն այլեւս վավեր կամ լիակատար ուժի եւ գործողության մեջ չէ,

Բ) դրանով սահմանված պայմանները չեն կատարվել,

Գ) այն չի գործում դրա պայմաններին համապատասխան, կամ պնդում են, որ այն չի գործում դրա պայմաններին համապատասխան, կամ

Դ) Հայաստանի Հանրապետությունը դադարում է ՀԶՄՀԳ-ԳԵ կանոնակարգի կամ որեւէ այլ կիրառելի օրենքի կամ ԿԶԵՀ+-ը կարգավորող գործիքի համաձայն իրավասու երկիր լինել:

4.3.Ա(5) ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԿԱՄ ՎԵՐԱՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՉԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ

Վարկառուն անհապաղ կանխավճարի տեսքով վճարում է Չմարված վարկի այն մասը, որը չի տրամադրվել 1.11 հոդվածին համապատասխան կամ չի վերատրամադրվել 1.12 հոդվածին համապատասխան, հաշվեգրված տոկոսների եւ սույն Պայմանագրի համաձայն հաշվեգրված կամ չմարված մյուս բոլոր գումարների հետ միասին՝ Բանկի կողմից նշված ամսաթվի դրությամբ, եւ այդ

ամսաթիվը ոչ պակաս, քան պահանջը ներկայացվելու ամսաթվից 30 (երեսուն) օր հետո է:

4.3.Բ. Կանխավճարի կատարման մեխանիզմները

Բանկի կողմից 4.3.Ա հոդվածի համաձայն պահանջված ցանկացած գումար, այդ թվում՝ սույն Պայմանագրի համաձայն հաշվեգրված կամ վճարման ենթակա ցանկացած տոկոս կամ այլ գումար՝ առանց սահմանափակման, ցանկացած փոխհատուցում, որը 4.3.Գ հոդվածով ենթակա է վճարման, վճարվում է Բանկի կողմից իր պահանջի մասին ծանուցման մեջ նշված Կանխավճարի ամսաթվին:

4.3.Գ. Կանխավճարի փոխհատուցումը

4.3.Գ(1) ՖԻՔՍՎԱԾ ԴՐՈՒՅՔԱԶԱՓՈՎ ՏՐԱՆՇԸ

Եթե Վարկառուն Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպքի պարագայում Ֆիքսված դրույքաչափով տրանշի կանխավճար է կատարում, ապա Վարկառուն Բանկին Կանխավճարի ամսաթվին վճարում է Կանխավճարի փոխհատուցում այն Ֆիքսված դրույքաչափով տրանշի համար, որով կանխավճար է կատարվում:

4.3.Գ(2) ԼՈՂԱՅՈՂ ԴՐՈՒՅՔԱԶԱՓՈՎ ՏՐԱՆՇԸ

Վարկառուն կարող է Լողացող դրույքաչափով տրանշի կանխավճար կատարել առանց Կանխավճարի փոխհատուցման:

4.4. Ընդհանուր դրույթներ

4.4.Ա. 10-րդ հոդվածին հակասելու բացառումը

Սույն 4-րդ հոդվածը չի հակասում 10-րդ հոդվածին:

4.4.Բ. Վերափոխառությամբ տրամադրման բացառումը

Հետ վճարված կամ կանխավճարի տեսքով վճարված գումարը չի կարող վերափոխառությամբ տրամադրվել:

ՀՈԴՎԱԾ 5

Վճարումները

5.1. Տոկոսների հաշվարկման բազան

Սույն պայմանագրի համաձայն Վարկառուի կողմից տոկոսի, փոխհատուցման կամ Հետաձգման վճարի տեսքով վճարման ենթակա եւ ոչ ամբողջական տարվա մասով հաշվարկվող ցանկացած գումար որոշվում է հետեւյալ համապատասխան բազաների հիման վրա.

ա) Ֆիքսված դրույքաչափով տրանշի դեպքում՝ տարին 360 (երեք հարյուր վաթսուն) օր եւ ամիսը 30 (երեսուն) օր, եւ

բ) Լողացող դրույքաչափով տրանշի դեպքում՝ տարին 360 (երեք հարյուր վաթսուն) օր եւ անցած օրերի թիվը:

5.2. Վճարման ժամանակը եւ վայրը

ա) Եթե սույն Պայմանագրում կամ Բանկի պահանջով այլ բան սահմանված չէ, ապա տոկոսագումարներից, փոխհատուցման եւ մայր գումարից բացի բոլոր մյուս գումարները ենթակա են վճարման՝ Վարկառուի կողմից Բանկի պահանջը ստացվելուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

բ) Վարկառուի կողմից սույն Պայմանագրի համաձայն վճարման ենթակա յուրաքանչյուր գումար վճարվում է Բանկի կողմից Վարկառուին ծանուցված համապատասխան հաշվին: Բանկը հաշվեհամարի մասին ծանուցում է ոչ պակաս, քան Վարկառուի կողմից առաջին վճարման կատարման օրվանից 15 (տասնհինգ) օր առաջ, եւ հաշվի ցանկացած փոփոխության մասին ծանուցում է ոչ պակաս, քան այն առաջին վճարման ամսաթվից 15 (տասնհինգ) օր առաջ, որի նկատմամբ կիրառվում է փոփոխությունը: Ծանուցման այս ժամկետը չի կիրառվում 10-րդ հոդվածի համաձայն կատարվող վճարման նկատմամբ:

գ) Վարկառուն սույն Պայմանագրի համաձայն կատարվող յուրաքանչյուր վճարման համար վճարման ռեկվիզիտներում նշում է Պայմանագրի համարը:

դ) Վարկառուի կողմից վճարման ենթակա գումարը համարվում է վճարված, երբ Բանկը ստանում է այն:

ե) Սույն Պայմանագրի համաձայն Բանկի կողմից կատարվող ցանկացած հատկացում եւ դրան կատարվող ցանկացած վճարում կատարվում են Հատկացման հաշվի միջոցով (Բանկի կողմից հատկացումների համար) եւ Վճարային հաշվի միջոցով (Բանկին կատարվող վճարումների համար):

5.3. Վարկառուի կողմից հաշվանցման բացառումը

Վարկառուի կողմից սույն Պայմանագրի համաձայն կատարվելիք բոլոր վճարումները հաշվարկվում են եւ կատարվում՝ առանց հաշվանցման կամ հակընդդեմ պահանջի (եւ լիովին ազատված ցանկացած նվազեցումից, որը կատարվում է դրանց համար):

5.4. Վճարային համակարգերի խափանումը

Եթե Բանկը որոշում է (իր հայեցողությամբ), որ տեղի է ունեցել Խափանման դեպք, կամ Վարկառուն Բանկին ծանուցում է, որ տեղի է ունեցել Խափանման դեպք, ապա՝

ա) Բանկը կարող է խորհրդակցել, իսկ Վարկառուի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում պետք է խորհրդակցի Վարկառուի հետ՝ նպատակ ունենալով համաձայնեցնել սույն Պայմանագրի գործողության կամ կիրառման առնչությամբ ցանկացած փոփոխություն, որը Բանկը կարող է անհրաժեշտ համարել տվյալ հանգամանքներում,

բ) Բանկը պարտավոր չէ Վարկառուի հետ խորհրդակցել վերոհիշյալ «ա» կետում նշված որեւէ փոփոխության առնչությամբ, եթե նրա կարծիքով՝ դա գործնականում հնարավոր չէ կազմակերպել տվյալ հանգամանքներում, եւ ցանկացած դեպքում չունի այդպիսի փոփոխություններին համաձայնելու պարտավորություն, եւ

գ) Բանկը պատասխանատվություն չի կրում Խափանման դեպքի արդյունքում առաջացող որեւէ վնասի, ծախսի կամ կորստի կամ սույն 5.4 հոդվածի համաձայն կամ առնչությամբ որեւէ գործողություն ձեռնարկելու կամ չձեռնարկելու համար:

5.5. Ստացված գումարների կիրառումը

5.5.Ա. Ընդհանուր դրույթներ

Վարկառուից ստացված գումարներով նրա վճարման պարտավորությունները կատարվում են միայն, եթե դրանք ստացվել են սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան:

5.5.Բ. Մասնակի վճարումները

Եթե Բանկը ստանում է վճարում, որը բավարար չէ Փոխառուի կողմից սույն Պայմանագրի համաձայն այդ պահին վճարման ենթակա բոլոր գումարների մարման համար, ապա Բանկն այդ վճարումը ստորեւ նշված կարգով կիրառում է հետեւյալի համար կամ ուղղությամբ.

ա) ցանկացած չկատարված վճարի, ծախսի, փոխհատուցման եւ ծախքի համամասնությամբ, որը սույն Պայմանագրի համաձայն ենթակա է վճարման,

բ) ցանկացած հաշվեգրված տոկոս, որը սույն Պայմանագրի համաձայն ենթակա է վճարման, սակայն չի վճարվել,

գ) ցանկացած մայր գումար, որը սույն Պայմանագրի համաձայն ենթակա է վճարման, սակայն չի վճարվել, եւ

դ) ցանկացած այլ գումար, որը սույն Պայմանագրի համաձայն ենթակա է վճարման, սակայն չի վճարվել:

5.5.Գ. Տրանշների հետ կապված գումարների տրամադրումը

ա) Հետեւյալի դեպքում՝

i) Տրանշի կամավոր մասնակի կանխավճար, որը ենթակա է հետվճարման մի քանի մաս-մաս վճարումներով, Կանխավճարի գումարը կիրառվում է յուրաքանչյուր վճարման ենթակա մաս-մաս վճարմանը համամասնորեն կամ Վարկառուի պահանջով՝ մարման ժամկետի հակադարձ կարգով, կամ

ii) Տրանշի պարտադիր մասնակի կանխավճար, որը ենթակա է հետվճարման մի քանի մաս-մաս վճարումներով, Կանխավճարի գումարը կիրառվում է վճարման ենթակա մաս-մաս վճարումների կրճատման համար՝ մարման ժամկետի հակադարձ կարգով:

բ) 10.1 հոդվածի համաձայն պահանջ ներկայացվելուց հետո Բանկի ստացած եւ Տրանշի համար կիրառված գումարներով վճարման ենթակա մաս-մաս վճարումները կրճատվում են մարման ժամկետի հակադարձ կարգով: Բանկը կարող է ստացված գումարներն իր հայեցողությամբ կիրառել Տրանշների միջեւ:

գ) Այնպիսի գումարներ ստանալու դեպքում, որոնք չեն կարող սահմանվել որպես կոնկրետ Տրանշի նկատմամբ կիրառելի, եւ որոնց կիրառման վերաբերյալ Բանկի եւ Վարկառուի միջեւ համաձայնություն առկա չէ, Բանկը կարող է դրանք իր հայեցողությամբ կիրառել Տրանշների միջեւ:

ՀՈԴՎԱԾ 6

Վարկառուի պարտավորություններն ու հավաստիացումները

Սույն 6-րդ հոդվածում նշված պարտավորությունները շարունակում են Ուժի մեջ մտնելու ամսաթվից ուժի մեջ լինել, քանի դեռ սույն Պայմանագրի համաձայն որեւէ գումար ենթակա է վճարման, կամ Վարկը գործում է:

Ա. ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Փոխառության օգտագործումը եւ այլ ֆինանսական միջոցների հասանելիությունը

Սույն Պայմանագրի համաձայն փոխառված բոլոր գումարները Վարկառուն օգտագործում է Նախագծի իրականացման համար:

Վարկառուն ապահովում է, որ իրեն հասանելի լինեն Նախաբանի «բ» կետում նշված մյուս ֆինանսական միջոցները, եւ որ այդ ֆինանսական միջոցներն անհրաժեշտ չափով ծախսվեն Նախագծի ֆինանսավորման համար:

Փոխառության միջոցները չպետք է օգտագործվեն ապրանքների եւ ծառայությունների վաճառքի եւ ապրանքների եւ ծառայությունների ներմուծման ավելացված արժեքի հարկը, մաքսատուրքերը եւ այլ ներմուծման տուրքեր, հարկեր եւ Ծրագրի իրականացման ընթացքում առաջացող այլ գանձումներ վճարելու համար:

6.2. Նախագծի ավարտը

Վարկառուն Նախագիծն իրականացնում է Տեխնիկական նկարագրին համապատասխան՝ Բանկի հաստատմամբ դրանում ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններով, եւ ավարտում է մինչեւ դրանում նշված վերջնական ամսաթիվը:

6.3. Նախագծի հետ կապված լրացուցիչ ծախսերը

Եթե Նախագծի ընդհանուր ծախսը գերազանցում է Նախաբանի «բ» կետում նշված գնահատված թիվը, ապա Վարկառուն ձեռք է բերում ֆինանսներ՝ առանց Բանկին դիմելու գերազանցող ծախսերը ֆինանսավորելու համար, որպեսզի հնարավոր դարձնի Նախագծի ավարտը՝ Տեխնիկական նկարագրությանը համապատասխան: Գերազանցող ծախսերը ֆինանսավորելու պլանների մասին առանց ձգձգման հաղորդվում է Բանկին:

6.4. Գնումների ընթացակարգը

Վարկառուն պարտավորվում է, ի բավարարումն Բանկի, դրա Գնումների ուղեցույցում նկարագրված՝ դրա քաղաքականությանը համապատասխանող

ընդունելի գնումների ընթացակարգերով գնել սարքավորումներ, անվտանգ ծառայություններ եւ պատվիրել աշխատանքներ Նախագծի համար:

6.5. Նախագծի մասով շարունակվող պարտավորությունները

Վարկառուն կատարում է, իսկ համապատասխան դեպքերում ապահովում է, որ Սյունիքի մարզպետարանը կատարի հետեւյալը.

ա) **Սպասարկումը.** սպասարկում է, վերանորոգում է, հիմնանորոգում է եւ նորոգում է Նախագծի մաս կազմող ամբողջ գույքը այն բարվոք վիճակում պահելու համար պահանջվող կարգով.

բ) **Նախագծի գույքը.** եթե Բանկն իր նախնական գրավոր համաձայնությունը չի տվել, ապա Վարկառուն կամ Իրականացնող մարմինը (ըստ կիրառելիության) պահպանում է ըստ էության Նախագիծը կազմող ամբողջ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը եւ դրա տիրապետումը կամ ըստ անհրաժեշտության՝ փոխարինում եւ նորոգում է այդ գույքը եւ Նախագիծը պահպանում է շարունակական գործողության մեջ՝ դրա սկզբնական նպատակին համապատասխան. Բանկը կարող է իր համաձայնությունը չեղարկել միայն, եթե առաջարկվող գործողությունը կվնասի Բանկի շահերը որպես Վարկառուի վարկատու կամ Նախագիծը Բանկի կողմից դրա Կանոնադրությանը համապատասխան կամ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 309-րդ հոդվածի համաձայն ֆինանսավորման համար ոչ համապատասխան կդարձնի.

գ) **Ապահովագրությունը.** ապահովագրում է Նախագծի մաս կազմող բոլոր աշխատանքները եւ գույքը՝ համապատասխան ոլորտի ամենահամապարփակ գործելակերպին համապատասխան.

դ) **Իրավունքները եւ թույլտվությունները.** թողնում է ուժի մեջ անցման կամ օգտագործման բոլոր իրավունքները եւ բոլոր Թույլտվությունները, որոնք անհրաժեշտ են Նախագծի կատարման եւ գործողության համար,

ե) **Բնապահպանական եւ սոցիալական չափանիշները.**

i) ապահովում է, որ Իրականացնող մարմինը մշակի եւ վարի բնապահպանական եւ սոցիալական կառավարման ծրագիր (ԲՄԿԾ)՝ Բանկի չափանիշներին համապատասխան, այդ թվում մշակում է կառավարման համալիր գործընթացներ եւ ընթացակարգեր, որոնք թույլ են տալիս Իրականացնող մարմինն ապահովել բնապահպանական, կլիմայական եւ սոցիալական ոլորտը կարգավորող համապատասխան իրավական շրջանակին, միջազգային լավագույն գործելակերպերին եւ Բանկի պահանջներին համապատասխանությունը, եթե կիրառելի են,

ii) ապահովում է Իրականացնող մարմնի կողմից անհրաժեշտության դեպքում կազմակերպական կառուցվածքի ստեղծումը, պահպանումը եւ ամրապնդումը, որով սահմանվում են ԲՄԿԾ-ի ներդրման եւ արդյունավետության դիտանցման հստակ դերերն ու պարտավորությունները: Վարկառուն ապահովում է մարդկային եւ ֆինանսական ռեսուրսների շարունակական համալրումը՝ ԲՄԿԾ-ի գործունեության արդյունավետությունը էֆեկտիվորեն եւ շարունակաբար բարելավելու համար,

iii) ապահովում է Նախագծի կատարումը եւ գործողությունը՝ Բնապահպանական եւ սոցիալական չափանիշներին համապատասխան, եւ ապահովում է, որ կապալառուների հետ կնքված պայմանագրերը պարունակեն այնպիսի դրույթներ, որոնցով պահանջվում է ԱՄԿ չափանիշներին եւ աշխատանքում առողջության եւ անվտանգության չափանիշներին համապատասխանության ապահովում,

iv) ապահովում է Իրականացնող մարմնի կողմից իր շինհրապարակների ակտիվ վերահսկողությունը՝ կապալառուների կողմից վերոնշյալ դրույթների կատարումն ապահովելու համար,

v) ապահովում է, որ Ենթանախագծի հետագա մշակման գործընթացի շրջանակներում Իրականացնող մարմինը գնահատի Շրջակա միջավայրի վրա եւ սոցիալական ազդեցության գնահատման (ԲՄՍԱԳ) իրականացման

անհրաժեշտությունը: Այն Ենթանախագծերի դեպքում, որոնց համար պահանջվում է ԲՄՍԱԳ-ի իրականացում, Իրականացնող մարմինը Բանկին տրամադրում է Շրջակա միջավայրի վրա եւ սոցիալական ազդեցության գնահատման հաշվետվության (ԲՄՍԱԳ հաշվետվություն) օրինակ,

vi) ապահովում է, որ Ենթանախագծի համար Բանկի կողմից տրամադրվող ֆինանսավորումը որեւէ բացասական ազդեցություն չունենա ազգային օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով պաշտպանվող բնապահպանական նշանակության տարածքի վրա, քանի դեռ իրավասու մարմինը չի արձանագրում հակառակը կամ չի ստացվում Բանկի համար ընդունելի համարժեք գնահատում,

vii) ապահովում է, որ Բանկի կողմից տրամադրված ֆինանսական միջոցները չօգտագործվեն այնպիսի Ենթանախագծի համար, որի դեպքում անհրաժեշտ է ոչ կամավոր վերաբնակեցում: Ժամանակավոր տեղահանումն անհրաժեշտության դեպքում իրականացվում է գործողության սոցիալական կառավարման պլանի, այդ թվում՝ կենսաապահովման վերականգնման ծրագրի համաձայն մշակված ընթացակարգերով,

viii) ապահովում է, որ յուրաքանչյուր Ենթանախագծով նախատեսված արտոնությունները հավասարապես հասանելի լինեն բոլորին՝ խտրականության բացառման, մասնակցության եւ թափանցիկության ապահովման սկզբունքների հիման վրա,

ix) Նախագծի ազդեցությանը ենթարկված անձանց տրամադրվում են թափանցիկ եւ մատչելի տեղեկություններ՝ գործողության շրջանակներում եւ Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված աջակցության վերաբերյալ,

x) ծանուցում է Բանկին աշխատանքում առողջության եւ անվտանգության (ԱԱԱ) պատահարների/միջադեպերի մասին, որոնք կարող են տեղի ունենալ Ենթանախագծերի իրականացման ընթացքում,

xi) լավագույնս ապահովում է, որ Նախագծի համար իրականացվի գենդերային գնահատման եւ գենդերային գործողությունների ծրագրի մշակում, իսկ շրջանակային փոխառություններով իրականացվող Ենթանախագծերի մեծ մասը ներառի համապատասխան միջոցառումներ, որոնք կամրապնդեն գործողության նշանակությունը գենդերային հավասարության ապահովման գործում,

xii) ձեռք է բերում եւ պահպանում է Նախագծի համար անհրաժեշտ Բնապահպանական կամ սոցիալական հաստատումները,

xiii) կատարում է այդպիսի Բնապահպանական կամ սոցիալական հաստատումների պահանջները:

գ) **ԵՄ իրավունք.** գործողությունը կատարում եւ իրականացնում է ԵՄ իրավունքի համապատասխան չափանիշներին համապատասխան այնքանով, որքանով կիրարկվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ նշված են Բանկի կողմից սույն Պայմանագրում:

է) **ԾԻԳ-ի գործունեության ապահովումը.**

i) ապահովում է, որ Իրականացնող մարմինն ունենա սույն Պայմանագրով նախատեսված ֆինանսավորման մասով տրամադրման հայտ ներկայացնելու, դիտանցում իրականացնելու, իրականացման եւ միջանկյալ հաշվետվություններ կազմելու համար անհրաժեշտ գործիքներ եւ լիազորություններ,

ii) ապահովում է, որ ԾԻԳ-ի ղեկավարումն իրականացնի Իրականացնող մարմնի կամ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչը, որն ընդունելի է Բանկի համար,

iii) ապահովում է ԾԻԳ-ի կողմից անհրաժեշտության դեպքում կազմակերպական կառուցվածքի ստեղծումը, պահպանումը եւ ամրապնդումը, որով սահմանվում են ԲՍԿԾ-ի ներդրման եւ արդյունավետության դիտանցման հստակ գործառույթներն ու պարտավորությունները: Վարկառուն ապահովում է

մարդկային եւ ֆինանսական ռեսուրսների շարունակական համալրումը՝ ԲՍԿԾ-ի գործունեության արդյունավետությունը էֆեկտիվորեն եւ շարունակաբար բարելավելու համար,

iv) ապահովում է, որ Իրականացնող մարմինը Ենթանախագծերի ընտրության եւ իրականացման գործընթացը համաձայնեցնի համապատասխան ոլորտային նախարարությունների տեղական ջրային կոմիտեների հետ:

6.6. Լրացուցիչ պարտավորությունները

Վարկառուն՝

ա) ապահովում է, որ տեղի չունենա Ենթանախագծի նույն բաղադրիչի կրկնակի ֆինանսավորում Բանկի կողմից տրամադրված այլ միջոցներով՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք տրամադրվել են սույն Պայմանագրի շրջանակներում, թե՛ այլ կերպ, այլ նվիրատուների/ֆինանսավորողների կողմից: Կասկածից խուսափելու համար այս պարտավորությունը՝

i) չի արգելում այլ նվիրատուների կողմից նախաձեռնությունների համաֆինանսավորումը կամ Վարկառուի կողմից Ենթաձրագրի այլ բաղադրիչների ֆինանսավորումը, կամ

ii) չի գործում նվիրատուների կողմից տրամադրված դրամաշնորհների եւ Բանկից ստացված ֆինանսական միջոցների միավորման դեպքում, որի մասին Բանկը ծանուցվել է, կամ որը հիմնավորվել է Բանկի համար ընդունելի ձեռով,

բ) ապահովում է, որ Բանկը անհապաղ ծանուցվի Ենթանախագծի իրականացման կասեցման կամ չեղարկման մասին,

գ) ապահովում է, որ Իրականացնող մարմինը պահպանի Բանկի բոլոր գործող քաղաքականությունները եւ ուղեցույցները, այդ թվում (չսահմանափակվելով)՝ Բնապահպանական եւ սոցիալական չափանիշները եւ Գնումների ուղեցույցը: Վարկառուն աշխատանքի է ընդունում բավարար թվով

պատշաճ որակավորում ունեցող աշխատակիցներ, ապահովում է նրանց գործունեությունը՝ այդ պահանջի կատարումն ապահովելու համար,

դ) ապահովում է վերահսկողական ծառայությունների համար անհրաժեշտ լիցենզիաների անարգել ձեռքբերումը,

ե) ապահովում է, որ իրավական պաշտպանության միջոցներով քննություն իրականացնելու ընթացակարգերը հասանելի լինեն ցանկացած կողմի, որը շահագրգռված է կոնկրետ պայմանագիր ձեռք բերելու հարցում, եւ որը վնաս է կրել ենթադրյալ խախտման հետեւանքով, կամ առկա է այդպիսի սպառնալիք,

զ) ապահովում է, որ Իրականացնող մարմնի կողմից Ենթանախագծերի կամ որեւէ Ենթանախագծի բոլոր պայմանագրերի մրցութային փաստաթղթերում հստակ հիշատակվի առկա իրավական պաշտպանության ազգային մեխանիզմը,

է) ապահովում է, որ Բանկի կողմից ֆինանսավորման ենթակա պայմանագրերի մրցութային փաստաթղթերի՝ տեղական նախապատվությունների/տեղական արտադրանքի վերաբերյալ դրույթները չհակասեն Բանկի պահանջներին (այդ թվում՝ Գնումների ուղեցույցի պահանջներին): Գնումների գործընթացում տեղական նախապատվությունների/տեղական արտադրանքի վերաբերյալ պահանջներ պարունակող Ենթանախագծերը, որոնք հակասում են Գնումների ուղեցույցին, չեն դիտարկվում այս գործողության իրականացման համար,

ը) ապահովում է, որ Իրականացնող մարմինը յուրաքանչյուր տրամադրումից առաջ Բանկ ներկայացնի գնումների մանրամասն պլան, եւ անհապաղ տեղեկացնում է Բանկի գնումների սկզբնական պլանում (պլաններում) կատարված փոփոխությունների մասին,

թ) ապահովում է, որ Իրականացնող մարմինը խորհրդակցի Բանկի հետ՝ Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի փոփոխությունների առնչությամբ, եւ ձեռք է բերում Բանկի համաձայնությունը Բանկի կողմից

ֆինանսավորվող պայմանագրերում էական փոփոխություններ կատարելուց առաջ (համաձայն Գնումների ուղեցույցի),

ժ) ապահովում է, որ՝

i) յուրաքանչյուր Ենթանախագծի արտոնություններ հավասարապես հասանելի լինեն բոլորին՝ խտրականության բացառման, մասնակցության եւ թափանցիկության ապահովման սկզբունքների հիման վրա,

ii) ազդակիր անձանց տրամադրվեն Ենթանախագծերով եւ Հայաստանի օրենքներով նախատեսված աջակցության մասին թափանցիկ եւ հասանելի տեղեկություններ, եւ

iii) տեղահանված անձինք ինտեգրվեն ներկայիս բնակության վայրում:

ժա) ապահովում է, որ ցանկացած Ենթանախագծի դեպքում, որը ներկայացվել է Բանկի կողմից ֆինանսավորվելու համար, i) այն չդառնա Հայաստանում նոր ակտիվ հակամարտության պատճառ, ii) դրա իրականացման վայրը չլինի Հայաստանի կառավարության վերահսկողությունից դուրս գտնվող տարածքներում,

ժբ) ներդնում եւ վարում է որակի կառավարման համակարգ, որը երաշխավորում է, որ գործողության նպատակները իրագործվեն, այդ թվում (չսահմանափակվելով)՝ շինարարական աշխատանքների որակը համապատասխանի միջազգային լավագույն գործելակերպերին, եթե կիրառելի են, եւ շինարարական աշխատանքների ընթացքը արձանագրվի շինհրապարակի հաշվառման մատյաններում,

ժգ) Բանկին թույլատրում է ստուգումներ իրականացնել Ենթանախագծի իրականացման գործընթացի տարբեր փուլերում՝ կապված հետեւյալի հետ, սակայն չսահմանափակվելով դրանցով՝

i) աշխատանքների ծավալի համապատասխանություն աուդիտներին կամ Բանկի տեխնիկական աջակցության վերաբերյալ առաջարկություններին,

- ii) տեխնիկական նախագծերի որակ,
 - iii) շինարարական աշխատանքների որակ,
 - iv) օգտագործվող շինարարական աշխատանքների որակ,
 - v) Ենթանախագծերի ծախսեր,
 - vi) Բնապահպանական եւ սոցիալական չափանիշներին համապատասխանություն, եւ
 - vii) գնումների ընդհանուր գործընթաց եւ Գնումների ուղեցույցին համապատասխանություն,
- ժդ) ապահովում է, որ իրենց պահանջով Բանկին եւ նրա աշխատակիցներին, գործակալներին, խորհրդականներին եւ խորհրդատուներին պատշաճ ձեւով հասանելի լինեն ցանկացած տեղամաս եւ փաստաթուղթ, որն անհրաժեշտ է վերոհիշյալ «ժգ» կետում նշված բաղադրիչները ստուգելու համար,
- ժե) Բանկի համար ընդունելի ձեւով եւ Բանկի կողմից Վարկառուին ծանուցված ժամկետներում վերացնում է Ենթանախագծի հետ կապված թերությունները, սխալները, բացթողումները կամ անճշտությունները, որոնք ի հայտ են բերել վերոհիշյալ «ժդ» կետում նշված անձինք,
- ժզ) ապահովում է ԾԻԳ-ի գործունեությունը մինչեւ գործողության իրականացման ժամկետի ավարտը՝ համալրելով Բանկի համար ընդունելի աշխատակիցներով,
- ժէ) ապահովում է տեխնիկական աջակցության համապատասխան թիմի օպտիմալ աշխատանքը Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի տարածքներում՝ ԾԻԳ-ի աշխատակիցների հետ սերտ համագործակցությամբ, եւ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատասխանատու տնօրենի, համապատասխան պատասխանատու տեղակալի (տեղակալների) հետ հանդիպելու մշտական հնարավորությունը՝ տեխնիկական խորհրդատվության եւ ուղղիչ միջոցառումների իրականացման նպատակով,

ժը) նպաստում է տեխնիկական աջակցության հարցերով այլ խորհրդատուների առաքելության իրականացմանը, որոնց վարձել է Բանկը՝ ոլորտային խորհրդատվություն տրամադրելու եւ Ենթանախագծի իրականացման դիտանցում իրականացնելու համար,

ժթ) կասեցնում է Ենթանախագծի իրականացման թույլտվությունը եւ Տրանշի ցանկացած մասի վճարումն այն կողմին, որի նկատմամբ կամ որի կառավարման մասով իրականացվում է քննություն համապատասխան մարմնի կողմից Արգելված վարքագիծ դրսևորելու առնչությամբ,

ի) ապահովում է, որ Ենթանախագծ(եր)ի կամ այլ նպատակներով հողեր ձեռք չբերվեն սույն Պայմանագրի շրջանակներում Բանկի կողմից տրամադրված ֆինանսական միջոցներով, եւ ցանկացած այլ՝ Բանկի համար անթույլատրելի ծախս չկատարվի դրա միջոցներից (ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) եւ այլ հարկեր ու տուրքեր, շենքերի գնում, սպասարկման եւ այլ գործառնական ծախսեր, գործառնական ծախքեր, օգտագործված ակտիվների ձեռքբերում, շինարարության ընթացքում տոկոսներ, պետական բնական ռեսուրսների օգտագործման լիցենզիաների, արտոնագրերի, ապրանքանիշերի եւ ապրանքանշանների գնում, բացառապես ֆինանսական գործարքներ),

իա) ապահովում է, որ Իրականացնող մարմինը, համապատասխան իրականացնող գերատեսչությունը կամ պատվիրակված մարմինը Բանկի համար ընդունելի ձեւով մշակեն սակագնային ռազմավարություն, որով ապահովվում է ջրային ակտիվների ֆինանսական կայունությունը՝ գործառնական եւ սպասարկման ծախսերի (ԳՍ ծախսեր) եւ կապիտալ ծախքերի (CAPEX) ամորտիզացիան որոշ չափով ծածկելու համար՝ միաժամանակ հաշվի առնելով ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններին հասանելիությունը,

իբ) ապահովում է, որ Իրականացնող մարմինը եւ ցանկացած համապատասխան իրականացնող գերատեսչություն կամ պատվիրակված մարմին ձեռնարկեն անհրաժեշտ միջոցառումներ, որ Սյունիքի տեղական

համայնքները եւ կոմունալ տնտեսությունները, որոնք օգտագործում են Վարկային միջոցները, կարողանան գանձել ԳՍ ծախսերի լիարժեք փոխհատուցման սակագնային դրույքաչափեր՝ Բանկի կողմից ֆինանսավորվող Ենթանախագծերի իրականացման վերջին տարվանից սկսած՝ միաժամանակ ապահովելով ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար հասանելիությունը, եւ

իզ) ապահովում է, որ Իրականացնող մարմինն ավարտի գենդերային գնահատումը եւ կազմի գենդերային գործողությունների ծրագիր՝ իրականացման նպատակով, ինչպես նաեւ Ենթանախագծերի մեծ մասում ընդգրկվեն համապատասխան միջոցառումներ, որոնց արդյունքում դրանք կդառնան գենդերային զգայուն եւ ներառական: Վարկառուն ապահովում է, որ Իրականացնող մարմինը տրամադրի տվյալներ շահառուների մասին՝ ըստ սեռերի տարբերակված՝ գործողության համապատասխան արդյունքների արտացոլման նպատակով, ինչպես նաեւ գենդերային զգայունության եւ ներառականության ապահովման գործընթացում առաջընթացի մասին թարմացված ընդհանուր տեղեկություններ՝ որպես գործողության իրականացման մասին տեղեկությունների մաս:

Բանկը կարող է տրամադրման գործընթացում սահմանել այլ պարտավորություններ՝ կապված առանձին Ենթանախագծի գնահատման հետ:

Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.7. Օրենքներին համապատասխանությունը

Վարկառուն բոլոր առումներով պահպանում է այն բոլոր օրենքները, որոնք տարածվում են իր կամ Նախագծի վրա, եթե դրանք չպահպանելն էականորեն կվնասի Վարկառուի՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելու կարողությունը:

6.8. Մատյանները եւ գրառումները

Վարկառուն՝

ա) ապահովում է, որ ինքը վարած լինի եւ շարունակի վարել պատշաճ հաշվապահական մատյաններ եւ գրառումներ, որոնցում կատարվում են Վարկառուի՝ Նախագծի հետ կապված բոլոր ֆինանսական գործարքների եւ ամբողջ ակտիվների, այդ թվում՝ ծախքերի վերաբերյալ ամբողջական եւ ճշգրիտ գրառումներ՝ Հաշվապահական հաշվառման համընդհանուր ընդունված սկզբունքներին (ՀՀՀԸՍ) համապատասխան, եւ

բ) պայմանագրի կատարումից հետո առնվազն 6 (վեց) տարի պահպանում է գրառումներ՝ Փոխառությունից ստացված շահույթով ֆինանսավորվող պայմանագրերի վերաբերյալ, այդ թվում՝ բուն պայմանագրի օրինակը եւ գնումներին վերաբերող կարելու փաստաթղթերը:

6.9. Բարելավությունը

ա) Արգելված վարքագիծը

i) Վարկառուն չի դրսևորում (եւ իր անունից գործող որեւէ անձի չի թույլատրում կամ թույլտվություն չի տալիս դրսևորելու) որեւէ Արգելված վարքագիծ՝ կապված Նախագծի, Նախագծի համար իրականացվող մրցութային որեւէ ընթացակարգի կամ Պայմանագրով ենթադրվող որեւէ գործարքի հետ:

ii) Նախագծի առնչությամբ Արգելված վարքագծի ենթադրյալ կամ կասկածելի որեւէ դրսևորում քննելու կամ այն դադարեցնելու վերաբերյալ Բանկի կողմից հիմնավոր պահանջ ներկայացվելու դեպքում Վարկառուն պարտավորվում է ձեռնարկել այդպիսի գործողություններ:

iii) Վարկառուն պարտավորվում է ապահովել, որ սույն Փոխառությամբ ֆինանսավորվող պայմանագրերը ներառեն անհրաժեշտ դրույթներ՝ Վարկառուին Նախագծի առնչությամբ Արգելված վարքագծի ենթադրյալ կամ կասկածելի որեւէ դրսևորում քննելու կամ այն դադարեցնելու հնարավորություն տալու համար:

բ) Պատժամիջոցները

Վարկառուն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի անում հետեւյալը.

i) Նախագծի առնչությամբ գործարար հարաբերությունների մեջ մտնել եւ (կամ) որեւէ ֆինանսական միջոց եւ (կամ) տնտեսական ռեսուրս հասանելի դարձնել Պատժամիջոցների ենթարկված որեւէ անձի համար կամ նրա օգտին,

ii) Փոխառությունից ստացված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ օգտագործել կամ այդ շահույթը ներդնել կամ այլ կերպ հասանելի դարձնել որեւէ անձի որեւէ եղանակով, որը կհանգեցնի իր եւ (կամ) Բանկի կողմից որեւէ Պատժամիջոցի խախտման, կամ

iii) սույն Պայմանագրով նախատեսված որեւէ վճար ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորել Պատժամիջոցների ենթարկված անձի հետ իրականացվող գործունեությունից կամ որեւէ եղանակով, որը կհանգեցնի իր եւ (կամ) Բանկի կողմից որեւէ Պատժամիջոցի խախտման:

Ընդունվում եւ համաձայնեցվում է, որ սույն 6.10(բ) հոդվածում նշված պարտավորությունները Բանկի կողմից հայցվում եւ դրան են տրվում այնքանով, որքանով դա անելը թույլատրելի կլինի ԵՄ-ի հակաբոյկոտային որեւէ կիրառելի կանոնի, ինչպես օրինակ՝ 2271/96 կանոնակարգի (ԵՀ) համաձայն:

գ) Համապատասխան անձինք

Վարկառուն պարտավորվում է ողջամիտ ժամկետում պատշաճ միջոցներ ձեռնարկել որեւէ Համապատասխան անձի նկատմամբ, որի նկատմամբ իր աշխատանքային պարտականությունների իրականացման ժամանակ Արգելված վարքագիծ դրսևորելու մասով դատարանի կողմից վերջնական եւ անփոփոխ վճիռ է կայացվել, որպեսզի ապահովվի այդպիսի Համապատասխան անձի ներգրավվածության բացառումը Փոխառությանը եւ Նախագծին առնչվող գործունեությունից:

6.10. Տվյալների պաշտպանությունը

ա) Սույն Պայմանագրի վերաբերյալ տեղեկությունները (բացի Վարկառուի՝ սույն Պայմանագրի կառավարման մեջ ընդգրկված անձնակազմին վերաբերող կոնտակտային տեղեկություններից (**Կոնտակտային տվյալներ**)) Բանկին

բացահայտելիս Վարկառուն զտում կամ որեւէ այլ կերպ փոփոխում է այդ տեղեկությունները (ըստ անհրաժեշտության), որպեսզի դրանք չպարունակեն որեւէ տեղեկություն՝ կապված նույնականացված կամ նույնականացման ենթակա անձանց հետ (**Անձնական տվյալներ**)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Պայմանագրով կոնկրետ պահանջվում է, կամ Բանկը կոնկրետ գրավոր պահանջում է բացահայտել Անձնական տվյալների տեսքով այդ տեղեկությունները:

բ) Մինչեւ Բանկին սույն Պայմանագրի առնչությամբ որեւէ Անձնական տվյալ (Կոնտակտային տվյալներից բացի այլ) բացահայտելը Վարկառուն ապահովում է, որ յուրաքանչյուր անհատ, որին վերաբերում են այդ Անձնական տվյալները՝

i) տեղեկացված լինի՝ Բանկին դրանք բացահայտելու մասին (ներառյալ՝ բացահայտվելիք Անձնական տվյալների կատեգորիաները). եւ

ii) խորհրդատվություն ստացած լինի (կամ նրան տրամադրված լինի համապատասխան հղում) Բանկի կողմից վարկավորման եւ ներդրումային գործունեության վերաբերյալ նրա գաղտնիության դրույթների մասին, որոնք ժամանակ առ ժամանակ ներկայացված են <https://www.eib.org/en/privacy/lending> հղմամբ (կամ այլ այնպիսի հասցեով, որի մասին Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ գրավոր ծանուցել Վարկառուին):

6.11. Ընդհանուր հավաստիացումներ եւ երաշխիքներ

Վարկառուն Բանկին հավաստիացնում եւ երաշխավորում է, որ՝

ա) այն լիազորված է իրականացնելու, հանձնելու եւ կատարելու սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները եւ անհրաժեշտ բոլոր գործողությունները, որոնք ձեռնարկվել են Վարկառուի կողմից դրանք իրականացնելու, հանձնելու եւ կատարելու համար.

բ) սույն Պայմանագիրը կազմում է դրա իրավաբանորեն վավեր, պարտադիր եւ կատարման ենթակա պարտավորությունները.

գ) սույն Պայմանագրով սահմանված դրա պարտավորությունների իրականացումը եւ հանձնումը, կատարումը եւ դրա դրույթների պահպանումը չեն հակասում եւ չեն բխվում եւ չեն հակասի եւ չեն բխվի հետեւյալի հետ.

i) ցանկացած կիրառելի օրենք, կանոն կամ կարգավորում կամ ցանկացած վճիռ, որոշում կամ թույլտվություն, որը տարածվում է դրա վրա.

ii) դրա համար պարտադիր ուժ ունեցող ցանկացած համաձայնագիր կամ այլ փաստաթուղթ, որը ողջամտորեն կարող է ակնկալվել, որ էական բացասական ազդեցություն կունենա դրա՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելու կարողության վրա.

դ) 2025 թվականի ապրիլի 22-ից հետո էական բացասական փոփոխություն տեղի չի ունեցել.

ե) տեղի չի ունեցել որեւէ դեպք կամ հանգամանք, որը Պարտավորությունների չկատարման դեպք է հանդիսանում, եւ դրա մասով միջոցներ չեն ձեռնարկվել, կամ այն չի դադարեցվել.

զ) որեւէ դատավարություն, արբիտրաժ, վարչական վարույթ կամ քննություն չի ընթանում, կամ որքանով որ այն տեղեկացված է, չի սպառնում, որ կընթանա, կամ ընթացքում չի գտնվում դատարանում, արբիտրաժային մարմնում կամ գերատեսչությունում, որը հանգեցրել է, կամ եթե բացասական որոշում կայացվի, ապա ողջամտորեն հավանական է, որ կհանգեցնի էական բացասական փոփոխության, ոչ էլ առկա է որեւէ գործող չբավարարված վճիռ կամ որոշում դրա կամ դրա դուստր ընկերություններից որեւէ մեկի դեմ.

է) այն ստացել է անհրաժեշտ բոլոր Լիազորությունները՝ կապված սույն Պայմանագրի հետ եւ դրանով սահմանված իր պարտավորություններն օրինականորեն կատարելու նպատակով, եւ Նախագիծը եւ այդ բոլոր Լիազորությունները լիակատար ուժի եւ գործողության մեջ են եւ ընդունելի են որպես ապացույց.

ը) դրա՝ սույն Պայմանագրով սահմանված վճարման պարտավորությունները դասակարգվում են ոչ պակաս, քան *pari passu* վճարման իրավունքի նկատմամբ՝ դրա պարտքային գործիքներից որեւէ մեկով սահմանված բոլոր այլ ընթացիկ եւ հետագա չապահովված եւ չստորադասված պարտավորությունների հետ՝ բացառությամբ օրենքով նախընտրված պարտադիր պարտավորությունների.

թ) այն կատարում է 6.5(ե) հոդվածը եւ որքանով տեղյակ է (պատշաճ եւ մանրամասն հարցում կատարելուց հետո), իր դեմ Նախագծի առնչությամբ Բնապահպանական կամ սոցիալական հայց չի հարուցվել կամ չի սպառնում, որ կհարուցվի.

ժ) այդ կատարում է սույն 6-րդ հոդվածով սահմանված իր բոլոր պարտավորությունները.

ժա) որքանով տեղեկացված է, Վարկառուի Նախագծում ներդրված որեւէ ֆինանսական միջոց ապօրինի ծագում չունի, ինչպես նաեւ ձեռք չի բերվել Փողերի լվացման հետեւանքով կամ կապ չունի Ահաբեկչության ֆինանսավորման հետ. եւ

ժբ) ո՛չ Վարկառուն, ո՛չ էլ որեւէ Համապատասխան անձ չի դրսևորել՝ i) որեւէ Արգելված վարքագիծ՝ կապված Նախագծի կամ Պայմանագրով ենթադրվող որեւէ գործարքի հետ, կամ չի իրականացրել՝ ii) որեւէ ապօրինի գործունեություն՝ կապված Ահաբեկչության ֆինանսավորման կամ Փողերի լվացման հետ.

ժգ) Նախագիծը (այդ թվում, առանց սահմանափակման, Փոխառությամբ ֆինանսավորվող կամ ֆինանսավորման ենթակա պայմանագրերի վերաբերյալ բանակցությունը, շնորհումը եւ կատարումը) չի ներառել կամ չի առաջացրել որեւէ Արգելված վարքագիծ.

ժդ) ո՛չ Վարկառուն եւ (կամ), որքանով տեղեկացված է, ո՛չ էլ որեւէ Համապատասխան անձ՝

i) Պատժամիջոցի ենթարկված անձ չէ, կամ

ii) չի խախտում որեւէ Պատժամիջոց, որը կիրառվում է դրա կամ որեւէ Համապատասխան անձի նկատմամբ (համապատասխանաբար):

Ընդունվում եւ համաձայնեցվում է, որ սույն «Ժդ» կետում նշված հավաստիացումները Բանկի կողմից հայցվում եւ դրան են տրվում այնքանով, որքանով դա անելը թույլատրելի կլիներ ԵՄ-ի հակաբոյկոտային որեւէ կիրառելի կանոնի, ինչպես օրինակ՝ 2271/96 կանոնակարգի (ԵՀ) համաձայն:

Ժե) «Մրցութային չափանիշներին համապատասխանության մասին հայտարարությունը» ճիշտ է բոլոր առումներով:

Վերոնշյալ հավաստիացումները եւ երաշխիքները կատարվում են սույն Պայմանագիրը կնքելու ամսաթվին եւ բացառությամբ վերոհիշյալ «դ» կետում նշված հավաստիացման՝ համարվում են կրկնվող յուրաքանչյուր Հատկացման ընդունման ամսաթվին, յուրաքանչյուր Հատկացման ամսաթվին եւ յուրաքանչյուր Վճարման ամսաթվին՝ հղում կատարելով այն փաստերին եւ հանգամանքներին, որոնք առկա են եղել այդ ժամանակ:

6.12. Շահերի բախումը

Համաձայն Գնումների ուղեցույցում Վարկառուի համար սահմանված՝ շահերի բախումն արդյունավետորեն կանխելու, բացահայտելու եւ չեզոքացնելու ընդհանուր պարտավորության՝ Վարկառուն անում է եւ ապահովում է, որ մինչեւ Նախագծի շրջանակներում ֆինանսավորվող պայմանագրի շնորհումը Իրականացնող մարմինը անի հետեւյալը.

ա) բացահայտել եւ անմիջապես Բանկին ներկայացնել Վարկառուի կամ Իրականացնող մարմնի կառավարման մարմինների ներկայացուցչի (ներկայացուցիչների), անդամի (անդամների) կամ բարձրաստիճան պաշտոնյայի (պաշտոնյաների) սերտորեն փոխկապակցված կամ ընտանիքի անդամներ հանդիսացող՝ հաղթող ճանաչված մասնակցի (ներառյալ՝ համատեղ

ձեռնարկության գործընկերների եւ ենթակապալառուների) իրական շահառուներին, եւ

բ) ձեռնարկել պատշաճ միջոցառումներ հնարավոր շահերի, օրինակ, բացահայտված Իրական շահառուի (շահառուների) եւ Վարկառուի կամ Իրականացնող մարմնի կառավարման մարմինների անդամի (անդամների), ներկայացուցչի (ներկայացուցիչների) կամ բարձրաստիճան պաշտոնյայի (պաշտոնյաների) միջեւ ֆինանսական, տնտեսական կամ այլ անձնական շահերի բախումը վերացնելու համար:

Սույն հոդվածի նպատակներով՝

«Փողերի լվացման դեմ պայքարի մասին հրահանգներ» նշանակում է Փողերի լվացման դեմ պայքարի մասին 4-րդ հրահանգը եւ Փողերի լվացման դեմ պայքարի մասին 5-րդ հրահանգը:

«Փողերի լվացման դեմ պայքարի մասին 4-րդ հրահանգ» նշանակում է Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2015 թվականի մայիսի 20-ի «Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակներով ֆինանսական համակարգի օգտագործումը կանխելու մասին» 2015/849 հրահանգը՝ փոփոխություններով, լրացումներով կամ վերաձեւակերպումներով:

«Փողերի լվացման դեմ պայքարի մասին 5-րդ հրահանգ» նշանակում է Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2018 թվականի հունիսի 19-ի «Փողերի լվացման եւ ահաբեկչության դեմ պայքարի մասին» 2018/843 հրահանգը՝ փոփոխություններով, լրացումներով կամ վերաձեւակերպումներով: «Իրական շահառու (շահառուներ)» եզրույթն ունի Փողերի լվացման դեմ պայքարի մասին հրահանգներով այդ եզրույթին տրված իմաստը:

«Սերտորեն փոխկապակցված անձ (անձինք)» նշանակում է «սերտորեն փոխկապակցված անձ ճանաչված անձինք», ինչպես սահմանված է Փողերի լվացման դեմ պայքարի մասին հրահանգներում:

«Ընտանիքի անդամ(ներ)» եզրույթն ունի Փողերի լվացման դեմ պայքարի մասին հրահանգներով այդ եզրույթին տրված իմաստը:

ՀՈԴՎԱԾ 7

Ապահովումը

Սույն 7-րդ հոդվածում նշված պարտավորությունները շարունակում են սույն Պայմանագրի կնքման ամսաթվից ուժի մեջ լինել, քանի դեռ սույն Պայմանագրի համաձայն որեւէ գումար ենթակա է վճարման, կամ Վարկը գործում է:

7.1. *Pari Passu* դասակարգումը

Վարկառուն ապահովում է, որ դրա՝ սույն Պայմանագրի դասակարգմամբ սահմանված վճարման պարտավորությունները դասակարգվում են եւ կդասակարգվեն ոչ պակաս, քան pari passu վճարման իրավունքի նկատմամբ՝ դրա պարտքային գործիքներից որեւէ մեկով սահմանված բոլոր այլ ընթացիկ եւ հետագա չապահովված եւ չստորադասված պարտավորությունների հետ՝ բացառությամբ ընդհանրապես ընկերությունների նկատմամբ կիրառվող օրենքով նախընտրված պարտադիր պարտավորությունների:

7.2. *Լրացուցիչ* ապահովումը

Եթե Վարկառուն որեւէ երրորդ կողմի տրամադրի կամ պայմանավորվի, որ տրամադրվի Ապահովում՝ որեւէ ընթացիկ կամ հետագա չապահովված եւ չստորադասված պարտավորությունների կատարման համար, որոնք սահմանված են դրա որեւէ պարտքային գործիքով կամ որեւէ նախապատվությամբ կամ առաջնահերթությամբ՝ կապված դրա հետ, ապա Վարկառուն Բանկի կողմից պահանջվելու դեպքում Բանկին տրամադրում է համարժեք Ապահովում՝ սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարման համար, կամ Բանկին տրամադրում է համարժեք նախապատվություն կամ առաջնահերթություն:

7.3. Ներառման մասին կետ

Եթե Վարկառուն կամ Խմբի որեւէ այլ անդամ որեւէ այլ ֆինանսական վարկատուի հետ կնքի ֆինանսավորման համաձայնագիր, որը ներառում է վարկանիշի կորստի մասին դրույթ կամ դրա ֆինանսական ցուցանիշի վերաբերյալ այլ դրույթ, ըստ կիրառելիության, որը սույն Պայմանագրով նախատեսված չէ կամ ավելի բարենպաստ է համապատասխան ֆինանսական վարկատուի համար, քան սույն Պայմանագրի որեւէ համարժեք դրույթ՝ Բանկի համար, ապա Վարկառուն Բանկին անհապաղ տեղեկացնում է եւ Բանկին տրամադրում է առավել բարենպաստ դրույթի օրինակ: Բանկը կարող է պահանջել, որ Վարկառուն անհապաղ կնքի համաձայնագիր՝ սույն Պայմանագրում փոփոխություն կատարելու համար, որպեսզի նախատեսվի համարժեք դրույթ հոգուտ Բանկի:

ՀՈԴՎԱԾ 8

Տեղեկատվությունը եւ այցելությունները

8.1. Նախագծի վերաբերյալ տեղեկությունները

Վարկառուն՝

ա) Բանկին տրամադրում է հետեւյալը.

i) տեղեկություններ այնպիսի բովանդակությամբ եւ ձեւով եւ այն ժամանակ, որոնք սահմանված են Ա հավելվածով կամ այնպես, ինչպես ժամանակ առ ժամանակ որոշում են Կողմերը. եւ

ii) ցանկացած այդպիսի տեղեկություն կամ լրացուցիչ փաստաթուղթ՝ կապված Նախագծի ֆինանսավորման, գնումների, իրականացման, գործարկման եւ բնապահպանական կամ սոցիալական հարցերի հետ կամ Նախագծի համար, կամ ցանկացած տեղեկություն կամ լրացուցիչ փաստաթուղթ, որը պահանջվում է

Բանկի կողմից՝ ՀՀՄՀԳ-ԳԵ կանոնակարգով կամ Ֆինանսական կանոնակարգով նախատեսված իր պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու համար, ինչպես Բանկը կարող է ողջամտորեն պահանջել ողջամիտ ժամկետում՝

մշտապես այն պայմանով, որ եթե այդպիսի տեղեկությունները կամ փաստաթուղթը Բանկին չտրամադրվեն ժամանակին, եւ Վարկառուն Բանկի կողմից գրավոր կերպով սահմանված ողջամիտ ժամկետում չշտկի բացթողումը, ապա Բանկը կարող է Վարկառուի հաշվին իր համար անձնակազմ, խորհրդատու կամ ցանկացած երրորդ կողմ աշխատանքի ընդունելու միջոցով հնարավորինս վերացնել թերությունը, իսկ Վարկառուն ամեն կերպ աջակցում է այդ անձանց տվյալ նպատակին հասնելու համար.

բ) առանց հապաղման Բանկի հաստատմանը ներկայացնի Նախագծի հետ կապված ցանկացած էական փոփոխություն՝ հաշվի առնելով նաեւ նախքան սույն Պայմանագրի ստորագրումը Նախագծի հետ կապված տեղեկությունների բացահայտումը Բանկին՝ կապված այդ թվում Նախագծի գնի, նախագծման, պլանների, ժամանակացույցի կամ ծախսերի ծրագրի կամ ֆինանսավորման պլանի հետ,

գ) անհապաղ տեղեկացնում է Բանկին հետեւյալի մասին.

i) ցանկացած երրորդ կողմի նախաձեռնած ցանկացած գործողություն կամ դժգոհություն կամ բարձրացրած որեւէ առարկություն, կամ Վարկառուի կողմից ստացված որեւէ իրական բողոք, որը կարելի է Նախագծի վրա ազդեցություն ունեցող բնապահպանական, սոցիալական կամ այլ հարցերի տեսանկյունից.

ii) բնապահպանական կամ սոցիալական հարցերի հետ կապված ցանկացած հայց, որը, որքանով նա տեղյակ է, ներկայացվել է, քննվում է կամ կարող է ներկայացվել իր դեմ.

iii) Վարկառուին հայտնի ցանկացած փաստ կամ իրադարձություն, որը կարող է զգալիորեն խոչընդոտել կամ բացասաբար ազդել Նախագծի կատարման պայմանների կամ դրա ընթացքի վրա.

iv) Նախագծի հետ կապված ցանկացած դեպք կամ պատահար, որն էական բացասական ազդեցություն ունի կամ կարող է ունենալ բնապահպանական կամ սոցիալական հարցերի վրա.

v) Բնապահպանական եւ սոցիալական որեւէ չափանիշի՝ դրա ցանկացած անհամապատասխանություն.

vi) Բնապահպանական կամ սոցիալական հաստատման ցանկացած կասեցում, չեղարկում կամ էական փոփոխություն.

vii) ցանկացած Նախագծի հետ կապված ցանկացած արգելված վարքագծի կամ ցանկացած պատժամիջոցի վերաբերյալ իրական պնդում կամ բողոք կամ տեղեկություններ.

viii) եթե նրան հայտնի է դառնում որեւէ փաստ կամ տեղեկություն, որը հաստատում է կամ ողջամտորեն հիմք է տալիս ենթադրելու, որ՝ ա) Նախագծի մասով որեւէ Արգելված վարքագիծ է դրսևորվել, կամ բ) իր բաժնետիրական կապիտալում կամ Նախագծում ներդրված որեւէ միջոց եղել է ապօրինի ծագման. եւ

սահմանում են այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն այսպիսի հարցերի դեպքում. եւ

դ) Բանկի կողմից պահանջվելու դեպքում տրամադրում է՝

i) իր ապահովագրողների հավաստագիր, որը հաստատում է 6.5 հոդվածի «գ» կետի պահանջների կատարումը, եւ

ii) տարեկան կտրվածքով՝ Նախագծի մաս կազմող ապահովագրված գույքը ներառող՝ գործող վկայագրերի ցանկը՝ ընթացիկ ապահովագրավճարների վճարման հաստատման հետ միասին, եւ

iii) Փոխառությունից ստացված շահույթով ֆինանսավորվող պայմանագրերի իսկական պատճենները եւ ապացույց հատկացումներին վերաբերող ծախսերի վերաբերյալ:

8.2. Վարկառուի վերաբերյալ տեղեկությունները

ա) Վարկառուն պահանջի դեպքում եւ ողջամիտ ժամկետում Բանկ է ներկայացնում Վարկառուին ներկայացվող Բանկի պատշաճ ուսումնասիրության պահանջների՝ ներառյալ, ի թիվս այլնի, «Ճանաչի՛ր հաճախորդիդ» (ՃՀԴ) կամ համանման նույնականացման եւ ստուգման ընթացակարգերի կատարման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, ապացույց կամ փաստաթուղթ, եւ

բ) անհապաղ տեղեկացնում է Բանկին հետեւյալի մասին.

i) ցանկացած փաստի մասին, որն իրեն պարտավորեցնում է կանխավճար կատարել որեւէ ֆինանսական պարտավորության մասով կամ Եվրոպական միության որեւէ ֆինանսավորման մասին.

ii) ցանկացած իրադարձության կամ որոշման մասին, որը համարվում է Կանխավճարի իրադարձություն կամ կարող է հանգեցնել դրան.

iii) իր՝ Նախագծի որեւէ էական բաղադրիչի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու ցանկացած մտադրության մասին.

iv) ցանկացած փաստի կամ իրադարձության մասին, որն ամենայն հավանականությամբ կխոչընդոտի Վարկառուի կողմից սույն Պայմանագրով նախատեսված ցանկացած պարտավորություն.

v) պարտավորությունների չկատարման ցանկացած դեպքի մասին, որն արդեն տեղի է ունեցել, կամ որի սպառնալիք կա, կամ որը կանխատեսվում է.

vi) եթե արգելված չէ օրենքով, ցանկացած նյութական դատավարության, արբիտրաժային, վարչական վարույթի կամ քննության մասին, որն իրականացվում է դատարանի, պետական կառավարման մարմինների կամ նմանատիպ պետական մարմնի կողմից, որը, ըստ իրեն հասանելի

տեղեկությունների եւ համոզմունքների, նախաձեռնվել է, ակնհայտ է, որ կնախաձեռնվի կամ առկախված է Վարկառուի կամ նրա՝ վերահսկողություն իրականացնող մարմինների նկատմամբ կամ Վարկառուի կառավարման մարմինների անդամների նկատմամբ՝ Վարկի, Փոխառության կամ Նախագծի հետ կապված Արգելված վարքագծի մասով. սույն Պայմանագրի 6.9 հոդվածի համաձայն Վարկառուի կողմից ձեռնարկված ցանկացած միջոցառում.

vii) ցանկացած դատավարության, արբիտրաժային կամ վարչական վարույթի կամ քննության մասին, որը նախաձեռնվել է, կարող է նախաձեռնվել կամ առկախված է, եւ որը դատարանի կողմից անբարենպաստ որոշում ընդունելու դեպքում կարող է հանգեցնել էական բացասական փոփոխության. եւ

viii) Վարկառուի կամ ցանկացած Համապատասխան անձի նկատմամբ կիրառված ցանկացած Պատժամիջոցի վերաբերյալ ցանկացած բողոքի, հայցի, վարույթի, պաշտոնական ծանուցման կամ քննության մասին:

8.3. Այցելությունները, մատչելիության իրավունքը եւ քննությունը

ա) Վարկառուն թույլ է տալիս, որ Բանկը, եւ երբ դա պահանջվում է ԵՄ օրենսդրության համապատասխան պարտադիր դրույթներով կամ համաձայն ՀՀՄՀԳ-ԳԵ կանոնակարգի կամ Ֆինանսական կանոնակարգի, եթե կիրառելի է, Աուդիտորների եվրոպական դատարանը, Եվրոպական հանձնաժողովը, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակը եւ Եվրոպական դատախազությունը, ինչպես նաեւ վերը նշված անձանց կողմից նշանակված անձինք (յուրաքանչյուրը՝ Համապատասխան կողմ)՝

i) այցելեն Նախագծի բաղկացուցիչ մաս կազմող աշխատանքների իրականացման վայրեր, շինություններ.

ii) զրուցեն Վարկառուի, ԾԻԳ-ի ներկայացուցիչների հետ եւ չխոչընդոտեն Նախագծում ընդգրկված կամ Նախագծի հետ առնչություն ունեցող որեւէ այլ անձի հետ շփումներին.

iii) ըստ իրենց հայեցողության՝ անցկացնեն քննություններ, զննություններ, տեղում իրականացվող աուդիտ եւ ստուգումներ եւ ստուգեն Վարկառուի՝ Փոխառության, Պայմանագրի եւ Նախագծի իրականացման վերաբերյալ վարվող մատյաններն ու արձանագրությունները եւ հնարավորություն ունենան պատճենելու համապատասխան փաստաթղթերը, որքանով օրենքն է թույլատրում. եւ

բ) Վարկառուն Բանկին եւ ցանկացած Համապատասխան կողմի տրամադրում է կամ ապահովում է, որ Բանկին եւ Համապատասխան կողմերին տրամադրվի հասանելիություն տեղեկությունների, շինությունների եւ փաստաթղթերի նկատմամբ, ինչպես նաեւ սույն հոդվածում նկարագրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ամբողջական աջակցություն:

գ) Բացի այդ, Վարկառուն Եվրոպական հանձնաժողովին եւ Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակությանը թույլ է տալիս մասնակցել սույն Պայմանագրի, Փոխառության կամ Նախագծի առնչությամբ Բանկի կողմից կազմակերպվող մոնիթորինգային ցանկացած առաքելության:

դ) Փոխառության եւ (կամ) Նախագծի մասով Արգելված վարքագծի վերաբերյալ իրական ենթադրության, բողոքի կամ տեղեկությունների դեպքում Վարկառուն Բանկի հետ բարեխղճորեն խորհրդակցում է համապատասխան գործողություններ ձեռնարկելու վերաբերյալ: Մասնավորապես, եթե ապացուցվում է, որ Երրորդ կողմը Փոխառության եւ (կամ) Նախագծի մասով Արգելված վարքագիծ է դրսևորել, որի արդյունքում Փոխառությունն օգտագործվել է ոչ նպատակային, ապա Բանկը, չհակասելով սույն Պայմանագրի մյուս դրույթներին, կարող է տեղեկացնել Վարկառուին, եթե, իր կարծիքով, Վարկառուն պետք է այդ Երրորդ կողմի նկատմամբ վերականգնման համապատասխան միջոցառումներ ձեռնարկի: Ցանկացած այդպիսի դեպքում Վարկառուն բարեխղճորեն հաշվի է առնում Բանկի տեսակետը եւ Բանկին տեղեկացված է պահում:

8.4. Բացահայտումը եւ հրապարակումը

ա) Վարկառուն ընդունում եւ համաձայնում է, որ՝

i) Բանկը կարող է ստիպված լինել Վարկառուի, Փոխառության, Պայմանագրի եւ (կամ) Նախագծի վերաբերյալ տեղեկություններ եւ նյութեր փոխանցել Եվրոպական միության ցանկացած հաստատության կամ մարմնի, այդ թվում՝ Աուդիտորների Եվրոպական դատարանին, Եվրոպական հանձնաժողովին, ԵՄ ցանկացած համապատասխան պատվիրակության, Խարդախության դեմ պայքարի Եվրոպական գրասենյակին եւ Եվրոպական դատախազությանը, եթե դա նրանց անհրաժեշտ է իրենց առաջադրված խնդիրները ԵՄ օրենսդրությանը (այդ թվում՝ ՀՀՄՀԳ կանոնակարգին եւ Ֆինանսական կանոնակարգին) համապատասխան կատարելու համար. եւ

ii) Բանկը կարող է իր կայքում եւ (կամ) սոցիալական ցանցերում հրապարակել ԿԶԵՀ + ՀՆՊ1 Երաշխիքային համաձայնագրի շրջանակներում սույն Պայմանագրի համաձայն տրամադրվող ֆինանսավորման վերաբերյալ տեղեկություններ եւ (կամ) մամուլի հաղորդումներ տալ, որոնք պարունակում են այդպիսի տեղեկություններ, այդ թվում՝ Վարկառուի անվանումը, հասցեն եւ գտնվելու երկիրը, ֆինանսավորման նպատակը, ինչպես նաեւ սույն Պայմանագրով ստացվող ֆինանսական աջակցության տեսակն ու չափը:

բ) Վարկառուն՝

i) ընդունում է ԿԶԵՀ + ՀՆՊ1 Երաշխիքային համաձայնագրի շրջանակներում ԵՄ ֆինանսական աջակցության ծագումը.

ii) ապահովում է ԿԶԵՀ+ շրջանակներում ԵՄ կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության տեսանելիությունը, հատկապես Վարկառուի, սույն Պայմանագրի, Փոխառության կամ Նախագծի եւ դրանց արդյունքների նկատմամբ հետաքրքրություն առաջացնելիս կամ դրանք ներկայացնելիս, Վարկառուի, սույն Պայմանագրի, Փոխառության կամ Նախագծի հետ կապված տեղեկատվական նյութերում՝ տեսանելի ձեռով, ինչպես նաեւ մեծ լսարանին համապարփակ, արդյունավետ եւ համաչափորեն թիրախավորված տեղեկություններ տրամադրելու միջոցով, ներառյալ՝ զանգվածային լրատվության

միջոցներն ու հանրությունը՝ պայմանով, որ տեղեկատվական նյութերի բովանդակությունը նախապես համաձայնեցվել է Բանկի հետ. եւ

iii) խորհրդակցում է Բանկի, Հանձնաժողովի եւ Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակության հետ սույն Ֆինանսական պայմանագրի ստորագրման մասին հաղորդելու վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 9

Գանձումները եւ ծախսերը

9.1. Հարկեր, տուրքեր եւ վճարներ

Վարկառուն վճարում է սույն Պայմանագրի կամ դրա հետ կապված որեւէ փաստաթղթի կատարումից կամ իրականացումից առաջացող եւ Փոխառության համար տրամադրված ցանկացած Ապահովման ստեղծման, կատարելագործման, գրանցման կամ կատարման հետ կապված բոլոր հարկերը, տուրքերը, վճարները եւ ցանկացած տեսակի այլ վճարումներ, այդ թվում՝ դրոշմանիշային վճարը եւ գրանցման վճարները, որքանով դա կիրառելի է:

Վարկառուն վճարում է սույն Պայմանագրով նախատեսված ամբողջ մայր գումարը, տոկոսները, փոխհատուցումներն ու օրենքով կամ պետական կամ այլ մարմինների հետ կնքված համաձայնագրի համաձայն պահանջվող այլ գումարներ՝ առանց որեւէ պահումների կամ ազգային կամ տեղական ցանկացած տեսակի այլ վճարումներից նվազեցումների: Եթե Վարկառուն պարտավոր է որեւէ այդպիսի պահումներ կամ նվազեցումներ կատարել, ապա նա մեծացնում է Բանկին կատարվող վճարումն այնպես, որ այդ պահումներից կամ նվազեցումներից հետո Բանկի կողմից ստացվող զուտ գումարը հավասար լինի նախատեսված գումարին:

9.2. Այլ գանձումներ

Վարկառուն իր վրա է վերցնում բոլոր գանձումներն ու ծախսերը, այդ թվում՝ մասնագիտական, բանկային կամ արտարժույթի փոխարկման հետ կապված ծախսերը, որոնք կարող են առաջանալ՝ կապված սույն Պայմանագրի կամ դրա հետ կապված որեւէ փաստաթղթի պատրաստման, կատարման, իրականացման, կատարումն ապահովելու եւ գործողության դադարեցման, սույն Պայմանագրում կամ դրա հետ կապված ցանկացած փաստաթղթում կատարվող փոփոխության, լրացման կամ չեղարկման, ինչպես նաեւ Փոխառության համար տրամադրված ցանկացած ապահովման փոփոխության, ստեղծման, կառավարման, հարկադիր կատարման եւ իրականացման հետ:

9.3. Լրացուցիչ ծախսերը, փոխհատուցումն ու հաշվանցումը

ա) Վարկառուն Բանկին վճարում է ցանկացած ծախք կամ ծախս, որը Բանկի համար առաջացել է, կամ որը Բանկը կրել է որեւէ օրենքի կամ կանոնակարգի ընդունման կամ դրանում որեւէ փոփոխություն կատարելու (կամ մեկնաբանման, դրա նորմերի կիրառման կամ դրա կիրառման) կամ ցանկացած օրենքի կամ կանոնակարգի հետ համապատասխանությունն ապահովելու հետեւանքով, ինչի անհրաժեշտություն առաջացել է սույն Պայմանագիրը ստորագրելու ամսաթվից հետո, որի համաձայն կամ որի արդյունքում՝ i) Բանկը պարտավոր է կրել լրացուցիչ ծախքեր՝ սույն Պայմանագրով նախատեսված ֆինանսավորումն ապահովելու կամ իր պարտականությունները կատարելու համար, կամ ii) սույն Պայմանագրով Բանկին հասանելիք ցանկացած գումար, կամ Բանկի կողմից Վարկառուին Վարկ կամ Փոխառություն տրամադրելու արդյունքում առաջացած ֆինանսական եկամուտը նվազեցվում է կամ վերացվում:

բ) Չսահմանափակելով Բանկի՝ սույն Պայմանագրով կամ ցանկացած կիրառելի օրենքով նախատեսված այլ իրավունքներով՝ Վարկառուն փոխհատուցում է Բանկին եւ թույլ չի տալիս, որ վերջինս կրի կորուստներ, որոնք առաջանում են ցանկացած ամբողջական կամ մասնակի մարման արդյունքում, որը կատարվում է սույն Պայմանագրով հստակ սահմանված ձեւից տարբերվող այլ ձեւով:

գ) Բանկը կարող է Վարկառուի՝ սույն Պայմանագրով նախատեսված ցանկացած ժամկետանց պարտավորություն (այնքանով, որքանով այն իրականում պատկանում է Բանկին) հաշվանցել Բանկի կողմից Վարկառուի նկատմամբ ունեցած ցանկացած պարտավորությունից (լինի այն ժամկետանց, թե ոչ ժամկետանց)՝ անկախ վճարման վայրից, հաշվարկները կատարող բաժնից կամ երկու պարտավորությունների արժույթից: Եթե պարտավորությունները տարբեր արժույթներով են, ապա հաշվանցման նպատակով Բանկը կարող է փոխարկել ցանկացած պարտավորություն արտարժույթի շուկայական փոխարժեքով իր ամենօրյա աշխատանքային գործունեության ընթացքում: Եթե պարտավորություններից որեւէ մեկը մարված կամ հստակեցված չէ, ապա Բանկը կարող է հաշվանցել իր կողմից բարեխղճորեն գնահատված այդ պարտավորության չափով:

ՀՈԴՎԱԾ 10

Պարտավորությունների չկատարման դեպքերը

10.1. Հետվճարում պահանջելու իրավունքը

Վարկառուն անմիջապես վճարում է Չմարված փոխառության ամբողջ գումարը կամ դրա մի մասը (ինչպես պահանջում է Բանկը) հաշվեգրված տոկոսների եւ սույն Պայմանագրով նախատեսված բոլոր այլ հաշվեգրված կամ չմարված գումարների հետ միասին՝ Բանկի կողմից հետեւյալ դրույթների համաձայն ներկայացված գրավոր պահանջի դեպքում:

10.1.Ա. Անհապաղ պահանջը

Բանկը կարող է անմիջապես այդպիսի պահանջ ներկայացնել՝ առանց նախապես ծանուցելու (mise en demeure préalable) կամ որեւէ դատական կամ արտադատական քայլ կատարելու՝

ա) եթե Վարկառուն սահմանված ժամկետում չի վճարում սույն Պայմանագրի համաձայն վճարման ենթակա որեւէ գումար տեղում եւ այն

արժույթով, որով արտահայտված այն պետք է վճարվի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

i) նրա կողմից վճարումը չկատարելու պատճառը վարչական կամ տեխնիկական սխալն է կամ հափանման դեպքը. եւ

ii) վճարումը կատարվում է դրա համար սահմանված ժամկետից 3 (երեք) Աշխատանքային օրվա ընթացքում.

բ) եթե Վարկառուի կողմից կամ անունից Բանկին տրված որեւէ տեղեկություն կամ փաստաթուղթ կամ որեւէ ձեռով շահերի ներկայացում, երաշխիք կամ հայտարարություն, որն արվել է կամ համարվում է, որ արվել է Վարկառուի կողմից սույն Պայմանագրի կնքման կամ դրա նպատակների համար կամ կապված սույն Պայմանագրի շուրջ բանակցությունների կամ կատարման հետ, սխալ է կամ ապացուցվում է, որ սխալ է, թերի կամ մոլորեցնող՝ որեւէ էական առումով.

գ) եթե Վարկառուի կողմից որեւէ փոխառության կամ Փոխառությունից բացի ցանկացած ֆինանսական գործարքից բխող որեւէ պարտավորություն չկատարելուց հետո՝

i) Վարկառուից պահանջվում է կամ կարող է պահանջվել, կամ ցանկացած կիրառելի պայմանագրային արտոնյալ ժամկետի ավարտից հետո կպահանջվի կամ կարող է պահանջվել կանխավճար կատարել, մարել, փակել կամ վաղաժամ դադարեցնել այդպիսի այլ փոխառություն կամ պարտավորություն. կամ

ii) այդպիսի այլ փոխառության կամ պարտավորության համար ցանկացած ֆինանսական պարտավորություն չեղարկվում կամ կասեցվում է.

դ) եթե Վարկառուն ի վիճակի չէ վճարել իր պարտքերը դրանք ժամկետանց դառնալուց հետո կամ կասեցնում է իր պարտքերը կամ փոխզիջման է գալիս կամ փորձում է փոխզիջման գալ իր պարտատերերի հետ.

ե) եթե փոխատուի սեփականությունն է դառնում Վարկառուի բիզնեսի կամ ակտիվների որեւէ մաս կամ Նախագծի մաս կազմող ցանկացած գույք, կամ դրանց համար նշանակվում է հարկային կառավարիչ, լուծարող, կառավարիչ, գույքի կառավարիչ կամ համանման պաշտոնյա, լինի դա համապատասխան ընդդատության դատարանի կամ իրավասու պետական կառավարման մարմնի կամ որեւէ անձի կողմից.

զ) եթե Վարկառուն ժամանակին չի կատարում Բանկի կողմից տրված որեւէ այլ փոխառության նկատմամբ կամ Բանկի հետ կնքված ֆինանսական փաստաթղթով նախատեսված կամ Բանկի կամ Եվրոպական Միության ռեսուրսներից նրան տրամադրված որեւէ այլ փոխառության նկատմամբ կամ ֆինանսական փաստաթղթով նախատեսված պարտավորություն.

է) եթե Վարկառուի գույքի կամ Նախագծի մաս կազմող որեւէ գույքի նկատմամբ կիրառվում կամ հարկադիր ձեռով կիրառվում է որեւէ օտարում, արգելանք, բռնագանձում, առգրավում, տուգանք, կալանք կամ այլ գործընթաց, եւ այն չի հանվում կամ կասեցվում է 14 (տասնչորս) օրվա ընթացքում.

ը) եթե տեղի է ունենում Էական բացասական փոփոխություն՝ համեմատած սույն Պայմանագրի կնքման ամսաթվի դրությամբ Վարկառուի վիճակի հետ.

թ) եթե Վարկառուի կողմից սույն Պայմանագրով սահմանված որեւէ պարտավորության կատարում անօրինական է կամ դառնում է անօրինական, կամ սույն Պայմանագիրը ուժի մեջ չի մտնում՝ համաձայն դրանով նախատեսված պայմանների, կամ Վարկառուի կողմից համարվում է անարդյունավետ՝ իր պայմաններին համապատասխան:

10.1.Բ. Շտկումներ կատարելու մասին ծանուցումից հետո ներկայացվող պահանջը

Բանկը կարող է նաեւ այդպիսի պահանջ ներկայացնել՝ առանց նախապես ծանուցելու (mise en demeure préalable) կամ որեւէ դատական կամ արտադատական քայլ կատարելու՝

ա) եթե Վարկառուն չի կատարում սույն Պայմանագրի որեւէ դրույթ (բացի 10.1. Ա հոդվածում նշվածներից) կամ Տրամադրման մասին գրության որեւէ պայման, կամ

բ) եթե Պայմանագրի Ընդհանուր դրույթներում նշված՝ Վարկառուին կամ Նախագծին վերաբերող որեւէ հանգամանք էականորեն փոփոխվում է եւ էականորեն չի վերականգնվում, եւ եթե փոփոխությունը վնասում է Բանկի՝ որպես Վարկառուի փոխատուի շահերը կամ բացասաբար է ազդում Նախագծի իրականացման կամ ընթացքի վրա,

բացառությամբ այն դեպքերի, երբ անհամապատասխանությունը կամ անհամապատասխանության պատճառ հանդիսացող հանգամանքը հնարավոր է շտկել եւ շտկվում է Բանկի կողմից Վարկառուին տրամադրված ծանուցման մեջ նշված ողջամիտ ժամկետում:

10.2. Օրենքով սահմանված այլ իրավունքներ

10.1 հոդվածը չի սահմանափակում Չմարված փոխառության համար կանխավճարի պահանջ ներկայացնելու մասով Բանկի՝ օրենքով սահմանված որեւէ այլ իրավունք:

10.3. Փոխհատուցումը

10.3.Ա. Ֆիքսված դրույքաչափով տրանշները

Ֆիքսված դրույքաչափով որեւէ տրանշի նկատմամբ 10.1 հոդվածով սահմանված պահանջ ներկայացվելու դեպքում Վարկառուն Բանկին վճարում է պահանջված գումարը որպես կանխավճար վճարման ենթակա մայր գումարի ցանկացած չափի համար փոխհատուցման հետ միասին: Այդպիսի փոխհատուցումը՝ i) հաշվանցվում է Բանկի՝ պահանջի մասին ծանուցման մեջ

նշված վճարման ժամկետից եւ հաշվարկվում այն հիմքով, որ կանխավճարը կատարվում է նշված օրը, եւ ii) Բանկի կողմից Վարկառուին փոխանցված գումարի համար է՝ որպես հետեւյալի ավելցուկի գործող արժեք (հաշվարկված կանխավճարը կատարելու օրվա դրությամբ), եթե այդպիսիք կան՝

ա) տոկոսներ, որոնք հետագայում հաշվանցվելու են որպես կանխավճար վճարված գումարի նկատմամբ կանխավճարը կատարելու ամսաթվից մինչեւ Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթիվը, եթե այդպիսիք կան, կամ Մարման ամսաթիվը՝ դրա որպես կանխավճար վճարված չլինելու դեպքում.

բ) տոկոսներ, որոնք այդպես հաշվանցվելու են այդ ժամանակահատվածում, եթե հաշվարկվեին Վերաբաշխման դրույքաչափով, 0,19%-ից (տասնինը բազիսային կետից) պակաս:

Տվյալ գործող արժեքը հաշվարկվում է կիրառելի Տրանշի Վճարման յուրաքանչյուր համապատասխան ամսաթվի դրությամբ կիրառվող Վերաբաշխման դրույքաչափին հավասար զեղչման դրույքաչափով:

10.3.Բ. Ընդհանուր դրույթներ

Վարկառուի կողմից սույն 10.3 հոդվածի համաձայն վճարման ենթակա գումարները պետք է վճարվեն Բանկի կողմից ներկայացվող պահանջի մեջ նշված օրը:

10.4. Իրավունքներից չհրաժարվելը

Բանկի կողմից սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներից կամ իրավական պաշտպանության միջոցներից որեւէ մեկը չիրացնելը կամ ուշացմամբ կամ մասնակիորեն իրացնելը չի համարվում այդ իրավունքից կամ իրավական պաշտպանության միջոցից հրաժարում: Սույն Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու իրավական պաշտպանության միջոցները պահպանվում են, եւ դրանցով չի բացառվում օրենքով նախատեսված որեւէ իրավունք կամ իրավական պաշտպանության միջոց:

ՀՈԴՎԱԾ 11

Օրենք եւ իրավագործություն, այլ դրույթներ

11.1. Կարգավորող օրենքը

Սույն Պայմանագիրը եւ դրանից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն կարգավորվում է Լյուքսեմբուրգի օրենսդրությամբ:

11.2. Իրավագործությունը

ա) Լյուքսեմբուրգ քաղաքի դատարաններն ունեն բացառիկ իրավագործություն կարգավորելու սույն Պայմանագրից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ (Վեճ) (այդ թվում՝ սույն Պայմանագրի առկայության, գործողության կամ լուծման կամ այն չեղյալ ճանաչելու հետեւանքների հետ կապված վեճ) կամ սույն Պայմանագրից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն:

բ) Կողմերը համաձայնում են, որ Լյուքսեմբուրգ քաղաքի դատարաններն ամենահամապատասխան ու ամենահարմար դատարաններն են միմյանց միջեւ Վեճերը կարգավորելու համար, ուստի որեւէ առարկություն չեն ներկայացնի:

11.3. Անձեռնմխելիությունից հրաժարվելը

Վարկառուն հիմնականում հրաժարվում է ամբողջ անձեռնմխելիությունից, որը նա կամ նրա ակտիվները կամ եկամուտներն այլ կերպ կարող են ունենալ ցանկացած իրավագործության ներքո, ներառյալ՝ անձեռնմխելիությունը հետեւյալի նկատմամբ.

ա) դատարանի որոշման կամ հրահանգի միջոցով որեւէ բավարարում տալը՝ պարտավորություններն իրապես կատարելու կամ ակտիվները կամ եկամուտները վերականգնելու համար. եւ

բ) դատարանի որոշումը կատարելու համար կամ գույքային հայցով իր ցանկացած ակտիվի եւ եկամուտի նկատմամբ արգելանք, կալանք դնելու կամ դրանց վաճառքի համար իր ակտիվների կամ եկամուտների նկատմամբ ցանկացած գործընթացի հարուցումը:

11.4. Գործունեության իրականացման վայրը

Եթե Բանկի կողմից գրավոր կերպով այլ բան նախատեսված չէ, սույն Պայմանագրով նախատեսված գործունեության իրականացման վայրը Բանկի գտնվելու վայրն է:

11.5. Վճարման ենթակա գումարների վերաբերյալ ապացույցները

Սույն Պայմանագրից բխող ցանկացած իրավական գործընթացի դեպքում Բանկի կողմից սույն Պայմանագրով նախատեսված ցանկացած գումարի կամ դրույքաչափի վերաբերյալ Բանկի վկայականն ակնհայտ սխալի բացակայության դեպքում պետք է լինի այդպիսի գումարի կամ դրույքաչափի առերեսույթ ապացույց:

11.6. Ամբողջական համաձայնագիրը

Սույն Պայմանագիրը Բանկի եւ Վարկառուի միջեւ սույնով նախատեսված Վարկի տրամադրման հետ կապված ամբողջական համաձայնագիր է եւ փոխարինում է նույն հարցի վերաբերյալ ցանկացած բացահայտ կամ ենթադրյալ նախկին համաձայնագրի:

11.7. Անվավերությունը

Եթե ցանկացած պահի սույն Պայմանագրի որեւէ կետ ապօրինի է կամ դառնում է ապօրինի, անվավեր է կամ որեւէ առումով կատարման ոչ ենթակա, կամ սույն Պայմանագիրը որեւէ առումով անարդյունավետ է կամ դառնում է անարդյունավետ որեւէ իրավազրույթյան իրավունքի համաձայն, ապա ապօրինի, անվավեր, կատարման ոչ ենթակա կամ անարդյունավետ լինելը չեն ազդում՝

ա) սույն Պայմանագրի որեւէ այլ կետի այդ իրավազորության ներքո օրինականության, վավերության կամ կատարման ենթակա լինելու կամ այդ իրավազորության ներքո սույն Պայմանագրի արդյունավետության վրա որեւէ առումով. կամ

բ) սույն Պայմանագրի այդ կամ որեւէ այլ կետի օրինականության, վավերության կամ կատարման ենթակա լինելու կամ այդպիսի այլ իրավազորության իրավունքի համաձայն սույն Պայմանագրի արդյունավետության վրա:

11.8. Փոփոխություններ կատարելը

Սույն Պայմանագրի ցանկացած փոփոխություն կատարվում է գրավոր ձեւով եւ ստորագրվում է Կողմերի կողմից:

11.9. Օրինակները

Սույն Պայմանագիրը կարող է կնքվել մի քանի օրինակներով, որոնք բոլորը միասին կազմում են նույն փաստաթուղթը: Այդպիսի յուրաքանչյուր օրինակ բնօրինակ է, բայց բոլոր օրինակները միասին կազմում են նույն փաստաթուղթը:

ՀՈԴՎԱԾ 12

Եզրափակիչ դրույթներ

12.1. Ծանուցումներ կատարելը

12.1.Ա. Ծանուցման ձեւը

ա) սույն Պայմանագրով սահմանված ցանկացած ծանուցում կամ այլ հաղորդակցություն (Իրական ժամանակում սահմանված գնով Տրանշի համար իրական ժամանակում գնի սահմանման վերաբերյալ հեռախոսազրույցից բացի

այլ) պետք է լինի գրավոր եւ այլ բան սահմանված չլինելու դեպքում կարող է իրականացվել նամակով կամ էլեկտրոնային նամակով:

բ) Ծանուցումները եւ մյուս հաղորդակցությունները, որոնց համար սույն Պայմանագրով սահմանվում են հստակ ժամկետներ, կամ որոնցով սահմանվում են հասցեատիրոջ համար պարտադիր հստակ ժամկետներ, կարող են իրականացվել առձեռն, պատվիրված նամակով կամ էլեկտրոնային նամակով: Այդպիսի ծանուցումները եւ հաղորդակցությունները համարվում են մյուս Կողմի կողմից ստացված՝

i) առձեռն հանձնելու կամ պատվիրված նամակով ուղարկելու դեպքում՝ առաքման ամսաթվի դրությամբ.

ii) ցանկացած էլեկտրոնային նամակի դեպքում, միայն եթե այդպիսի էլեկտրոնային նամակը փաստացի ստացվում է ընթերցելի ձեով, կամ եթե այն հասցեագրված է մյուս Կողմի կողմից այդ նպատակով սահմանված ձեով:

գ) Վարկառուի կողմից էլեկտրոնային փոստով Բանկին ուղարկված ցանկացած ծանուցում պետք է՝

i) թեմայի համար նախատեսված տողում պարունակի Պայմանագրի համարը. եւ

ii) լինի ծանուցման՝ խմբագրման հնարավորություն չունեցող էլեկտրոնային պատկերի ձեով (pdf, tif կամ Կողմերի միջեւ համաձայնությամբ՝ խմբագրման հնարավորություն չունեցող փաստաթղթի այլ սովորական ձեւաչափով), որը ստորագրել է միանձնյա ներկայացնելու իրավունք ունեցող լիազորված անձը կամ անհրաժեշտության դեպքում՝ Վարկառուին համատեղ ներկայացնելու իրավունք ունեցող երկու կամ ավելի լիազորված անձինք՝ անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային նամակին կցված:

դ) Սույն Պայմանագրի որեւէ դրույթի համապատասխան Վարկառուի կողմից կազմված ծանուցումներն ուղարկվում են Բանկ՝ Վարկառուի անունից այդպիսի ծանուցումն ստորագրելու համար լիազորված անձի կամ անձանց

լիազորությունը հաստատող բավարար ապացույցի եւ այդ անձի կամ անձանց ստորագրությունների իսկական օրինակների հետ համատեղ՝ Բանկի կողմից այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում:

ե) Առանց սույն 12.1 հոդվածին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի միջոցով ուղարկված ծանուցումների կամ հաղորդակցության վավերականության վրա ազդելու՝ հետեւյալ ծանուցումները, հաղորդակցությունները եւ փաստաթղթերը նույնպես համապատասխան Կողմին են ուղարկվում պատվիրված նամակով ոչ ուշ, քան անմիջապես հաջորդ Աշխատանքային օրը՝

i) Հատկացման ընդունումը.

ii) ցանկացած ծանուցում եւ հաղորդակցություն՝ որեւէ Տրանշի համար հատկացում տրամադրելու գործընթացի հետաձգման, չեղարկման եւ կասեցման, որեւէ Տրանշի համար տոկոսի վերանայման կամ փոխարկման, Շուկայի ապակայունացման դեպքի, Կանխավճարի մասին դիմումի, Կանխավճարի մասին ծանուցման, Պարտավորությունների չկատարման դեպքի, կանխավճար կատարելու մասին ցանկացած պահանջի առնչությամբ, եւ

iii) Բանկի կողմից պահանջվող ցանկացած այլ ծանուցում, հաղորդակցություն կամ փաստաթուղթ:

զ) Կողմերը համաձայնում են, որ վերոնշյալ ցանկացած հաղորդակցություն (այդ թվում՝ էլեկտրոնային նամակի միջոցով) հաղորդակցության ընդունված ձեւ է, դատարանում պետք է համարվի ընդունելի ապացույց եւ պետք է ունենա նույն ապացուցողական արժեքը, ինչ գրավոր համաձայնագիրը (sous seing privé):

12.1.Բ. Հասցեները

Սույն Պայմանագրի համաձայն կամ դրա հետ կապված ցանկացած հաղորդակցություն իրականացնելու կամ փաստաթուղթ առաքելու համար յուրաքանչյուր Կողմի հասցեն եւ էլեկտրոնային փոստի հասցեն (ինչպես նաեւ վարչությունը, որին պետք է հասցեագրվի հաղորդակցությունը) հետեւյալն են.

Բանկի կողմից՝

Հասցեատեր՝ ԵՆԲ-ի Գլոբալ տնօրինության ընդլայնման եւ հարեւանության դեպարտամենտի Արեւմտյան Բալկանների եւ Թուրքիայի հարցերով բաժին

Լյուքսեմբուրգ L-2950

Կոնրադ Ադենաուերի բուլվար 100

Վարկառուի կողմից՝

Էլ. փոստի հասցե՝ glo-nc2-projects@eib.org

Հասցեատեր՝ Ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչություն

Մելիք-Ադամյան 1

Էլ. փոստի հասցե՝ icd@minfin.am,

publicdebt@minfin.am

12.1.9. Կոնտակտային տվյալների վերաբերյալ ծանուցումը

Բանկը եւ Վարկառուն անմիջապես գրավոր տեղեկացնում են մյուս Կողմին իրենց համապատասխան կոնտակտային տվյալներում կատարված ցանկացած փոփոխության մասին:

12.2. Անգլերենը

ա) Սույն Պայմանագրի համաձայն կատարված կամ դրա հետ առնչություն ունեցող ցանկացած ծանուցում կամ հաղորդակցություն պետք է լինի անգլերենով:

բ) Սույն Պայմանագրով նախատեսված կամ դրա հետ առնչություն ունեցող մյուս բոլոր փաստաթղթերը պետք է՝

i) լինեն անգլերենով. կամ

ii) անգլերենով չլինելու եւ Բանկի կողմից այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում ուղեկցվեն վավերացված անգլերեն թարգմանությամբ, եւ այդ դեպքում անգլերեն թարգմանությունը կգերակայի:

12.3. Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելը

Սույն Պայմանագիրն ուժի մեջ կմտնի ուժի մեջ մտնելու օրվանից (Ուժի մեջ մտնելու ամսաթիվ), որը կնշվի Բանկի կողմից Վարկառուին ուղղված նամակում, որով հաստատվում է, որ Բանկը ստացել է ապացույց, որ անհրաժեշտ պաշտոնական եւ գերատեսչական բոլոր հաստատումները, ներառյալ՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացումները եւ այդ նամակը համոզիչ ապացույց են առ այն, որ սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտել:

Եթե Ուժի մեջ մտնելու ամսաթիվը սույն Պայմանագիրը կնքելու ամսաթվից հետո 12-րդ (տասներկուերորդ) ամսում կամ դրանից առաջ ընկած ամսաթիվը չէ (կամ Բանկի կողմից Վարկառուն գրավոր ձեռով ծանուցված ավելի ուշ ամսաթիվ չէ), ապա սույն Պայմանագիրն ուժի մեջ չի մտնում, եւ հետագա գործողությունների անհրաժեշտություն կամ պահանջ չի լինում:

12.4. Նախաբանները, հավելվածները եւ առդիրները

Նախաբանները եւ հետեւյալ հավելվածները սույն Պայմանագրի մաս են կազմում՝

Հավելված Ա	Տեխնիկական նկարագրություն
Հավելված Բ	ԵՎՐԻԲՈՐԻ սահմանումը
Հավելված Գ	Հատկացման առաջարկի/Ընդունման ձեւանմուշը (Հոդվածներ 1.2.Բ եւ 1.2.Գ)
Հավելված Դ	Տոկոսի դրույքաչափի վերանայումը եւ փոխարկումը
Հավելված Ե	Վարկառուի կողմից տրամադրվելիք հավաստագրերը

Կողմերը պայմանավորվել են, որ սույն Պայմանագիրը կատարվի 3 (երեք)՝ անգլերեն բնօրինակներով:

Լյուքսեմբուրգում 2025 թվականի հուլիսի 16-ին:

Ստորագրվել է կողմից եւ անունից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

[Վահե Հովհաննիսյան

ՀՀ ֆինանսների նախարար]

[Թերեզա Չերվինսկա

ԵՆԲ փոխնախագահ]

Հավելված Ա

Տեխնիկական նկարագրություն

Նպատակը, տեղանքը

Նախագծի նպատակն է Հայաստանի Սյունիքի մարզում բազմաուղորտային ներդրումներ կատարելու միջոցով տրամադրել հասցեական աջակցություն՝ վերացնելով վերջին հակամարտությունների հետեւանքները: Դրանում ընդգրկված են Սյունիքի մարզի տարբեր մունիցիպալիտետներ, որոնք էապես տուժել են պատերազմի հետեւանքով, հատուկ ուշադրություն դարձնելով այն համայնքներին, որոնք կա՛մ ընդունում են տեղահանված անձանց, կա՛մ ինքնին վերականգնվում են հակամարտության հետեւանքով կրած վնասներից: Նախաձեռնության շրջանակներում ապահովվում է տեխնիկական աջակցության արդյունավետ օգտագործումը եւ վերահսկվում է տեղական ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ենթագործողությունների

իրականացումը եւ մոնիթորինգը, մասնավորապես՝ ջրային, առողջապահության եւ կրթության ոլորտներում՝ համայնքի դիմակայունությունը եւ տնտեսության վերականգնումը խթանելու համար:

ԵՆԲ-ի գործողություն-միջամտություններն ապահովում են Սյունիքում Կառավարության առաջնահերթությունների, Կառավարության ոլորտային բարեփոխումների իրականացումը եւ համաձայնեցվում են Սյունիքի մարզում դիմակայունության բարձրացմանն ուղղված հարակից միջոցառումներ իրականացնող այլ համապատասխան զարգացման գործընկերների գործունեության հետ եւ փոխլրացնում այն: Պետական գերատեսչությունները եւ Սյունիքի մարզպետարանն ակտիվ գործունեություն են ծավալում այդ օրակարգն իրագործելու համար, որի հիմնական ներդրումային առաջնահերթություններն են՝

- i) որակյալ առողջապահական եւ բժշկական ծառայությունների հասանելիությունը, ii) որակյալ տեխնիկական եւ մասնագիտական կրթական ծառայությունների հասանելիությունը, եւ iii) ջրային ռեսուրսներին համայնքի եւ ընտանիքների հասանելիությունը:

Գործողություն-միջամտությունների արդյունքում կբարելավվեն լավարկված սոցիալական ծառայություններին (առողջապահություն, կրթություն եւ ջրամատակարարում) եւ կենսապահովման միջոցներին ընտանիքների եւ համայնքի հասանելիությունը, զբաղվածության եւ տնտեսական գործունեության հնարավորությունները: Տեղահանված ընտանիքների եւ փախստականների համար կբարելավվի ծառայություններին հասանելիությունը, առողջական վիճակի ցուցանիշները եւ կընդլայնվեն կենսապահովման հնարավորությունները:

Նկարագրությունը

Հայաստանի Սյունիքի մարզում առաջարկվող Գործողությունը նախատեսված է կարելու սոցիալական ենթակառուցվածքները հզորացնելու համար: Սա ներառում է հիմնական օբյեկտների վերականգնում եւ շինարարություն, ինչպիսիք են Տեխնիկական եւ մասնագիտական կրթության եւ ուսուցման քոլեջները, առողջապահական օբյեկտները, ներառյալ՝ կենսական

նշանակության ջրային ենթակառուցվածքի վերականգնումը՝ հիմնականում Սյունիքի մարզի գյուղական տարածքներում՝ տեղահանված անձանց եւ ընդունող համայնքների հիմնական կարիքները բարելավելու եւ արժանապատիվ կենսապայմաններ ապահովելու համար:

Ենթագործողությունների ցանկը սահմանվում է Իրականացնող մարմնի կողմից՝ Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) կողմից հաստատված սկրինինգային մեթոդաբանության օգտագործմամբ: Իրականացնող մարմինը ենթաձրագրերի վերջնական ցանկը ներկայացնում է Բանկի հաստատմանը՝ նախապես սահմանված ձեւաչափով, որը համաձայնեցվում է իրականացման փուլում: Ներկայացման ենթակա այս փաստաթղթերի կազմում ներառվում է գնումների մանրամասն պլան: Կարելի է նշել, որ ենթագործողությունների ցանկն ունի նախնական բնույթ, եւ դրանում կարող են կատարվել ճշգրտումներ գործողության իրականացման ընթացքում:

Ստորեւ բերված աղյուսակում ներկայացվում են սույն շրջանակային վարկային գծի պահանջներին համապատասխանող ոլորտներում նախանշված աշխատանքների տեսակները՝

Ոլորտ	Գործունեություն
Սոցիալական ենթակառուցվածք	Առողջապահություն Հանրային շենքերի (պոլիկլինիկաների, առաջնային բժշկական օգնության օբյեկտների եւ ամբուլատորիաների) կառուցում եւ վերականգնում. Բժշկական սարքավորումների գնում. Էներգաարդյունավետության վերականգնում եւ բարձրացում: Կրթություն Հանրային շենքերի կառուցում եւ վերականգնում. Կապանում եւ Սիսիանում գտնվող երկու ՏՄԿՈՒ քոլեջներ Էներգաարդյունավետության վերականգնում եւ բարձրացում.
Ջրամատակարարման համակարգեր	Համայնքային եւ գյուղական ջրամատակարարման համակարգերի ենթակառուցվածքի կառուցում, վերանորոգում եւ վերականգնում. Էներգաարդյունավետության վերականգնում եւ բարձրացում.

Վարկը կարող է նաեւ օգտագործվել Գործողության ղեկավարման, համակարգման, մոնիթորինգի, պլանավորման, նախագծման եւ վերահսկողության գործընթացներին աջակցելու նպատակով խորհրդականների եւ փորձագետների նշանակման գործընթացը ֆինանսավորելու համար:

Օրացույց

Բոլոր գործողությունները պետք է ֆիզիկապես իրականացվեն, եւ մեկնարկը պետք է տրվի Ուժի մեջ մտնելու ամսաթվից 5 տարվա ընթացքում:

Ա.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Ընդհանուր դրույթներ

Համապատասխանությունը. Բանկը, որպես կանոն, ֆինանսական միջոցներ տրամադրում է միայն այն համապատասխան գործողությունների համար, որոնք տնտեսապես, տեխնիկապես եւ ֆինանսապես հիմնավորված են ու էկոլոգիապես մաքուր:

Իրականացնող մարմինը ստուգում է Բանկի վերաբերելի եւ կիրառելի քաղաքականություններին եւ ուղեցույցներին համապատասխանությունը: Բոլոր գործողությունները պետք է համապատասխանեն Բանկի բնապահպանական եւ սոցիալական չափանիշներին (Բնապահպանական եւ սոցիալական հարցերով ձեռնարկ) եւ իրականացվեն Բանկի գնումների ուղեցույցի համաձայն:

Տրամադրման փուլում Բանկը ստուգում է ԵՆԲ ֆինանսավորման պահանջներին համապատասխանությունը՝ ըստ ստորեւ բերված ցանկի եւ համապատասխանության ընդունված չափորոշիչների:

Բանկն իրավունք է վերապահում վերանայելու տրամադրման ընթացակարգերը՝ Գործողության զարգացման նպատակով:

Ընդհանուր բացառություններ. Բանկը չի կարող ֆինանսավորել հետևյալ ծախսերը՝ ԱԱՀ եւ այլ հարկեր ու տուրքեր, հողատարածքների ձեռքբերում, շենքերի գնում, սպասարկման եւ այլ շահագործման ծախսեր, գործառնական ծախքեր, օգտագործված ակտիվների ձեռքբերում, շինարարության ընթացքում տոկոսներ, չգեներացվող հանրային ռեսուրսների օգտագործման լիցենզիաների (օրինակ՝ հեռահաղորդակցության լիցենզիաների), արտոնագրերի, ապրանքանիշերի եւ ապրանքանշանների գնում: Ֆինանսավորման ենթակա չեն նաեւ բացառապես ֆինանսական գործարքները:

Արգելված ոլորտները.

- Զենքի եւ զինամթերքի, սպառազինության եւ ռազմական տեխնիկայի արտադրությունը եւ շրջանառությունը.
- Ծխախոտի կամ ալկոհոլային արտադրանքի արտադրությունը եւ շրջանառությունը.
- Շահումով խաղերը եւ տոտալիզատորները.
- Կալանքի տակ պահելու վայրերը, օրինակ՝ քրեակատարողական հիմնարկները, ոստիկանության բաժինները, կալանքի տակ պահելու գործառույթներով դպրոցները.
- Ոլորտներ եւ գործունեության տեսակներ՝ խիստ էթիկական չափմամբ, որոնք ենթադրաբար պարունակում են հեղինակության առումով զգալի ռիսկ:

Սույն շրջանակային փոխառության շրջանակում չեն ներառվել ներդրումային նախաձեռնությունների հետևյալ կատեգորիաները.

- Մարզային եւ տեղական ճանապարհներից բացի այլ ճանապարհներ.
- Տեխնիկական նկարագրության մեջ նշված ոլորտներից բացի այլ ոլորտներում իրականացվող նախաձեռնություններ.
- Գործողության՝ տեխնիկական նկարագրության մեջ ներկայացված աշխարհագրական շրջանակից դուրս իրականացվող նախաձեռնություններ:

Տրամադրման ընթացակարգերը

Բանկի ֆինանսական միջոցները տրամադրվում են ԵՄ հիմնադրամների կողմից համաֆինանսավորվող նախաձեռնությունների համար՝ համապատասխան Օպերատիվ գործողությունների շրջանակներում՝ նախաձեռնության ծավալին համապատասխանեցված ընթացակարգերով եւ Բանկի՝ շրջանակային փոխառությունների համար գործող ընթացակարգերին համապատասխան.

ա) Իրականացնող մարմինն ընտրել է 1 մլն ԵՎՐՈՅԻՑ ցածր ներդրումային արժեքով համապատասխան նախաձեռնություններ: Ընտրված տարբերակների համապատասխանությունը պետք է հետազայում հաստատվի Բանկի ծառայությունների կողմից: Իրականացնող մարմինը պետք է ներկայացնի տրամադրման հայտ՝ Բանկի կողմից պահանջված ձեւաչափով (Ա.3.3 բաժնում սահմանված կարգով):

բ) 1 մլն ԵՎՐՈՅԻՑ մինչեւ 50 մլն ԵՎՐՈ արժեքով համապատասխան նախաձեռնությունները նախապես՝ մինչեւ ֆինանսավորման տրամադրումը ներկայացվում են Բանկի հաստատմանը՝ օգտագործելով Ա.3.4 բաժնում սահմանված ձեւանմուշը կամ տեխնիկատնտեսական հիմնավորումը: Բանկը պահպանում է լրացուցիչ տեղեկություններ հայցելու իրավունքը. անհրաժեշտ համարվելու դեպքում կիրականացվի նախաձեռնության մասնակի կամ խորացված գնահատում:

գ) 50 մլն ԵՎՐՈ արժեքով համապատասխան նախաձեռնությունները պետք է սկզբունքորեն դիտարկվեն առանձին փոխառություններ եւ առանձին գնահատվեն Բանկի ծառայությունների կողմից: Նախաձեռնությունները պետք է հաստատվեն մինչեւ Բանկի կողմից Իրականացնող մարմինն ֆինանսական միջոցների հատկացումը: Իրականացնող մարմինը տրամադրում է Բանկի կողմից՝ իր հայեցողությամբ պահանջված փաստաթղթերը՝ Բանկի կողմից Իրականացնող մարմինն առանձին ցուցված կարգով:

դ) Իրականացնող մարմինը պետք է տրամադրման հայտի հետ միասին ներկայացնի հետեւյալ փաստաթղթերը, որոնք հիմնավորում են տվյալ նախաձեռնությունների՝ բնապահպանական չափանիշներին համապատասխանությունը՝

- ՇՄԱԳ պահանջող նախաձեռնությունների դեպքում, համաձայն ԵՄ կամ ազգային օրենսդրության, Իրականացնող մարմինը Բանկին տրամադրում է (ՇՄԱԳ-ի) օրինակը (նախընտրելի է էլեկտրոնային ձեւաչափով), այդ թվում՝ հաշվետվության ամփոփագիրը (<Ա>), կամ տրամադրում է կայքի հղումը, որտեղ առնվազն 3 տարվա ընթացքում հրապարակվել է ՇՄԱԳ-ը, եւ հաստատում է, որ Նախաձեռնության մեջ ներառվել են ՇՄԱԳ-ի արդյունքում առաջարկված բոլոր մեղմացնող միջոցառումները՝ ԵՆԲ-ի հրապարակման քաղաքականությանը համապատասխանությունն ապահովելու համար:

- Իրականացնող մարմինը պետք է ներկայացնի Բնապահպանական եւ սոցիալական պլանները (օրինակ՝ վերաբնակեցման գործողությունների ծրագիրը, շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրերը եւ այլն) եւ (կամ), ըստ անհրաժեշտության, տեղեկություններ՝ բնապահպանական եւ սոցիալական կառավարման շրջանակի համաձայն:

- ազգային կամ միջազգային օրենսդրությամբ կամ համաձայնագրերով պաշտպանված բնապահպանական նշանակության տարածքի վրա ազդեցություն թողնելու հնարավորությամբ նախաձեռնությունների դեպքում Իրականացնող մարմինը բնապահպանության ոլորտի իրավասու մարմնից ձեռք է բերում հաստատում կամ Բանկի համար ընդունելի համարժեք գնահատում, որ նախաձեռնությունը զգալի բացասական ազդեցություն չի թողնում ազգային կամ միջազգային օրենսդրությամբ կամ համաձայնագրերով պաշտպանված բնապահպանական նշանակության տարածքի վրա:

ե) Իրականացնող մարմինը պահում եւ թարմացնում է համապատասխան փաստաթղթերը (ներառյալ՝ ՇՄԱԳ-ի հետ կապված շրջակա միջավայրի

ուսումնասիրությունները եւ բնության/կենսաբազմազանության գնահատումները՝ պահանջի դեպքում Բանկ ներկայացնելու համար: ԵՆԲ-ի կողմից այդ փաստաթղթերը պահանջվելու դեպքում Իրականացնող մարմինը պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնում է Բանկից հարցումն ստանալուց անմիջապես հետո:

զ) Տրամադրման հայտի համապատասխան աղյուսակները եւ առանձին ոլորտներին վերաբերող աղյուսակները կցվում են ֆինանսական պայմանագրին կամ համաձայնեցվում են Բանկի եւ Իրականացնող մարմնի միջեւ՝ նախքան տրամադրման առաջին հայտի ներկայացումը:

Բոլոր տեղեկությունները Բանկ են ներկայացվում անգլերենով՝ էլեկտրոնային եղանակով, իսկ աղյուսակները՝ էլեկտրոնային աղյուսակների ձեւով:

Բանկն իրավունք է վերապահում միջնաժամկետ կտրվածքով վերանայելու տրամադրման ընթացակարգերը՝ Իրականացնող մարմնի հետ Գործողության զարգացման նպատակով:

Տրամադրման հայտի ձեւանմուշը՝ 1 մլն ԵՎՐՈ-ից պակաս արժեքով նախաձեռնությունների համար

ՀԱՄԱՐ	Նախաձեռնության համարը	Տեղանքը Մունիցիպալիտետում	Պատասխանառու ոլորտը	Միջամտության նկարագրությունը	Ընդհանուր ներդրումային արժեքը ԵՎՐՈ (Ա)	Համաֆինանսավորող սուբյեկտը (Բ)	Աշխատանքների մեկնարկը (Գ)	Աշխատանքների ավարտը (Դ)	Էներգաարդյունավետությունը (Ե)	Գնումների մասին տեղեկությունները (Զ)	Բնապահպանության տեղեկությունները (Է)
1											
2											
3.											
...											

Համար՝ Ենթանախագծի (նախաձեռնության) եզակի ծածկագիրը

- Ա) Տրամադրման պահին ընդհանուր ներդրումային արժեքը.
- Բ) Համաֆինանսավորող սուբյեկտը եւ գումարի չափը՝ ԵՄ, Հայաստանի կառավարություն, տեղական սուբյեկտներ, այլ (նշել).
- Գ) Աշխատանքների մեկնարկը եւ աշխատանքների ավարտը կապված են շինարարության փաստացի ժամկետի հետ.
- Դ) Տրամադրել մանրամասն տեղեկություններ գնումների, Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակված մրցույթի հայտարարությունների մասին, նշել ամսաթիվը եւ կայքի էլեկտրոնային հղումը.
- Ե) Էներգաարդյունավետություն՝ Նախաձեռնության շրջանակներում ակնկալվող էներգախնայողության մասին նշում.
- Զ) Գնումների մասին տեղեկություններ՝ Գնումների տեսակի մասին նշում՝ ուղղակի, ազգային.
- Է) Բնապահպանական տեղեկություններ՝ նշում, եթե նախաձեռնության շրջանակներում անհրաժեշտ է ՇՄԱԳ՝ Հայաստանի օրենսդրության համաձայն: Տրամադրեք տեղեկություններ նախաձեռնությունների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության եւ ԵՄ բնապահպանական հրահանգներին (մասնավորապես՝ ՇՄԱԳ եւ կենսաբազմազանության մասին հրահանգները) դրա համապատասխանության մասին.
- Ը) Կատարեք նշում, եթե նախաձեռնությունը պարունակում է գենդերային հավասարության ապահովման գործընթացում դրա դերն ուժեղացնելուն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ Գենդերային գործողությունների ծրագրի նախագծի համապատասխան գործողությունները:
- Ենթածրագրի (նախաձեռնության) նկարագիրը՝ 1 մլն եվրոյից 50 մլն ԵՎՐՈ արժեքով նախաձեռնությունների համար (բացառությամբ ջրային ոլորտի)

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔ» ԾՐԱԳԻՐ (ԴՍԾ)

2022-0193

Նախաձեռնության անվանումը՝	Նախաձեռնության իրականացնող մարմինը՝
	Տեղանքը՝
Նախաձեռնության հերթական համարը՝	Ոլորտ՝
Կատարող՝	Տեսակ՝ նոր նախաձեռնություն/ընդլայնում/վերականգնում
	Ամսաթիվ՝
Կոնտակտային անձ՝	Իրականացնող մարմնի ստորագրությունը՝
Կոնտակտային տվյալներ (էլ. փոստ, հեռախոս)	

1. Նախաձեռնություն

1.1. Նախադրյալները

1.2. Նախաձեռնությունն իրականացնելու պատճառները եւ հիմնական նպատակները

1.3. Նախագծի տեխնիկական նկարագրությունը, ներառյալ՝ համապատասխան հիմնական պարամետրերը եւ կարողությունները

1.4. Նախաձեռնության մշակման, իրականացման եւ վերահսկողության համար պատասխանատու սուբյեկտը (սուբյեկտները)

1.5. Ներդրումային արժեքը (Ընդամենը)

ԵՎՐՈ

Նախագծում եւ վերահսկողություն	-
-------------------------------	---

Հող	-
Քաղաքացիական շինարարական աշխատանքներ (Շինարարական աշխատանքներ)	-
Սարքավորումներ	-
Այլ	-
Տեխնիկական բնույթի անկանխատեսելի ծախսեր	-
Գնային առումով անկանխատեսելի ծախսեր (...% աճ տարեկան), եթե կիրառելի է	-
Շինարարության ընթացքում տոկոսներ	-
Ընդամենը	-

1.6. Ակնկալվող ծախսերի ժամանակացույցը (ԵՎՐՈ)

Տարեթիվ	2025	2026	2027	2028	Ընդամենը
ԵՎՐՈ					

1.7. Տեխնիկական/տնտեսական առումով ակնկալվող ծառայության ժամկետը (տարի)

1.8. Իրականացման ժամկետը (ամսաթվեր՝ ամիս, տարի)

ա) մեկնարկ.

բ) ավարտ.

1.9. Նախաձեռնությունն իրականացնելու համար անհրաժեշտ թույլտվությունը Նշեք համապատասխան թույլտվությունը (թույլտվությունները) տրամադրող մարմնի (մարմինների) անվանումը (անվանումները) եւ թույլտվությունը (ները) տրամադրված լինելու կամ չլինելու հանգամանքը: Թույլտվությունները տրամադրված չլինելու դեպքում նշեք ակնկալվող ամսաթիվը:

1.10. Աշխատատեղերը, որոնց վրա անդրադառնում է ներդրումը Աշխատատեղերի թիվը, որոնք նախաձեռնության իրականացման հետեւանքով ստեղծվելու են, պահպանվել են կամ վերանալու են

ա) շինարարության ընթացքում՝	
բ) շինարարությունից հետո (շահագործում եւ սպասարկում)՝ պահպանված	

1.11. Ֆիզիկական ցուցանիշներ

Նշեք (քանակապես) նախաձեռնության նախանշված ֆիզիկական արդյունքը:

Ցուցանիշի սահմանումը	անվանումը	եւ	Ելակետային (տարի)	Թիրախային արժեք (տարի)
ա) ...				
բ)				
գ)				

1.12. Գնումները

Մրցույթի (մրցույթների) տեսակը եւ առանձնահատկությունները

1.13. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները

ա) Համառոտ պարզաբանեք շրջակա միջավայրի վրա նախաձեռնության ազդեցությունը:

բ) Արդյոք նախաձեռնությունը պարունակում է կոնկրետ բնապահպանական ռիսկեր կամ առավելություններ:

գ) ՇՄԱԳ պահանջող նախաձեռնությունների դեպքում, համաձայն ԵՄ կամ ազգային օրենսդրության, Իրականացնող մարմինը Բանկին տրամադրում է (ՇՄԱԳ-ի) օրինակը (նախընտրելի է էլեկտրոնային ձեւաչափով), այդ թվում՝ հաշվետվության ամփոփագիրը (ՀԱ), կամ տրամադրում է կայքի հղումը, որտեղ առնվազն 3 տարվա ընթացքում հրապարակվել է ՇՄԱԳ-ը, եւ հաստատում է, որ նախաձեռնության մեջ ներառվել են ՇՄԱԳ-ի արդյունքում առաջարկված բոլոր մեղմացնող միջոցառումները՝ ԵՆԲ-ի հրապարակման քաղաքականությանը համապատասխանությունն ապահովելու համար:

դ) Ազգային կամ միջազգային օրենսդրությամբ կամ համաձայնագրերով պաշտպանված բնապահպանական նշանակության տարածքի վրա ազդեցություն թողնելու հնարավորությամբ նախաձեռնությունների դեպքում Իրականացնող մարմինը բնապահպանության ոլորտի իրավասու մարմնից ձեռք է բերում հաստատում կամ Բանկի համար ընդունելի համարժեք գնահատում, որ նախաձեռնությունը զգալի բացասական ազդեցություն չի թողնում ազգային կամ միջազգային օրենսդրությամբ կամ համաձայնագրերով պաշտպանված բնապահպանական նշանակության տարածքի վրա:

ե) Բանկի ծառայությունները կարող են պահանջել լրացուցիչ տեղեկություններ (օրինակ՝ ՇՄԱԳ հաշվետվության ամփոփագիրը):

1.14. Գենդերային հավասարության մասով ազդեցությունները

ա) Արդյո՞ք նախագիծը կթողնի որեւէ բացասական սոցիալական ազդեցություն, այդ թվում՝ գենդերային հիմքով բռնության եւ ոտնձգության մասով: (Եթե այո) Արդյո՞ք սահմանվել են մեղմացնող միջոցառումներ եւ ընդգրկվել են Բնապահպանական եւ սոցիալական կառավարման ծրագրում (ԲՍԿԾ):

բ) Ինչպե՞ս են գենդերային հարցերը հաշվի առնվել նախագծի մշակման ընթացքում: Արդյո՞ք նախագիծը կարող է դրական ազդեցություն ունենալ գենդերային հավասարության ապահովման առումով՝ հաշվի առնելով դրա ընտրության, մշակման, իրականացման գործընթացները: Անհրաժեշտության դեպքում հղում կատարեք Գենդերային գործողությունների ծրագրի նախագծի գործողություններին:

1.15. Օբյեկտների շահագործում եւ սպասարկում

ա) Նախագծի իրականացման եւ սպասարկման համար պատասխանատու կազմակերպությունը.

բ) Գործառնական եւ սպասարկման ծախսերը, ինչպես նաեւ իրականացման եւ սպասարկման համար նախատեսված բյուջեն:

1.16. Տնտեսական եւ ֆինանսական գործոններ

ա) Բնակչությունը, որի վրա տարածվում է նախաձեռնությունը, կամ պահանջարկի այլ համապատասխան վերլուծություն (օրինակ՝ երթեւեկություն).

բ) Եթե կիրառելի է, ծախս-օգուտ համառոտ վերլուծությունը կամ տնտեսական հիմնավորվածության վերլուծությունը.

գ) Եթե կիրառելի է, ծախսերի փոխհատուցման մեխանիզմը (Արդյո՞ք օգտագործողներից պահանջվում է իրենց ներդրումն ունենալ Նախաձեռնության ծախսերի մարման գործում: Սակագնային քաղաքականություն):

1.17. Խորհրդակցություններ

ա) Հաստատեք, եթե նախաձեռնության վերաբերյալ անցկացվել են խորհրդակցություններ վերջնական շահառուների, տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ (կամ) համապատասխան շահագրգիռ անձանց հետ, եւ նշեք ամսաթիվը, վայրը եւ մասնակիցների քանակը:

բ) Շահագրգիռ անձանց կողմից բարձրացված հիմնական հարցերն ու մտահոգությունները, ինչպես նաեւ դրանց հասցեագրման եղանակները:

գ) Նկարագրեք հանրային մասնակցության եւ սույն նախաձեռնության համար նախատեսված փոխգործակցության ցանկացած այլ ձեւ:

1.18. Վերջնական շահառուներ

ա) Նկարագրեք սույն նախաձեռնության հիմնական վերջնական շահառուներին (հնարավորության դեպքում՝ տարբերակված ըստ սեռի, տարիքի, ծագման, սոցիալ-տնտեսական վիճակի), ինչպես նաեւ վերջնական շահառուների գնահատված ընդհանուր քանակը:

բ) Նշեք խոցելի խմբերը (օրինակ՝ ներքին տեղահանված անձինք, աղքատ ընտանիքներ, առանձին ընտանիք, հաշմանդամություն եւ հատուկ կարիքներ ունեցող անձինք եւ այլն), որոնց վրա նախաձեռնության միջոցառումները կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ:

2. Ընդհանուր եզրակացություններ եւ առաջարկություններ

--

Վայր՝

Ամսաթիվ՝

Իրականացնող մարմին՝

Պատասխանատու անձ՝

Նախաձեռնության ձեւանմուշը՝ Ջրային ոլորտի նախաձեռնությանն առնչվող տրամադրման հայտի համար

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նախաձեռնության անվանումը՝
- Նախաձեռնության համարը՝
- Մունիցիպալիտետ՝
- Տեղանքը՝
- Կոնտակտային անձ՝
 - Հասցե՝
 - Հեռախոսահամար՝
 - Ֆաքս՝
 - Էլ. փոստ՝
- _____ ի (Անուն, կազմակերպություն) կողմից լրացված ձեւանմուշը, Ամսաթիվ՝ _____
- _____ ի (Անուն, կազմակերպություն) կողմից հաստատված ձեւանմուշը, Ամսաթիվ՝ _____

2. ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Նախաձեռնությունը

- Հակիրճ նկարագրեք նախաձեռնությունը (ո՞րն է դրա նպատակը):
- Ներկայացրեք նախաձեռնության իրականացման վայրի մեկ կամ մի քանի ակնարկային քարտեզ («pdf» ձևաչափով, առավելագույնը «A3» ձևաչափով), որտեղ տարբերակվում են գոյություն ունեցող եւ նախատեսվող ենթակառուցվածքները եւ նշված են՝
 - Նախաձեռնության գործողության շրջանակին պատկանող բոլոր քաղաքները կամ գյուղերը,
 - առկա ջրային ռեսուրսները (ստորգետնյա ջրային օբյեկտները, լիճ ջրամբարները, լճերը, գետերը) եւ ջրամատակարարման համակարգի հիմնական ենթակառուցվածքները (ջրանցույցներ, մաքրման կայաններ, բաշխիչ ջրամբարներ, պոմպակայաններ, մագիստրալային ջրատարներ),
 - առկայության դեպքում՝ կեղտաջրերի հավաքման եւ մաքրման համակարգի հիմնական օբյեկտները (գլխավոր կոլեկտորներ, մաքրման կայաններ, գետեր կամ լճեր թափվող ջրեր),
 - կեղտաջրերից առանձին լինելու դեպքում՝ հեղեղաջրերի հավաքման եւ մաքրման համակարգի հիմնական օբյեկտները (հեղեղաջրերի պահման բաքեր, գլխավոր կոլեկտորներ, գետեր կամ լճեր թափվող ջրեր):

2.2. Նախադրյալները

- Առկա իրավիճակի նկարագրությունը եւ նախաձեռնությունն իրականացնելու ցանկության պատճառները, ներառյալ՝ ջրամատակարարման/ կեղտաջրերի/ շրջակա միջավայրի մասով առկա թերությունների/ռիսկերի նկարագրությունը: Մասնավորապես նշեք որեւէ հայտնի առողջական խնդիր, որը պետք է կարգավորվի նախաձեռնության իրականացմամբ, կամ ջրամատակարարման վրա հայտնի հնարավոր ազդեցություն/ ռիսկ:

- Ինստիտուցիոնալ եւ իրավական շրջանակ (ջրային ենթակառուցվածքի, գոյություն ունեցող օբյեկտների կառավարում, տնօրինում եւ շահագործում):

- Արդյո՞ք առկա է որեւէ հաստատված կամ հնարավոր միջմունիցիպալ համագործակցություն ջրամատակարարման կամ ջրահեռացման ծառայությունների ոլորտում, օրինակ՝ ջրամատակարարման մարզային համակարգ կամ այլ քաղաքների հետ համագործակցություն: Մասնավորապես, արդյո՞ք կան գաղափարներ, հնարավորություններ այլ մունիցիպալիտետների ջրամատակարարման/ջրահեռացման համակարգերին միանալու համար:

- Նկարագրեք բոլոր ընթացիկ ջրամատակարարման եւ ջրահեռացման նախաձեռնությունները եւ անհրաժեշտության դեպքում ներկայացրեք ֆինանսավորման աղբյուրները:

- Արդյո՞ք նախաձեռնությունը կազմում է ազգային, մարզային կամ քաղաքային գլխավոր հատակագծի, զարգացման պլանի կամ ռազմավարության մաս: Եթե այո, ապա նշեք պլանավորման ժամանակահատվածը (օրինակ՝ 2035 թվական) եւ հաստատման տարին:

- Նշեք գետի ավազանը կամ ենթավազանը, որին պատկանում է նախաձեռնության իրականացման վայրը, եւ նկարագրեք գետավազանային կառավարման մարմինը:

- Օգտագործվող բոլոր ջրային ռեսուրսների վերաբերալ տրամադրեք տեխնիկական մանրամասներ (օրինակ՝ հորատանցքերի խորությունը, լիճ ջրամբարներից ջրառի քանակը եւ խորությունը) եւ նկարագրեք մաքրման հիմնական փուլերը:

- Կեղտաջրերի մաքրման հնարավորության առկայության դեպքում ներկայացրեք կայանի (կայանների) հնարավորությունը եւ մաքրման օգտագործվող մեթոդը (մեթոդները), ներառյալ՝ տիղմի հեռացումը: Անհրաժեշտության դեպքում նշեք համակարգ բաց թողնված արդյունաբերական կեղտաջրերի տեսակները եւ նախնական մաքրման մակարդակը:

2.3. Սպասարկման գոտի

- Եթե սպասարկման գոտին եւ մունիցիպալիտետի տարածքը նույնն են, ապա լրացրեք միայն մեկ սյունակը:
- Զրամատակարարման եւ կեղտաջրերի հավաքման եւ մաքրման մասով սպասարկման գոտիները նույնը չեն, ապա նշեք համապատասխան բնակչությունը եւ չափերը:
- Տվյալների բացակայության դեպքում ներկայացրեք նախնական գնահատականը եւ նշեք «ե)»:

		Սպասարկման գոտի	Մունիցիպալիտետ
Ընդհանուր տվյալներ	Ընտանիքի միջին կազմը		
	Ընտանիքի միջին ամսական եկամուտը		
	Ներքին տեղահանված անձանց թվաքանակը		
Զրամատակարարում	Բնակչության ընդհանուր թիվը		
	Ֆիզիկական տարածքը (կմ ²)		
	Նախաձեռնության ազդեցությանը ենթարկված անձանց թիվը		
	Կենտրոնական համակարգից խողովակաշարային ջրամատակարարմամբ ապահովված անձանց թիվը		
	Արդյո՞ք դադարեցվում է որեւէ տարածքի ջրամատակարարումը տարվա որեւէ ժամանակահատվածում: Եթե այո, ապա երբ եւ քանի ժամ է իրականացվում ջրամատակարարումը:		

	Կենտրոնական համակարգի ջրամատակարարման ցանցի երկարությունը (բացի ներտնային միացումներից) կմ-ով		
	Ջրամատակարարման միացումների քանակը		
	Ջրամատակարարման միացումների քանակը, որոնց վրա տեղադրված են ջրաչափեր		

2.4. Սպասարկման գոտում միջին ջրային հաշվեկշիռը

- Պետք է ներկայացնել վերջին օրացուցային տարվա համար:
- Բոլոր տվյալները ներկայացվում են միջին օրական կտրվածքով:
- Տվյալների բացակայության դեպքում տրամադրեք նախնական գնահատականը (եւ նշեք «ե»)»՝ կամ նշեք «առկա չէ»:

2.4.1. Ջրի արդյունահանումը

Բաղադրիչ	Միավոր	Ծավալ
Ա. Ստորերկրյա ջրերի պոմպահանում	մ ³ /օր	
Բ. Աղբյուրից ջրի պոմպահանում	մ ³ /օր	
Գ. Մակերեսային ջրերի պոմպահանում գետից կամ լճից կամ ջրամբարից	մ ³ /օր	
Խմելու ջրի ընդհանուր արդյունահանված ծավալը (Ա+Բ+Գ)	մ ³ /օր	
Որից բաշխիչ ցանց է ներմղվել	մ ³ /օր	
Որից ինքնահոս եղանակով բաշխիչ ցանց է մատակարարվել	մ ³ /օր	

2.4.2. Ջրի բաշխումը

	Կենցաղային	Առետրային	Այլ
(Չ) Ջրաչափի օգտագործմամբ օրինական սպառում (մ ³ /օր)			
(ԱՉ) Եթե կիրառելի է՝ առանց ջրաչափի օրինական			

սպառում ($\text{մ}^3/\text{օր}$) (*)			
Միջանկյալ արդյունք (2+Ա2)			
Ընդհանուր հաշվառված սպառում ($\text{մ}^3/\text{օր}$)			
Գնահատված արտահոսք ($\text{մ}^3/\text{օր}$)			
Կենցաղային սպառում՝ մեկ շնչի հաշվով (լիտր/անձ/օր)			

(*) կիրառելի է միայն Ֆիքսված բաղադրիչի առկայության դեպքում (օրինակ՝ հաշվարկ՝ մեկ միացման համար, հաշվարկ՝ մեկ բնակչի համար, հաշվարկ՝ մեկ ամսվա համար, միանվագ): Պարզաբանման համար տե՛ս 2.14.1 եւ 2.14.2 բաժինները:

2.4.3. Կեղտաջրերի հավաքումը եւ մաքրումը

Հավաքված կեղտաջրեր ($\text{մ}^3/\text{օր}$)	
Մաքրման ենթարկված կեղտաջրեր ($\text{մ}^3/\text{օր}$)	
Ստորերկրյա ջրերից/ մակերեսային կոյուղագծեր գնահատված ներթափանցումը ($\text{մ}^3/\text{օր}$)	

2.5. Վերջին 5 տարվա միտումները

- Բոլոր տվյալները ներկայացվում են ամբողջ տարվա արդյունքների հանրագումարի ձեւով:
- Տվյալների բացակայության դեպքում տրամադրեք նախնական գնահատականը (եւ նշեք «ե»)»՝ կամ նշեք «առկա չէ»:
- Բնակչության թվաքանակի կամ ծավալների զգալի նվազման կամ աճի դեպքում ներկայացրեք մեկնաբանություն:

2.5.1. Խմելու ջրի մատակարարումը

Տարի	Սպասարկվող բնակչություն	Ջրի ընդհանուր արդյունահանում	Հաշվառված կենցաղային սպառում	Հաշվառված այլ սպառում	Ընդհանուր հաշվառված սպառում (սյուն 5 = սյուն 3 +	Չհաշվառված ջուր (սյուն 6 = 2-5)	Խողովակաշարի պայթյուն
------	-------------------------	------------------------------	------------------------------	-----------------------	--	---------------------------------	-----------------------

					սյուն 4)		
Միավոր	Բնակիչներ	մ ³ /տարի	մ ³ /տարի	մ ³ /տարի	մ ³ /տարի	մ ³ /տարի	Թիվ
Սյունակ	1	2	3	4	5	6	7
2025							
2026							
2027							
2028							
2029							

2.6. Տեխնիկական նկարագրությունը

Նկարագրությունը ներառում է.

- Ընտրված լուծման հակիրճ հիմնավորումը, նշում դիտարկված տարբերակների մասին (առկայության դեպքում) եւ դրանք չընտրելու պատճառները:
- Համապատասխան հիմնական պարամետրերը (միայն հիմնական տվյալները)՝
 - ջրատար խողովակաշար՝ երկարություն, տրամագիծ եւ նյութ (նյութեր).
 - ջրամբարներ՝ տարողություն, ջրի բարձրություն, նյութ.
 - պոմպակայաններ՝ առավելագույն տարողություն, պոմպերի քանակ, հաստատուն կամ փոփոխական արագություն, կառավարում (տեղում կամ հեռավար):
- Կիրառված նախագծային ենթադրությունները (օրինակ՝ մեկ բնակչի հաշվով ջրի պահանջարկը, աղտոտվածության մակարդակը եւ այլն) եւ պլանավորման ժամանակահատվածը՝ ըստ տարիների (օրինակ՝ 10 տարի, 20

տարի) կամ ըստ տարեթվերի (2030 թվական, 2040 թվական): Չափանիշների կամ նախագծային նորմերի ցանկ ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

- Անհրաժեշտության դեպքում 2.1 կետում արդեն իսկ նշված քարտեզից բացի կցեք համապատասխան մասշտաբի եւ ձեւաչափի («pdf» ձեւաչափ, առավելագույն «A3» չափ) պլաններ կամ գծագրեր, որտեղ ներկայացված է դասավորության ուրվագիծը, նշելով առկա եւ առաջարկվող հիմնական ջրամատակարարման եւ ջրահեռացման ենթակառուցվածքները, օրինակ՝ ջրատար խողովակաշարերը, պոմպակայանները, մաքրման կայանները, գլխավոր կոլեկտորները: Պետք չէ ներկայացնել մանրամասն գծագրեր, օրինակ՝ ըստ պրոֆիլային հատույթի, լայնակի հատույթի եւ այլն:

2.7. Նախաձեռնության նախապատրաստական աշխատանքների կատարման մակարդակը եւ նախապատրաստական աշխատանքների կատարման/հրականացման պարտավորությունները

- Կատարված համապատասխան ուսումնասիրությունների եւ պլանների ցանկը: Նշեք հաստատման տարեթիվը, կազմակերպության անվանումը, կազմակերպության տեսակը (խորհրդական, պետական հիմնարկ/ գերատեսչություն, այլ):

	Առկա փաստաթղթերը (Նշում կատարեք համապատասխան վանդակում)			Թույլտվություննե րը (նշեք ամսաթվերը)		
Բաղադրիչ (անհրաժեշտ ության դեպքում՝ պայմանագրի անվանումը)	Տեխնիկատնտե սական հիմնավորում	Նախնա կան նախագի ծ	Մանրամ ասն նախագի ծ	Մրցութայի ն փաստաթղ թերի նիշք	Ձեռ ք է բեր վել	Ակնկալ վում է

- Նախաձեռնության յուրաքանչյուր բաղադրիչի համար ներկայացրեք (օրինակ՝ ջրառ, մաքրման կայան, մայրուղային ջրատար) պլանավորման եւ նախագծման մակարդակը՝ աղյուսակի ձեւով: Արդյո՞ք պլանավորման եւ (կամ) շինարարական թույլտվությունները/ հաստատումները ձեռք են բերվել բոլոր բաղադրիչների համար: Եթե այո, ապա նշեք համապատասխան ամսաթվերը, իսկ եթե ոչ, ապա նշեք ակնկալվող ամսաթվերը: Եթե անհրաժեշտ է մի քանի թույլտվություն, ապա ըստ անհրաժեշտության ավելացրեք նոր սյունակներ:

- Արդյո՞ք ընտրվել են խոշոր օբյեկտների (օրինակ՝ պոմպակայաններ, ջրամբար, ջրամաքրման կայան) տեղադրման վայրերը:

- Արդյո՞ք ձեռք են բերվել նախաձեռնության իրականացման համար անհրաժեշտ հողերը: Եթե ոչ, ապա նշեք ընթացիկ կարգավիճակը եւ ձեռքբերման ակնկալվող ամսաթիվ:

- Արդյո՞ք նախաձեռնությամբ պահանջվել է ժամանակավոր կամ մշտական ոչ կամավոր վերաբնակեցում: Եթե այո, ապա ներկայացրեք բոլոր վերաբերելի տեղեկությունները:

- Նշեք նախաձեռնության հետագա նախապատրաստական աշխատանքների իրականացման համար պատասխանատու գերատեսչությունների/ կազմակերպությունների/ խորհրդականների անվանումները (նախագծային/մրցութային փաստաթղթեր):

2.8. Շրջակա միջավայրի վրա (այդ թվում՝ հիդրոլոգիական) եւ սոցիալական ազդեցությունները, կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունը

- Հակիրճ պարզաբանեք հնարավոր բացասական ազդեցությունները, որ նախաձեռնությունը կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա (շինարարության փուլում կամ շահագործման փուլում):

- Արդյո՞ք օրենքով պահանջվում է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ): Արդյո՞ք կատարվել են կամ հաստատվել են ՇՄԱԳ-ները: Նկարագրեք հանրային մասնակցության եղանակը:

- Արդյո՞ք նախաձեռնության իրականացման համար պահանջվում է հողի ձեռքբերում: Արդյո՞ք դա կհանգեցնի օտարման գործընթացի մեկնարկի:
- Արդյո՞ք անհրաժեշտ է կազմել վերաբնակեցման պլան՝ համաձայն ՎՔՇՓ-ի:
- Արդյո՞ք նախաձեռնությունը կթողնի բացասական սոցիալական ազդեցություն: (Եթե այո) Արդյո՞ք սահմանվել են մեղմացնող միջոցառումները եւ ընդգրկվել են Բնապահպանական եւ սոցիալական ծրագրում:
- Արդյո՞ք նախատեսվող շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ է աշխատողների զգալի ներհոսք (500 000 կամ ավելի աշխատող): (Եթե այո) Արդյո՞ք կազմվել է Ներհոսքի կառավարման ծրագիր:
- Արդյո՞ք նախաձեռնության իրականացման վայրը գտնվում է գետի/առվակի հարեանությամբ. որքան է կազմում ընդունող գետի/առվակի մոտավոր նվազագույն հոսքը (մ³/վայրկյան):
- Նախաձեռնության իրականացման վայրում երբեւէ եղե՞լ են հեղեղումներ:
- Նախաձեռնության իրականացման վայրում երբեւէ գրանցվե՞լ է երաշտ:
- Արդյո՞ք իրականացրել եք կլիմայական ռիսկերի նկատմամբ խոցելիության գնահատում նախաձեռնության, նախաձեռնության իրականացման վայրի կամ մարզի համար: Եթե ոչ, արդյո՞ք նախաձեռնության բաղադրիչները նախագծելիս հաշվի առել եք հեղեղումների կամ երաշտի ռիսկերի բարձրացման հնարավորությունը:
- Արդյո՞ք շրջակայքում եւ գետի հոսանքին վարընթաց առկա են բնության պահպանության առումով հետաքրքրություն ներկայացնող տարածքներ (բնական արգելոցներ, հատուկ վայրի բնություն/ բնության առանձնահատկություններով տարածքներ): Եթե այո, ՇՄԱԳ-ի կամ այլ

ընթացակարգի շրջանակներում արդյո՞ք իրականացվել է նախնական գնահատում:

- Արդյո՞ք տարածքում գործում են արդյունաբերական ձեռնարկություններ: Ի՞նչ արդյունաբերական ձեռնարկություններ են գործել նախկինում:

- Արդյո՞ք նախագիծը կթողնի որեւէ բացասական սոցիալական ազդեցություն, այդ թվում՝ գենդերային հիմքով բռնության եւ ոտնձգության մասով: (Եթե այո) Արդյո՞ք սահմանվել են մեղմացնող միջոցառումներ եւ ընդգրկվել են Բնապահպանական եւ սոցիալական կառավարման ծրագրում (ԲՍԿԾ):

- Ինչպե՞ս են գենդերային գործոնները հաշվի առնվել նախագծի մշակման ընթացքում: Արդյո՞ք նախագիծը կարող է դրական ազդեցություն ունենալ գենդերային հավասարության ապահովման առումով՝ հաշվի առնելով դրա ընտրության, մշակման, իրականացման գործընթացները: Անհրաժեշտության դեպքում հղում կատարեք Գենդերային գործողությունների ծրագրի նախագծի գործողություններին:

2.9. Նախատեսված իրականացման ժամկետը

- Պայմանագիրը պատրաստ է կնքման՝ Բանկի կողմից նկարագրի հաստատումից [...] ամիս հետո:

- Շինարարության ժամկետ՝ Կապալառուին ծանուցումից [...] ամիս հետո:

2.10. Ներդրումային ծախսերի նախահաշիվը

- Բոլոր արտադրատեսակները նշեք ընթացիկ գներով, որոնք պետք է համապատասխանաբար թարմացվեն յուրաքանչյուր բաղադրիչի դեպքում, եթե կիրառելի է:

• Ներդրումային ծախսերի բացվածքը, ֆինանսավորման ծրագիրը եւ ֆինանսական միջոցների աղբյուրները եւս պետք է ներկայացվեն «EXCEL» էլեկտրոնային աղյուսակի ձեւով, որի ձեւանմուշը ներկայացվում է Բանկի կողմից:

	ԵՎՐՈ ⁽¹⁾
Նախագծում	
Նախագծման աշխատանքների վերահսկողություն Քաղաքացիական շինարարական աշխատանքներ Քաղաքացիական շինարարական աշխատանքների վերահսկողություն - եւ այլն	
Սարքավորումներ - Միավոր 1 - Միավոր 2 - եւ այլն	
Հողի ձեռքբերում	
Այլ	
Տեխնիկական բնույթի անկանխատեսելի ծախսեր	
Գնային առումով անկանխատեսելի ծախսեր (...% աճ տարեկան), եթե կիրառելի է ⁽²⁾	
ԱԱՀ ⁽³⁾	
Ընդամենը	

1) 1 եվրո = [լրացրեք կիրառվող փոխարժեքը, որը պետք է համապատասխանաբար թարմացվի]:

2) Հստակեցրեք ինչպիսի անկանխատեսելի ծախսեր են կատարվել, եւ որքան է կազմել դրանց գումարը:

3) Ծանոթագրություն (Պարզաբանեք ԱԱՀ հարկման ռեժիմները եւ տոկոսը):

2.11. Ակնկալվող ծախսերի ժամանակացույցը՝ ըստ ֆինանսական միջոցների աղբյուրի (ԵՎՐՈ, առանց ԱԱՀ)

Ընդամենը	Բացվածքը՝ ըստ տարվա					
	2025	2026	2027	2028	2029	հետագա տարիներ

2.12. Գնումների պլանը

ԵՆԲ-ի կողմից տրամադրվող առանձին «EXCEL » նիշքը՝

Գնումների պլան															
Համարը	Պայմանագրի անունը ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող %-ը ԵՆԲ-ի ֆինանսավորում (ԵՎՐՈ) Այլ ֆինանսավորող	Իրականացնող մարմնի համարը	Պայմանագրի տեսակը	Հաշվառման օր (ԵՎՐՈ)	Ֆինանսավորումը			Գնումների մեթոդը	Մրցութային փաստաթղթերը	Արդյունք հրապարակվել է ԵՄՊՏ-ում:	Հրապարակման նախատեսված ամսաթիվը	Ներկայացման նախատեսված ամսաթիվը	Պայմանագրի կնքման նախատեսված ամսաթիվը	Պայմանագրի գործողության մասին խափանող տեղեկություններ	Գնումների կապակի
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Դաշտեր															
Համար		Հաջորդաբար շնորհվող կամայական համար													
Պայմանագրի համարը		Պայմանագրի գործողության շրջանակը կամ համառոտ նկարագրությունը													
Մրցույթի շրջանակներում իրականացնող մարմնի նույնականացման համարը		Ծածկագիր կամ հերթական համար, որն իրականացնող մարմինը կիրառում է պայմանագրին հղում կատարելու համար (առկայության դեպքում)													
Պայմանագրի տեսակը		Ձեռք բերվող պայմանագրի տեսակը՝ աշխատանքներ՝ ապրանքներ կամ ծառայություններ													
Հաշվարկային		Իրականացնող մարմնի կողմից պայմանագրի արժեքի գնահատումը, ներքետում													

գումարը	ներկայացված ընդհանուր գումարը պետք է համապատասխանի նախագծի ընդհանուր ծախսերի գումարին
ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող %-ը	Պայմանագրի՝ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման ենթակա մասնաբաժինը՝ նախագծի ֆինանսավորման պլանին համապատասխան
ԵՆԲ-ի ֆինանսավորում (ԵՎՐՈ)	Պայմանագրի հաշվարկային գումարը՝ բազմապատկած նախորդ պլանավորված տոկոսին, ստացված արժեքը պետք է հավասար լինի ԵՆԲ-ի կողմից տրամադրվող փոխառության գումարի չափին
Այլ ֆինանսավորողներ	Այլ ՄՖԿ-ների կամ ՋՄԲ-ների անվանումներ, որոնք համատեղ ֆինանսավորում են պայմանագիրը, եթե առկա են
Գնումների մեթոդը	Կիրառվող գնումների մեթոդը, որն ընտրվել է Գնումների ուղեցույցի 3.3 բաժնում ներկայացվածներից
Մրցութային փաստաթղթերը	Օգտագործված ստանդարտ մրցութային փաստաթղթերի տեսակը՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք կազմվել են այլ ՄՖԿ-ի ձեռնամուշի թե ազգային ձեռնամուշի հիման վրա
Հրապարակվել է ԵՄՊՏ-ում	Դրոշակ, որը ցույց է տալիս, որ մրցույթի հայտարարությունը հրապարակվում է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:
Հրապարակման նախատեսված ամսաթիվը	Մրցույթի հայտարարության հրապարակման՝ Իրականացնող մարմնի կողմից նախատեսված ամսաթիվը
Հայտի ներկայացման նախատեսված ամսաթիվը	Հայտի ներկայացման՝ Իրականացնող մարմնի կողմից նախատեսված ամսաթիվը
Պայմանագրի կնքման նախատեսված ամսաթիվը	Պայմանագրի կնքման՝ Իրականացնող մարմնի կողմից նախատեսված ամսաթիվը
Պայմանագրի գործողության ավարտի նախատեսված ամսաթիվը	Պայմանագրի գործողության ավարտի՝ Իրականացնող մարմնի կողմից նախատեսված ամսաթիվը
Գնումների կարգավիճակը	Գնումների գործընթացի կարգավիճակը (չի մեկնարկել՝ մրցույթի հայտարարությունը դեռևս չի հրապարակվել, ընթացիկ՝ մրցույթի հայտարարությունը հրապարակվել է, սակայն պայմանագիրը դեռ չի ստորագրվել, կամ պայմանագիրը ստորագրվել է)

2.13. Օբյեկտների շահագործման եւ սպասարկման (ՇՍ) ծախսերի տարրերը

Տվյալների բացակայության դեպքում ներկայացրեք նախահաշիվը եւ նշեք «ե» կամ նշեք «առկա չէ»:

Ծախսերի տարրեր	Միավոր	Ընթացիկ ՇՍ		ՇՍ-ն նախաձեռնության իրականացումից հետո	
		Ջուր	Ընդամենը	Ջուր	Ընդամենը
Ընդհանուր ՇՍ ծախսերը	Եվրո՝ տարեկան				
- որից էլեկտրաէներգիայի համար	Եվրո՝ տարեկան				
- որից անձնակազմի համար	Եվրո՝ տարեկան				

Էլեկտրաէներգիայի տեսակարար սպառումը	կՎտժ մաքրված 1 մ ³ -ի համար		[__]		---
Տեսակարար ՇՍ ծախս	Եվրո մաքրված 1 մ ³ -ի համար		[__]		----
Անձնակազմ	Թվաքանակ				

2.14. Ջրամատակարարման սակագները

2.14.1. Ընթացիկ ֆիքսված բաղադրիչը՝ սպառումից անկախ

• Նշեք այն բաղադրիչը, որը հաշվարկվում է ծառայության մատուցման համար (օրինակ՝ վճար մեկ մետրի համար, միացման համար, մեկ շնչի հաշվով, ըստ գույքի) կամ որեւէ այլ հիմքով (օրինակ՝ պարտքի մարման վճար), որը որեւէ առնչություն չունի սպառման հետ: Չշփոթեք միանվագ վարձավճարի հետ (տե՛ս 2.14.2 բաժինը):

• Անհրաժեշտության դեպքում տարբերակեք ջրամատակարարումը եւ ջրահեռացումը, այնուհետեւ դասակարգեք ըստ կատեգորիաների, օրինակ՝ օգտագործողների խմբեր (կենցաղային, առետրային եւ այլ), ջրաչափի տրամագիծ եւ այլն:

• Նշեք համապատասխան գումարները՝ վճարման պարբերականությամբ (ամսական, եռամսյակային, տարեկան եւ այլն):

• Առանձին ֆիքսված բաղադրիչի բացակայության դեպքում նշեք «առկա չէ»:

2.14.2. Սպառման ընթացիկ ֆիքսված բաղադրիչը (միանվագ)

• Եթե սպառողները չեն տեղադրել ջրաչափեր, ապա սպառողները կարող են կատարել միանվագ վճարում: Եթե սպառողների միայն մի մասն է այս

կերպ վճարում կատարում, ապա նշեք նրանց թվաքանակը կամ ընդհանուր թվաքանակի տոկոսը:

- Անհրաժեշտության դեպքում տարբերակեք ջրամատակարարումը եւ ջրահեռացումը, այնուհետեւ դասակարգեք՝ ըստ կատեգորիաների, օրինակ՝ օգտագործողների խմբեր (կենցաղային, առետրային եւ այլ), ջրաչափի տրամագիծ եւ այլն:

- Նշեք համապատասխան գումարները՝ վճարման պարբերականությամբ (ամսական, եռամսյակային, տարեկան եւ այլն):

- Ֆիքսված «միանվագ» բաղադրիչի բացակայության դեպքում նշեք «առկա չէ»:

2.14.3. Ընթացիկ ծավալային բաղադրիչը

	Հիմքը	Կատեգորիա	Կատեգորիա	Կատեգորիա
Ա) Զրային բաղադրիչ	Չափված ծավալը			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱԿԱԳԻՆԸ՝ ՄԵԿ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՌԱՆՑ ԱԱՀ-ի				
ԱԱՀ				
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱԿԱԳԻՆԸ՝ ՄԵԿ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐԻ ՀԱՄԱՐ				

- Անհրաժեշտության դեպքում տարբերակեք ջրամատակարարումը եւ ջրահեռացումը, այնուհետեւ դասակարգեք՝ ըստ կատեգորիաների, օրինակ՝ օգտագործողների խմբեր (կենցաղային, առետրային եւ այլն), ծավալից կախված սակագնային խմբեր եւ այլն:

- Նշեք կիրառվող բոլոր հարկերը (օրինակ՝ արդյունահանման հարկ, աղտոտման հարկ, ջրային ֆոնդ եւ այլն):

- Բոլոր հարկերի, այդ թվում՝ ԱԱՀ-ի համար նշեք հաշվարկման հիմքը (օրինակ՝ $xx \text{ UAH}/\text{մ}^3$ or $xx \text{ Ա, Բ կամ Ա+Բ-ի \%}$ եւ այլն):

- Նշեք համապատասխան գումարները կամ տոկոսները՝ վճարման պարբերականությամբ (ամսական, եռամսյակային, տարեկան եւ այլն):

2.14.4. Սակագների փոփոխությունը

Նկարագրեք հետագա մի քանի տարվա ընթացքում սակագների անհրաժեշտ եւ նախատեսվող փոփոխությունը: Եթե ջրային ենթակառուցվածք է ստեղծվում այնպիսի գյուղում կամ քաղաքում, որտեղ նախկինում չի եղել այդպիսի ենթակառուցվածք, ապա առնվազն 2.13 բաժնում ներկայացված ՇՍ ծախսերը մարելու համար անհրաժեշտ սակագների հաշվարկը պարտադիր է:

2.15. Նախաձեռնության ցուցանիշները

Ընտրեք համապատասխան ցուցանիշները:

2.15.1. Զրամատակարարումը

Կառուցված կամ վերականգնված ջրի մաքրման կայանի հզորությունը	մ ³ /օր
Կառուցված կամ արդիականացված ջրատարի կամ բաշխիչ խողովակների երկարությունը	կմ
Կատարված կամ վերականգնված ներտնային միացումները	քանակ
Անվտանգ խմելու ջուր օգտագործող բնակչություն	բնակիչներ
Էլեկտրաէներգիայի սպառմամբ ջրամատակարարում	կՎտժ/մ ³
Չհաշվառված ջուր	%
Սպասարկման մակարդակ	%

2.16. Կոմունալ ծառայություններից դրամական հոսքը

Ներկայացրեք օպերատորի (որպես կանոն ԱՍԾ) բյուջեի ամփոփ բացվածքը, որտեղ արտացոլված են եկամտի տարբեր աղբյուրներ եւ գործառնական ու կապիտալ ծախսերը, այդ թվում՝ ջրամատակարարման հետ չկապված եւ սանիտարական մաքրման ոլորտների համար, ինչպես նաեւ մունիցիպալիտետից եւ հակառակ ուղղությամբ փոխանցումները:

Վերոնշյալի նպատակով կարող է օգտագործվել նաեւ բիզնես ծրագիրը: Տվյալները պետք է լավագույն դեպքում վերաբերեն նախորդ 3 տարիներին, ինչպես նաեւ հետագա 3 տարիներին (այսինքն՝ ներառյալ նախաձեռնության իրականացման հետեւանքները):

2.17. Ծախս-օգուտ տնտեսական վերլուծությունը

Ավելի քան 5 միլիոն եվրո արժեքով կապիտալ ներդրումների նախաձեռնության դեպքում դրա տնտեսական նպատակահարմարությունը պետք է հիմնավորվի ծախս-օգուտ տնտեսական վերլուծությամբ, որն ընդգրկում է շինարարության ժամանակահատվածը, ներառյալ՝ գործողությունների իրականացման ժամանակահատվածը, ինչը կազմում է առնվազն 25 տարի (այդ թվում՝ տնտեսական շահութաբերության դրույքի եւ տնտեսական զուտ ներկա արժեքի հաշվարկը): Տնտեսական ծախսերի եւ օգուտների կանխատեսվող հոսքերում պետք է արտացոլվեն նախորդ բաժիններում ներկայացված տվյալները: Թվային տվյալները պետք է լրացվեն հաստատուն գներով եւ պետք է ներառեն տարբեր ծախսերի եւ օգուտների մասին մանրամասն տեղեկություններ:

2.18. Ֆինանսական կայունության վերլուծությունը

Ավելի քան 5 մլն եվրո արժեքով կապիտալ ներդրումների նախաձեռնության դեպքում դրա ֆինանսական կայունությունը պետք է հիմնավորվի դրամական հոսքերի վերլուծությամբ, որն ընդգրկում է շինարարության ժամանակահատվածը, ներառյալ՝ գործողությունների իրականացման ժամանակահատվածը, ինչը կազմում է առնվազն 25 տարի (այդ թվում՝ ֆինանսական շահութաբերության դրույքի եւ ֆինանսական զուտ ներկա արժեքի հաշվարկը): Դրամական հոսքերի կանխատեսումներում պետք է արտացոլվեն նախորդ բաժիններում ներկայացված տվյալները: Թվային տվյալները պետք է լրացվեն հաստատուն գներով եւ պետք է ներառեն եկամտի տարբեր աղբյուրների եւ գործառնական եւ կապիտալ (ներառյալ՝ փոխարինման) ծախսերի մասին մանրամասն տեղեկություններ:

2.19. Մատչելիության վերլուծությունը

Ավելի քան 5 մլն եվրո արժեքով կապիտալ ներդրումների նախաձեռնության դեպքում ջրամատակարարման եւ (կամ) ջրահեռացման ծառայությունների մատչելիությունը պետք է հիմնավորվի՝ օպերատորի սպասարկման գոտում ցածր եկամուտ ունեցող ընտանիքի ջրամատակարարման եւ (կամ) ջրահեռացման միջին վարձավճարը հաշվարկելով ցածր եկամուտ ունեցող ընտանիքի ծախսային բյուջեի տոկոսային հարաբերակցության ձեւով, եւ պետք է համեմատել այս տոկոսային հարաբերակցությունը պաշտոնապես սահմանված մատչելիության սահմանաչափի հետ (իսկ վերջինիս բացակայության դեպքում միջազգայնորեն ընդունված 3% սահմանաչափը կիրառվում է ջրամատակարարման ծառայությունների դեպքում, եւ 2% ջրահեռացման ծառայությունների դեպքում):

Բոլոր ենթադրությունները պետք է հստակ նշվեն եւ հիմնավորվեն:

Ա.2. ԲԱՆԿ ՈՒՂԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԱԽԱՁԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԵԹՈԴԸ

1. Տեղեկությունների ուղարկում՝ պատասխանատու անձի նշանակում

Ստորեւ ներկայացված տեղեկությունները պետք է Բանկ ուղարկվեն հետեւյալ անձանց պատասխանատվության ներքո.

	Ֆինանսական հարցերով կոնտակտային անձ	Տեխնիկական հարցերով կոնտակտային անձ
Ընկերություն	ՀՀ ֆինանսների նախարարություն	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Կոնտակտային անձ	Միլենա Հովհաննիսյան	Աշոտ Խաչատրյան
Պաշտոն	Վարչության պետ	Գործադիր տնօրենի տեղակալ

Գործառույթ/ Բաժին և ֆինանսական տեխնիկական	Միջազգային համագործակցության վարչություն	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցե	Մելիք Ադամյան 1, 0010, Երևան	Կարապետ Ուլնեցի 31/1, 0037, Երևան
Հեռախոս	+37411800322	+37460501560
Ֆաքս		
Էլ. փոստ	secretariat@minfin.am	akhachatryan@wsdp.am

Վերոնշյալ կոնտակտային անձը (անձինք) տվյալ պահին համարվում է (են) պատասխանատու կոնտակտային անձ (անձինք):

Որել փոփոխության դեպքում Վարկառուն անմիջապես տեղեկացնում է ԵՆԲ-ին:

Վերոնշյալ կոնտակտային անձը (անձինք) տվյալ պահին համարվում է (են) պատասխանատու կոնտակտային անձ (անձինք):

Որել փոփոխության դեպքում Վարկառուն անմիջապես տեղեկացնում է ԵՆԲ-ին:

2. Տեղեկություններ որոշակի հարցերի վերաբերյալ

Վարկառուն հետևյալ տեղեկությունները ուղարկում է Բանկ ամենաուշը մինչև ստորել նշված վերջնաժամկետի ավարտը:

Փաստաթուղթ/տեղեկություններ	Վերջնաժամկետ
Գործողության՝ ՇՄԱԳ պահանջող բաղադրիչների համար՝ ԵՆԲ-ի բնապահպանական քաղաքականությունների և ուղեցույցների համաձայն՝ Իրականացնող մարմինը Բանկ է ներկայացնում ՇՄԱԳ-ի օրինակը (նախընտրելի է էլեկտրոնային ձևաչափով), այդ թվում՝ հաշվետվության ամփոփագիրը (ՀԱ), կամ տրամադրում է կայքի հղումը, որտեղ առնվազն 3 տարվա ընթացքում հրապարակվել է ՇՄԱԳ-ը: Իրականացնող մարմինը հաստատում է, որ նախաձեռնության մեջ ներառվել են ՇՄԱԳ-ի արդյունքում առաջարկված բոլոր մեղմացնող միջոցառումները՝ ԵՆԲ-ի հրապարակման	Մինչև Բանկի կողմից տվյալ ներդրումային նախաձեռնությանը ֆինանսական միջոցներ տրամադրելը:

քաղաքականությանը համապատասխան: - Ազգային կամ միջազգային օրենսդրությամբ կամ համաձայնագրերով պաշտպանված բնապահպանական նշանակության տարածքի վրա ազդեցություն թողնելու հնարավորությամբ գործողության բաղադրիչի համար: Իրականացնող մարմինը բնապահպանության ոլորտի իրավասու մարմնից ձեռք է բերում հաստատում կամ Բանկի համար ընդունելի համարժեք գնահատում, որ նախաձեռնությունը զգալի բացասական ազդեցություն չի թողնում բնապահպանական նշանակության տարածքի վրա: - ԵՆԲ-ի բնապահպանական քաղաքականությունների եւ ուղեցույցների համաձայն ՎԳԾ (Վերաբնակեցման գործողությունների ծրագիր) պահանջող գործողության բաղադրիչների համար Իրականացնող մարմինը Բանկ է ներկայացնում ՎԳԾ-ի օրինակը (նախընտրելի է էլեկտրոնային ձեւաչափով) կամ կայքի հղումը, որտեղ առնվազն 3 տարվա ընթացքում հրապարակվել է ծրագիրը: ԵՆԲ-ի բնապահպանական քաղաքականությունների եւ ուղեցույցների եւ ՇՆՇ-ի համաձայն Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիր պահանջող գործողության բաղադրիչի համար Իրականացնող մարմինը Բանկ է ներկայացնում ՇՆՇ-ի օրինակը (նախընտրելի է էլեկտրոնային ձեւաչափով) կամ կայքի հղումը, որտեղ առնվազն 3 տարվա ընթացքում հրապարակվել է ծրագիրը:	
Գնումների պլան	Յուրաքանչյուր տրամադրման հայտի դեպքում եւ մինչեւ համապատասխան նախաձեռնության համար հատկացումը/տրամադրումը

3. Տեղեկություններ նախաձեռնության իրականացման վերաբերյալ

Նախաձեռնության իրականացման ընթացքում Վարկառուն նախաձեռնության իրականացման ընթացքի վերաբերյալ հետեւյալ տեղեկությունները Բանկ է ներկայացնում ամենաուշը մինչեւ ստորեւ նշված վերջնաժամկետի ավարտը:

Փաստաթուղթ/ տեղեկություններ	Վերջնաժամկետ	Հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը
Գործողության իրականացման վերաբերյալ միջանկյալ հաշվետվություն՝ - Դիմակայունության ապահովման ուղղությամբ ստանձնած հանձնառությունների կատարման հիմնական փուլերի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ. - Յուրաքանչյուր նախաձեռնության իրականացման ֆինանսական եւ ֆիզիկական ընթացքն արտացոլող թարմացված տրամադրման աղյուսակ. - Նախաձեռնության ծախսերի վերաբերյալ տեղեկություններ՝ պարզաբանելով բյուջեում նշված սկզբնական ծախսերից հնարավոր տարբերությունները. - Նախաձեռնության հիմնական բաղադրիչներից յուրաքանչյուրի ավարտի ամսաթվի մասին տեղեկություններ՝ պարզաբանելով հնարավոր ուշացումների պատճառները. - Նախաձեռնության ծախսերի վերաբերյալ տեղեկություններ՝ պարզաբանելով բյուջեում նշված սկզբնական ծախսերից հնարավոր տարբերությունները. - Յանկացած լուրջ խնդրի նկարագրություն, որն ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա. - Գնումների պլանի թարմացում. - Գործողության մասով պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ, ներառյալ՝ ամփոփ աղյուսակը եւ իրականացման վերաբերյալ համապարփակ հաշվետվությունը. - Նախաձեռնության սոցիալական կառավարման ծրագրի, Վերաբնակեցման գործողությունների ծրագրի եւ Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրի իրականացման մասին տեղեկություններ. - Տեղեկություններ գենդերային գործողությունների ծրագրի (ԳԳԾ) իրականացման, այդ թվում՝ ԳԳԾ-ի ցուցանիշների եւ նպատակների վերաբերյալ. - Յանկացած լուրջ խնդիր, որը տեղի է ունեցել, եւ ցանկացած էական ռիսկ, որը կարող է	Առաջին ԳՄՀ-ն պետք է ներկայացվի մինչեւ 2025 թվականի դեկտեմբերի 31-ը	Տարին երկու անգամ (յուրաքանչյուր ամիսը մեկ) 6

Փաստաթուղթ/ տեղեկություններ	Վերջնաժամկետ	Հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը
ազդել նախաձեռնության գործողության վրա. - Նախաձեռնության վերաբերյալ ցանկացած դատական գործընթաց, որը կարող է ընթացքի մեջ լինել. Առկայության դեպքում նախաձեռնության հետ կապված լուսանկարներ, որոնք չունեն գաղտնի բնույթ:		

4. Տեղեկություններ աշխատանքների ավարտի եւ գործողության իրականացման առաջին տարվա վերաբերյալ

Վարկառուն նախաձեռնության ավարտի եւ սկզբնական գործողության վերաբերյալ հետեւյալ տեղեկությունները Բանկ է ներկայացնում մինչեւ ամենաուշը ստորեւ նշված վերջնաժամկետի ավարտը:

Փաստաթուղթ/ տեղեկություններ	Բանկ ներկայացնելու ամսաթիվը
Գործողության ավարտի մասին հաշվետվություն, ներառյալ՝ - Ավարտված նախաձեռնության վերջնական Տեխնիկական նկարագրությունը՝ պարզաբանելով Ա.1 բաժնում ներկայացված Տեխնիկական նկարագրության համեմատությամբ տեղի ունեցած զգալի փոփոխությունների պատճառները. - Հիմնական նախաձեռնության յուրաքանչյուր բաղադրիչի ավարտման ամսաթիվը՝ պարզաբանելով հնարավոր ձգձգման պատճառները. - Նախաձեռնության վերջնական արժեքը՝ պարզաբանելով բյուջեում նշված սկզբնական արժեքից հնարավոր տարբերությունները. - Զբաղվածության վրա նախաձեռնության ազդեցությունը. իրականացման ընթացքում պահանջվող մարդ/օր հաշվարկը, ինչպես նաեւ ստեղծված նոր մշտական աշխատատեղերը՝ տարբերակված ըստ սեռի. - Տեղեկություններ գենդերային գործողությունների ծրագրի (ԳԳԾ) իրականացման, այդ թվում՝ ԳԳԾ-ի ցուցանիշների եւ նպատակների, ինչպես նաեւ գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ ստացված արդյունքների վերաբերյալ. - Ցանկացած լուրջ խնդրի նկարագրություն, որը թողել է բնապահպանական կամ սոցիալական ազդեցություն, այդ թվում՝ ԵՆԲ-ի աշխատանքային ստանդարտի հետ կապված պահանջների կատարումը. - Գնումների ընթացակարգերի մասին տեղեկություններ եւ գնումների	Գործողության ավարտից 15 ամիս հետո

պլանից շեղումների պարզաբանում.

- Նախաձեռնության պահանջարկի կամ կիրառելիության մասին տեղեկություններ, ինչպես նաև մեկնաբանություններ.
- Ցանկացած լուրջ խնդիր, որը տեղի է ունեցել, եւ ցանկացած էական ռիսկ, որը կարող է ազդել նախաձեռնության գործողության վրա.
- Նախաձեռնության վերաբերյալ ցանկացած դատական գործընթաց, որը կարող է ընթացքի մեջ լինել.
- Առկայության դեպքում նախաձեռնության հետ կապված լուսանկարներ, որոնք չունեն գաղտնի բնույթ.
- Նախաձեռնության ցուցանիշների իրական արժեքների թարմացում՝ Բանկի արդյունքների չափման (ԱԶ) աղյուսակում ներառելու համար:
- Հետեւյալ Մոնիթորինգային ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ՝

Ելքային ցուցանիշներ՝

Ջրամատակարարում	Միավորներ
Ջրամատակարարման ցանցին կատարված ներդրումները	Միավորներ
Ջրամատակարարման ցանցին վերականգնված ներդրումները	Միավորներ
Վերականգնված ջրամատակարարման ցանցի երկարությունը	կմ
Անվտանգ խմելու ջուր օգտագործող անձինք	Շահառուներ, անձինք
Հանրային շենքեր	Միավորներ
Կառուցապարման մակերես	մ²
Ուսանողների քանակը	անձ
Կառուցված նոր օբյեկտների քանակը	անձ
Վերականգնված օբյեկտների քանակը	անձ
Բարելավված առողջապահական ծառայություններից օգտվող բնակչություն	անձ

Եթե այս նախաձեռնությունն իրականացվում է ԵՄ երաշխավորությամբ, ապա Բանկը «պահանջում է, որ նախաձեռնությունն իրականացնող մարմինը, ի թիվս այլնի, ներդրումային նախաձեռնության տնտեսական, զարգացման, սոցիալական, շրջակա միջավայրի եւ մարդու իրավունքների վրա ազդեցության համալիր մոնիթորինգ իրականացնի նախաձեռնության իրականացման ընթացքում՝ ընդհուպ մինչեւ դրա ավարտը: ԵՆԲ-ն կանոնավոր ստուգում է գործողությունն իրականացնող մարմնի ներկայացրած տեղեկությունները եւ հրապարակում է դրանք գործողությունն իրականացնող մարմնի համաձայնությամբ: ԵՆԲ-ի ֆինանսավորման գործողություններին առնչվող նախաձեռնության ավարտի մասին հաշվետվությունները հնարավորության դեպքում հրապարակվում են առանց գաղտնի տեղեկությունների»:

Համապատասխանաբար եւ չխախտելով Բանկի՝ Օրիուսի [կոնվենցիայի/կանոնակարգի] համաձայն նախաձեռնությանն առնչվող բնապահպանական տեղեկությունների հրապարակման պարտավորությունը՝ Բանկը Վարկառուի կողմից տրամադրված բոլոր տեղեկությունները հրապարակում է Նախաձեռնության իրականացման ընթացքի մասին հաշվետվություններում եւ Նախաձեռնության ավարտման մասին հաշվետվություններում՝ պայմանով, որ այդ տեղեկությունները Վարկառուն հստակ նշել է որպես «ԵՆԲ-ի կայքում հրապարակման ենթակա»:

Միեւնույն ժամանակ Վարկառուն կարող է նաեւ որոշել այդ տեղեկությունները հրապարակել իր կայքում եւ Բանկին տրամադրել համապատասխան հղումը (URL), որն էլ կօգտագործվի որպես ԵՆԲ-ի հրապարակման աղբյուր:

ԵՆԲ-ն պատասխանատվություն չի կրում իր կայքում հրապարակված այդ տեղեկությունների բովանդակության համար: «ԵՆԲ-ի կայքում հրապարակման ենթակա» նշագրով փաստաթղթերը հրապարակվում են ստացվելուն պես եւ չեն խմբագրվում ԵՆԲ-ի կողմից: ԵՆԲ-ն հրապարակում է միայն այն գործող URL-

ները, որոնք հղում են կատարում նախաձեռնությանն առնչվող համապատասխան տեղեկություններին:

5. Նախաձեռնության ավարտի մասին հաշվետվությունից 3 տարի հետո պահանջվող տեղեկությունները:

Վարկառուն հետեւյալ տեղեկությունները Բանկ է ներկայացնում նախաձեռնության ավարտից 3 տարի հետո՝ մինչեւ ամենաուշը ստորեւ նշված վերջնաժամկետի ավարտը:

Փաստաթուղթ/ տեղեկություններ	Բանկ ներկայացնելու ամսաթիվը
Ավելի քան 3 տարի հետո ներկայացման ենթակա հաշվետվություն՝ ներառելով հետեւյալը. <i>Նախաձեռնության ցուցանիշների իրական արժեքների թարմացում՝ Բանկի արդյունքների չափման (ԱԶ) աղյուսակում ներառելու համար</i>	Նախաձեռնության ավարտի մասին հաշվետվության ներկայացումից 3 տարի հետո

Հաշվետվությունների լեզուն՝ Անգլերեն

Հավելված Բ

ԵՎՐԻԲՈՐ

«ԵՎՐԻԲՈՐ» նշանակում է՝

ա) մեկ ամսից պակաս համապատասխան ժամանակահատվածի դեպքում՝ Սահմանված դրույքաչափը (ինչպես սահմանված է ստորել)՝ մեկամսյա ժամկետով,

բ) մեկ ամիս կամ ավելի համապատասխան ժամանակահատվածի դեպքում, որի համար հասանելի է Սահմանված տոկոսադրույքը՝ գործող Սահմանված դրույքաչափը՝ ամիսների համապատասխան թիվը կազմող ժամկետով, եւ

գ) մեկ ամիսը գերազանցող համապատասխան ժամանակահատվածի դեպքում, որի համար հասանելի չէ Սահմանված դրույքաչափը՝ գծային միջարկման արդյունքում ստացված դրույքաչափը՝ հաշվի առնելով երկու Սահմանված դրույքաչափերը, որոնցից մեկը գործում է համապատասխան ժամանակահատվածին հաջորդող ավելի կարճ ժամկետով, իսկ մյուսը՝ ավելի երկար ժամկետով,

(այն ժամանակահատվածը, որի համար հաշվարկվում է դրույքաչափը, կամ որից միջարկվում են դրույքաչափերը, կոչվում է **«Դիտարկվող ժամանակահատված»**):

Վերելում «ա»-«գ» պարբերությունների նպատակներով՝

ի) **«հասանելի»** նշանակում է տվյալ մարման ժամկետների համար դրույքաչափերը, որոնք հաշվարկվում եւ հրապարակվում են «Global Rate Set Systems Ltd»-ի (GRSS) կողմից կամ Դրամային շուկաների եվրոպական ինստիտուտի (ԴՇԵԻ) կողմից ընտրված այլ ծառայություն մատուցողի կամ ԴՇԵԻ-ի այդ գործառույթի որեւէ իրավահաջորդի կողմից, ինչպես սահմանում է Բանկը, եւ

ii) «Սահմանված դրույքաչափ» նշանակում է եվրոյով ավանդների տոկոսադրույքի դրույքաչափը համապատասխան ժամանակահատվածի համար, որը հրապարակվում է Բրյուսելի ժամանակով ժամը 11:00-ին կամ Բանկի համար ընդունելի ավելի ուշ ժամի՝ այն օրվա դրությամբ (**Վերսկսման ամսաթիվ**), որը 2 (երկու) Համապատասխան Աշխատանքային օրով առաջ է համապատասխան ժամանակահատվածի առաջին օրվանից, Ռոյթերզի «ԵՎՐԻԲՈՐ 01» էջում կամ դրա իրավահաջորդ էջում կամ այս միջոցներով չհրապարակվելու դեպքում՝ Բանկի կողմից այդ նպատակով ընտրված հրապարակման որեւէ այլ միջոցով:

Եթե այդ եղանակով չի հրապարակվում այդ Սահմանված դրույքաչափը, ապա Բանկը կարող է պահանջել Բանկի կողմից ընտրված՝ եվրագոտու չորս խոշոր բանկերի գլխամասային գրասենյակներին ներկայացնել այն դրույքաչափը, որով նրանցից յուրաքանչյուրը Վերսկսման ամսաթվի դրությամբ՝ Բրյուսելի ժամանակով ժամը մոտ 11:00-ին, համեմատական գումարի չափով եվրոյով ավանդներ է առաջարկում եվրագոտու միջբանկային շուկայի առաջնակարգ բանկերին՝ Դիտարկվող ժամանակահատվածին հավասարազոր ժամանակահատվածի համար: Եթե ներկայացվում է առնվազն 2 (երկու) առաջարկ, ապա Վերսկսման ամսաթվի դրությամբ դրույքաչափը կկազմի առաջարկների թվաքանական միջինը: Եթե պահանջի հիման վրա բավարար առաջարկ չի ներկայացվել, ապա այդ Վերսկսման ամսաթվի համար դրույքաչափը կկազմի Բանկի կողմից ընտրված՝ եվրագոտու խոշորագույն բանկերի առաջարկած՝ Վերսկսման ամսաթվից 2 (երկու) Համապատասխան Աշխատանքային օր առաջ ընկած օրվա դրությամբ, Բրյուսելի ժամանակով ժամը մոտ 11:00-ի դրությամբ այն դրույքաչափերի թվաքանական միջինը, որոնք համեմատելի գումարի չափով եվրոյով վարկերի համար առաջարկվում են եվրոպական առաջատար բանկերին՝ Դիտարկվող ժամանակահատվածին հավասարազոր ժամանակահատվածի համար: Բանկն անհապաղ տեղեկացնում է Վարկառուին Բանկի կողմից ստացված առաջարկների մասին:

Սույն հավելվածում նշված ցանկացած հաշվարկի արդյունքում ստացված բոլոր տոկոսները կլորացվում են անհրաժեշտության դեպքում մինչև տոկոսային կետի ամենամոտ հազարերորդականը՝ կեսերը կլորացնելով դեպի վեր:

Եթե վերոնշյալ որեւէ դրույթ հակասում է ԴՇԵԻ-ի (կամ Բանկի կողմից սահմանված՝ ԴՇԵԻ-ի այդ գործառույթի որեւէ իրավահաջորդի) հովանու ներքո ընդունված դրույթներին ԵՎՐԻԲՈՐ-ի մասով, ապա Բանկը կարող է Վարկառուին ծանուցելու միջոցով փոփոխել դրույթը՝ այդ մյուս դրույթներին համապատասխանեցնելու համար:

Եթե Սահմանված դրույքաչափը մշտապես անհասանելի է դառնում, ապա ԵՎՐԻԲՈՐ-ի փոխհատուցման դրույքաչափը կլինի այն դրույքաչափը (այդ թվում՝ ցանկացած սպրեդ, կամ համապատասխանեցում), որը պաշտոնապես առաջարկվել է՝ i) Եվրոյի ռիսկերից զերծ դրույքաչափերի հարցերով աշխատանքային խմբի կողմից, որը ստեղծվում է Եվրոպական կենտրոնական բանկի (ԵԿԲ) կողմից, Ֆինանսական ծառայությունների եւ շուկաների ծառայության (ՖԾՇԾ), Արժեթղթերի եւ ֆինանսական շուկաների եվրոպական ծառայության (ԱՖՇԵԾ) եւ Եվրոպական հանձնաժողովի կողմից, կամ ii) Դրամային շուկաների եվրոպական ինստիտուտի կողմից՝ որպես ԵՎՐԻԲՈՐ-ի կառավարիչ, կամ iii) Դրամային շուկաների եվրոպական ինստիտուտի վերահսկողության վերաբերյալ 2016/1011 կանոնակարգի (ԵՄ) համաձայն պատասխանատու իրավասու մարմնի կողմից՝ որպես ԵՎՐԻԲՈՐ-ի կառավարիչ, կամ iv) 2016/1011 կանոնակարգի (ԵՄ) համաձայն նշանակված իրավասու ազգային մարմինների կողմից, կամ v) Եվրոպական կենտրոնական բանկի կողմից:

Եթե Սահմանված դրույքաչափը մշտապես անհասանելի է դառնում կամ վերոնշյալ եղանակով ԵՎՐԻԲՈՐ-ի փոխհատուցման որեւէ դրույքաչափ պաշտոնապես չի առաջարկվում, ապա ԵՎՐԻԲՈՐ է համարվում այն դրույքաչափը (արտահայտվում է տարեկան տոկոսադրույքի դրույքաչափով), որը Բանկի կողմից սահմանվում է որպես համապատասխան տրանշը

Ֆինանսավորելու համար Բանկի կատարած ընդհանուր ծախս՝ հիմք ընդունելով այդ պահին գործող, ներքին կարգով ձեւավորված՝ Բանկի բազային դրույքաչափը կամ Բանկի կողմից ողջամտորեն սահմանված՝ դրույքաչափի որոշման այլընտրանքային մեթոդը:

Հատկացման առաջարկի/Ընդունման ձեւանմուշը

(Հոդվածներ 1.2.Բ եւ 1.2.Գ)

Հատկացման առաջարկ/Ընդունում

Վավեր է մինչեւ՝ [ամսաթիվ]-ին ԵԿԺ-ով ժամը [Ժամ]

...-ից՝ Եվրոպական ներդրումային բանկ

Ում՝ [Վարկառու]

Ամսաթիվ՝

Թեմա՝ Եվրոպական ներդրումային բանկի եւ Վարկառուի միջեւ
Ֆինանսական պայմանագրի հատկացման առաջարկի/ընդունման
ամսաթիվը [●] (Ֆինանսական պայմանագիր)

Պայմանագրի համարը՝

Գործողության համարը՝ 2022-0193

(FI թիվ) 94488

Հարգելի՛ պարոնայք,

Մենք հղում ենք կատարում Ֆինանսական պայմանագրին: Ֆինանսական պայմանագրում սահմանված եզրույթներն ունեն նույն նշանակությունը, ինչ սույն նամակում:

Ելնելով Բանկի կողմից Հատկացման առաջարկի Ձեր խնդրանքից [եւ [ամսաթիվ]-ին տեղի ունեցած իրական ժամանակում գնի սահմանման վերաբերյալ հեռախոսազրույցից], Ֆինանսական պայմանագրի դրույթների համաձայն՝ մենք սույնով առաջարկում ենք Ձեզ հասանելի դարձնել հետեւյալ Տրանշը.

ԸՆԴՀԱՆՈՒՐ

Հատկացման նախատեսված ամսաթիվը.

Տրանշի արժույթը.

Տրանշի չափը.

ՀԻՄՆԱԿԱՆ

Մարման պարբերականությունը.

Մայր գումարի մարման պայմանները.

Առաջին մարման ամսաթիվը.

Վերջին մարման ամսաթիվը.

Մարման ամսաթվերը.

ՏՈԿՈՍՆԵՐԸ

Տոկոսների վճարման պարբերականությունը.

Տոկոսների առաջին վճարման ամսաթիվը.

Վճարման ամսաթվերը.

Տոկոսների վերանայման/փոխարկման ամսաթիվը.

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ³.

ԿԻՐԱՌԵԼԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓ

Տոկոսադրույքի բազան

Դրույքաչափը կիրառելի է մինչեւ՝

Ֆիքսված դրույքաչափ.

Սպրեդ.

ԵՎՐԻԲՈՐ

Սույնով Վարկառուի կողմից եւ անունից ընդունում ենք վերոնշյալ Հատկացման առաջարկը.

Վարկառուի Լիազորված ստորագրողի (Ստորագրողների) անունը (անունները) (ինչպես սահմանված է Ֆինանսական պայմանագրում)՝

.....

Վարկառուի Լիազորված ստորագրողի (Ստորագրողների) ստորագրությունը (ստորագրությունները) (ինչպես սահմանված է Ֆինանսական պայմանագրում)՝

Ամսաթիվ՝

Խնդրում ենք ստորագրված Հատկացման ընդունումը վերադարձնել հետեւյալ էլեկտրոնային հասցեով՝ []:

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՀԱՄԱՐ.

ՎԵՐԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՎ՝ ԴՈՒՔ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՔ, ՈՐ ԲԱՆԿԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ՝ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԹԱՐՄԱՑՎԵԼ Է ՆԱԽՔԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐՈՆՇՅԱԼ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԸ:

ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՍՈՒՅՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԵՋ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՈՐԵՎԷ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԿԱՄ ՀԱՇԻՎ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՉԷ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ՝ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐՁԻՆ ՑԱՆԿՈՒՄ (ՈՐՊԵՍ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԱՇԻՎ), ՎԵՐՈՆՇՅԱԼ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ՉՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ:

Հատկացման հաշիվը , որին պետք է մուտքագրում կատարվի

Հատկացման հաշիվ թիվ՝

Հատկացման հաշվետեր/շահառու՝

(խնդրում ենք տրամադրել IBAN ձեւաչափով, եթե երկիրն ընդգրկված է SWIFT-ի կողմից հրապարակվող IBAN-ի գրանցամատյանում, հակառակ դեպքում պետք է տրամադրվի բանկային գործելակերպին համապատասխան պատշաճ ձեւաչափով)

Բանկի անվանումը եւ հասցեն՝

Բանկի նույնականացման կոդ (BIC)

Վճարման ռեկվիզիտները, որոնք պետք է տրամադրվեն՝

Տոկոսի դրույքաչափի վերանայումը եւ փոխարկումը

Եթե Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթիվը ներառված է Տրանշի Հատկացման առաջարկում, ապա կիրառվում են հետեւյալ դրույթները:

Ա. Տոկոսի վերանայման/փոխարկման մեխանիզմը

Տոկոսի վերանայման/փոխարկման մասին դիմում ստանալով՝ Բանկը Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվից 60 (վաթսուն) օր առաջ սկսվող եւ 30 (երեսուն) օր առաջ ավարտվող ժամկետում Վարկառուին է հանձնում Տոկոսի վերանայման/փոխարկման առաջարկ՝ նշելով՝

ա) Ֆիքսված դրույքաչափը եւ (կամ) Սպրեդը, որը կկիրառվի Տրանշի կամ Տոկոսի վերանայման/փոխարկման մասին դիմումի մեջ նշված դրա մասի նկատմամբ՝ 3.1 հոդվածի համաձայն. եւ

բ) որ այդ դրույքը կիրառվում է մինչեւ Մարման ամսաթիվը կամ մինչեւ նոր Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթիվը, եթե առկա է, եւ որ տոկոսը ենթակա է վճարման եռամսյակային կամ կիսամյակային կտրվածքով՝ 3.1 հոդվածին համապատասխան, ապառքով, սահմանված Վճարման ամսաթվերին:

Վարկառուն Տոկոսի վերանայման/փոխարկման առաջարկը կարող է գրավոր ընդունել մինչեւ դրանում նշված վերջնաժամկետը: Բանկի հայեցողությամբ Տոկոսի վերանայման/փոխարկման առաջարկը կարող է իրականացվել իրական ժամանակում գնի սահմանման գործընթացի շրջանակներում՝ 1.2.Բ եւ 1.2.Գ հոդվածներին համապատասխան:

Սույն Պայմանագրի ցանկացած փոփոխություն, որը պահանջվել է Բանկի կողմից այս առնչությամբ, գործողության մեջ է դրվում համաձայնագրով, որը կնքվում է եւ ուժի մեջ է մտնում հետեւյալից 1 (մեկ) աշխատանքային օր առաջ՝ i) Բանկի կողմից Տոկոսի վերանայման/փոխարկման ուղարկում, կամ ii) վերոնշյալ

պարբերության համաձայն իրական ժամանակում գնի սահմանման վերաբերյալ հեռախոսազրույցի անցկացում:

Ֆիքսված դրույքաչափերը եւ Սպրեդները հասանելի են ոչ պակաս, քան 4 (չորս) տարի ժամկետով կամ այդ ժամկետի ընթացքում մայր գումարի հետվճարման բացակայության դեպքում՝ ոչ պակաս, քան 3 (երեք) տարի ժամկետով:

Բ. Տոկոսի վերանայման/փոխարկման հետեւանքները

Եթե Վարկառուն պատշաճ կերպով գրավոր ընդունում է Տոկոսի վերանայման/փոխարկման առաջարկի մասով Ֆիքսված դրույքաչափը կամ Սպրեդը, ապա Վարկառուն Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվին եւ դրանից հետո սահմանված Վճարման ամսաթվերին վճարում է հաշվեգրված տոկոս:

Մինչեւ Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթիվն ամբողջ Տրանշի նկատմամբ կիրառվում են սույն Պայմանագրի եւ Հատկացման առաջարկի ու Հատկացման ընդունման համապատասխան դրույթները: Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվից սկսած եւ այն ներառյալ՝ Տոկոսի վերանայման/փոխարկման առաջարկում պարունակվող՝ նոր Ֆիքսված դրույքաչափին կամ Սպրեդին վերաբերող դրույթները կիրառվում են Տրանշի (կամ դրա մի մասի, ինչպես նշված է Տոկոսի վերանայման/փոխարկման մասին դիմումի մեջ) նկատմամբ մինչեւ նոր Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթիվը, եթե առկա է, կամ մինչեւ Մարման ամսաթիվը:

Գ. Տոկոսի մասնակի վերանայումը/փոխարկումը կամ դրա բացառումը

Տոկոսի մասնակի վերանայման/փոխարկման դեպքում Վարկառուն Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվին առանց փոխհատուցման հետ կվճարի Տրանշի այն մասը, որի վրա Տոկոսի վերանայման/փոխարկման մասին դիմումը չի տարածվում, եւ որը հետեւաբար ենթակա է Տոկոսի վերանայման/փոխարկման:

Եթե Վարկառուն չի ներկայացնում Տոկոսի վերանայման/փոխակերպման մասին դիմում կամ գրավոր չի ընդունում Տոկոսի վերանայման/փոխակերպման առաջարկը Տրանշի համար, կամ եթե Կողմերը Բանկի կողմից վերոնշյալ «Ա» պարբերության համաձայն պահանջված փոփոխությունը գործողության մեջ չեն դնում, ապա Վարկառուն առանց փոխհատուցման Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվին Տրանշն ամբողջությամբ հետ է վճարում:

Վարկառուի կողմից տրամադրվելիք հավաստագրերը

Վարկառուի կողմից ներկայացվող հավաստագրի ձևը (Հոդված 1.4.Դ)

...ից՝	Հայաստանի Հանրապետություն
Ում՝	Եվրոպական ներդրումային բանկին
Ամսաթիվ՝	
Թեմա՝	2025 թվականի [●]-ով թվագրված ֆինանսական պայմանագիր Եվրոպական ներդրումային բանկի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ (Ֆինանսական պայմանագիր)
	Պայմանագրի համարը՝ 94488 Գործողության համարը՝ 2022-0193

Հարգելի՛ պարոնայք,

Ֆինանսական պայմանագրում սահմանված եզրույթները սույն գրության մեջ
օգտագործվելիս ունեն նույն նշանակությունները:

Ֆինանսական պայմանագրի 1.4 հոդվածի նպատակներով սույնով Ձեզ ենք
հավաստում հետեւյալը.

ա) Նախագծի որեւէ հայեցակետի կամ այնպիսի հայեցակետի էական
փոփոխություն տեղի չի ունեցել, որի մասով մենք պարտավոր ենք 8.1 հոդվածի
համաձայն զեկուցել՝ բացառությամբ նախկինում մեր կողմից հաղորդվածների.

բ) մենք ունենք հասանելի բավարար միջոցներ՝ ժամանակին Նախագծի
ավարտը եւ իրականացումը Ա.1 հավելվածին համապատասխան ապահովելու
համար.

գ) տեղի չի ունեցել որեւէ դեպք կամ հանգամանք, որը ժամանակի
ընթացքում կամ Ֆինանսական պայմանագրով նախատեսված ծանուցման կամ
որեւէ որոշման կայացման դեպքում (կամ վերոշարադրյալ դեպքերի որեւէ
համակցությամբ) Կանխավճարի դեպք կամ Պարտավորությունների չկատարման

դեպք է հանդիսանում կամ կհանդիսանար, եւ դրա մասով միջոցներ չեն ձեռնարկվել, կամ այն չի դադարեցվել.

դ) որեւէ նյութական դատավարություն, արբիտրաժային, վարչական վարույթ կամ քննություն չի նախաձեռնվել, կամ որքանով որ տեղեկացված ենք, չի սպառնում, որ կնախաձեռնվի, կամ ընթացքում չի գտնվում դատարանում, արբիտրաժային մարմնում կամ գերատեսչությունում, որը հանգեցրել է, կամ եթե բացասական որոշում կայացվի, ապա ողջամտորեն հավանական է, որ կհանգեցնի էական բացասական փոփոխության, ոչ էլ առկա է որեւէ գործող չբավարարված վճիռ կամ որոշում մեր կամ մեր դուստր ընկերություններից որեւէ մեկի դեմ.

ե) 6.11 հոդվածի համաձայն մեր կողմից արվելիք կամ կրկնվող հավաստիացումները եւ երաշխիքները ճիշտ են բոլոր առումներով.

զ) էական բացասական փոփոխություն տեղի չի ունեցել՝ համեմատած Ֆինանսական պայմանագիրը կնքվելու ամսաթվին առկա իրավիճակի հետ. եւ

է) Վարկառուի կողմից Բանկին տրամադրված՝ Լիազորված ստորագրողների եւ հաշիվների վերջին ցանկը թարմացված է, եւ Բանկը կարող է հիմնվել դրանում ներկայացված տեղեկությունների վրա:

Մենք պարտավորվում ենք Բանկին անհապաղ ծանուցել, եթե վերոնշյալներից որեւէ մեկն առաջարկվող Տրանշի Հատկացման ամսաթվի դրությամբ դադարի ճիշտ եւ ճշգրիտ լինել:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության կողմից եւ անունից՝

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան - Դիմակայուն Սյունիք ծրագիր» ԿԶԵՀ+Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**

